# ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

## ԸՆԴԱՐՁԱԿ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ

# ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ՆՈՐԻՆ

## ՊԱՏՃԱՌ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

*Ի լոյս ընծայեց*

**ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՄԱՏՈՒՆԻ**

*Միաբան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի*

*Արտատպութիւն «Արարատ»-ից թ. 1915-17.*

*Ս. ԷՋՄԻԱԾԻՆ*

Էլեկտրատպարան Մայր Աթոռոյ

1917

281.6
Ս-93

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

## ԸՆԴԱՐՁԱԿ

## ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

«Ստեփաննոս Սիւնեաց․ Արար գիրս մեկնութեան ի վերայ ժամերգութեանց»․ Ղազար կԹ. Ջահկեցի. Դրախտ Ցանկալի եր. 625, Ժամերգութեանց ընդարձակ Մեկնութիւնս գտնւում է այս Ձեռագրերի մէջ.

Ա օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 1454 Մեկնութիւն եկեղեցական ժամերգութեան. Թղ 1ա,

Բ օրինակ. Էջմիածնի ձեռագիր. ԺԲ-րդ դարու. Համար 1695 Պատմութիւն Եղիշէի. Թղ 130ա. ունի այս Խորագիրը, «Յառաջաբանութիւն պատմութեանց, եթէ ո՛րպէս կարգեալ է ազգաց մերոց ծայցուածք. զոր ասացեալ է Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» Արտագրողի յաւելուած համարելով, «Զոր ասացեալ է Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքերը, Թողինք միայն իր հին Խորագիրը. այն է, «Յառաջաբանութիւն պատմութեանց» և այլն.

Գ օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 912 Ճառընտիր անգման երկաթագիր. Թղ 372ա,

Սիւնեցու այս Ընդարձակ Ժամակարգութեան Մեկնութիւնը բաղկացած է հինգ ժամերի Նախադրութիւնից, Յառաջաբանից, և 11 Գլուխներից, որոնցից և կազմել է իր Համառօտ Ժամակարգութեան Մեկնութիւնը. կամ գուցէ Համառօտը Ընդարձակից առաջ է գրել. Թէ Յառաջաբանը և թէ Ա Բ Գ Ե Զ Ը Թ գլուխները, թէ իրենց նիւթերի դասաւորութեամբ ու բացատրութեամբ, թէ Սուրբ Գրքից առած նմանօրինակ վկայութիւնների նմանութեամբ, և թէ համանման բառ ու բանի գործածութեամբ բոլորովին նման են Յոհան Իմաստասէր Օձնեցի Հայրապետի՝ «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գրուածքին, ինչպէս կտեսնէ ընթերցողը իրենց տեղերում. այնպէս որ, Երկսի մէջ յիշեալ Յառաջաբանն ու յիշեալ Գլուխները կարդալով մէկը, անշուշտ պիտի ցանկանայ իմանալ, թէ արդեօք Է և Ը-րդ դարերում ծաղկած այս երկու նշանաւոր և եկեղեցու ախոյեան սուրբ հայրերից ո՞րն է առաջ գրել իր Երկը, Օձնեցի՞ն է առաջ գրել

իւր Երկը, որին և հետևել է Սիւնեցին, թէ Սիւնեցին է առաջ գրել, որին և հետևել է Օձնեցին։ Այո, այնչափ նման են իրար՝ Ժամակարգութեան Մեկնութեան այս երկու հոգեշունչ Երկերս, որոնք սկսած Դ-րդ դարից մինչև Ը-րդ դար ընծայում են մեզ կարգաւ Հայոց եկեղեցւոյ ժամակարգութեան ստոյգ պատկերը, Օձնեցին՝ կրկնութեամբ, մի քանի երկու տեղ, երեք տեղ, չորս տեղ գրելով, իսկ Սիւնեցին՝ միաշար, ամփոփ, առանց կրկնութեան։

Սիւնեցու այս Երկի մէջ բոլորովին ինքնուրոյն գրուածք է Դ գլուխը, որը նուիրել է հոգեկրօն եպիսկոպոս Սուրբ Աստուածին և Սուրբ Աստուածը այժմեան ձևով յառաջ բերելով, յարձակւում է այն հաւատուրաց չարափառների դէմ, որոնք ժխտում են Փրկչի համար ասել միայն «խաչեցար», «Արդ՝ այս է ըստ սրբոյն յաջողակ խոստովանութի՞, Առաւաւտին ասելով խաչեցար և Երէկունն. այս է ճշմարիտ խոստովանու՞թին հաւատոյ, [և] ոչ որպէս անիծեալն սոտամիտ Լևոնին, կամ ա՞ծուրաց և մարդադաւան ժողովն Քաղկեդոնի, որ փոխանակ խաչեցար ասելոյ՝ ըստ առաքելական և մարգարէական քարոզութեանն (տես Դատաստանագիրք էջմիածնի Սինոդի. յօդուած ՌՅԺԱ. երես 216), ասացին ուր ուրեք, Սուրբ Աստուած որ մարմնով խաչեցար։

Սիւնեցին այսպէս էլ գրում է և իւր Համառօտի Դ գլխի մէջ. «Արդ՝ այս է յաջողակ սրբոցն Առաւաւտուն ասել Սուրբ Աստուած որ խաչեցար և Երեկուն, որ է ճշմարիտ խոստովանութիւն հաւատոյ. ոչ որպէս անիծեալն Նեստոր և աստուածաուրաց Քաղկեդոնի ժողովն. որ փոխանակ խաչեցար ասելոյն ըստ առաքելական և մարգարէական քարոզութեանն, ասացին, Սուրբ Աստուած որ մարմնով խաչեցար։

Ինքնուրոյն գրուածք է նոյնպէս Է գլուխը, ուր բացատրում է սուրբ Պատարագի և քահանայական զգեստների խորհրդաւոր նշանակութիւնները։

Ինքնուրոյն գրուածք է և Ժ գլուխը, ուր կանոնաւոր, կարգաւ յառաջ է բերում Երեկոյեան ժամերգութեան պաշտամունքները, մինչդեռ Յոհան Իմաստասիրի Երկի մէջ նոքա են աքան ցաքան և կրկնուած չորս տեղ. տես երես 95, 110—114, 22 և 29, Կանոն ԻԴ։

Այսպէս էլ բոլորովին ինքնուրոյն գրուածք է ԺԱ գլուխը, որով ընծայում է մեզ Հանգստեան կամ Խաղաղական ժամի պատկերը, ժամիս պաշտամունքներից յիշատակելով Ի կարդալ իմում սաղմոսը և Շնորհեա մեզ Տէր յայտնի երգը, ջերով և լռիկ մնջիկ աւարտում է իւր այս գրուածքը, ոչ յայտնապէս յիշատակելով ժամիս մէջ արձանացած միւս կենդանարար Աղօթքները, Քարոզները և Փոխերը։ Յոհան Իմաստասէր հայրապետը ժամիս պաշտամունք-

ները խուլ կերպով 3 տեղ յիշատակում է միայն Ի կարդալ իմում սաղմոսը, «Արդ չորք են ընդ ա՛մ երեկոյին աղօթից սաղմոսք առանց Հանգստեան սաղմոսին»։ Կանոն ԺԹ «Արժան է . . զհետ բերել յերեկորինան զհանգստեանն սաղմոս»։ Կանոն ԻԴ «Նոյնպէս և զերեկորինան . . . փախճան ա՛մ պաշտամանն՝ զհանգըստեանն սաղմոսն ասել, ըստ դասուց փոխաձայնու՛թ». Յոհ. Իմ. 22, 28, 29։ Եւ ըստ Օձնեցու երևի թէ Հանգստեան ժամը Երեկոյեան ժամի հետ կից է եղել, մինչդեռ Սիւնեցու Երկի մէջ գրուած է իբրև առանձին Աղօթից ժամ։

Ինչպէս երևում է Է-րդ գլխից, Սիւնեցին իւր այս Երկը գրել է մի Մեկենասի խնդրանքով, որին դառնալով այս խօսքերն է ասում, երբ կամենում է գրել անմահ Պատարագի և քահանայական զգեստների մասին, «Սկսցուք կատարելու՛թ Բարձրելոյն և գրոց առաջնորդու՛թ լուծանել զխնդրելիս բանից»։ Յոհան Իմաստասէրն էլ սոյն տեղում խուլ կերպով յիշատակում է և իւր Մեկենասին, «Աստանօր փառահանալով ի շնորհս Հոգւոյն սրբոյ, աղօթիւք ձեռովք բուռն հարցուք զբանէն գիտութեան, սուր և սուրբ տեսլեամբ. և լինիցի այս որպէս, եթէ ոչ աղօթիւք ձեռովք տայցին բան ի միտս մեր». Յոհ. Իմ. 104։ Թէ ո՞վ են այս 2 հոգեսէր և ազդեցիկ Մեկենասները, որոնք իրենց բուռն աղերսանքներով դրդել են երկու Մեծ Իմաստասէրներին թողնել ժամակարգութեան, այսինքն աստուածպաշտութեան, անդրանիկ յիշատակներ, գրելով նրանցից մինն ի Սիւնիս և միւսն ի Դուին կամ յՕձուն, այս առթիւ դժուարին է մեզ մի որոշ բան ասել։

Բառս Նախերգան և Նախերգական, Սիւնեցին յիշատակում է թէ իւր այս Ընդարձակ ժամ. Մեկնութեան Ա Նախադրութեան մէջ, «Առաջին ճառն յաղագս Նախերգան ադաւթիցն», թէ Ա գլխի Նախադրութեան մէջ, «Զի՞նչ աւրինակ իմասցուք... զմիտս Նախերգականին հնչիւք սաղմոսիւն», թէ Դ գլխի մէջ, «Հնչիւք սաղմոսիւք ի Նախերգականին, զհինգ զգայարանս նշանակէ», և թէ Համառօտի Թորագրի մէջ, «Վասն Նախերգանի ադաւթից», և Դ գլխի վերջում, «Նախերգանին. Ե. սաղմոսն զհինգ զգայարանս նշանակէ»։

Նախերգան կամ Նախերգական սաղմոսն է «Տէր զի բազումք», որին Յոհան Իմաստասէր և Թորոս Անձևացին կոչում են Առաջաբանից Սաղմոս, «Նախ զառաջաբանիցն ասել զչորեսին սաղմոսն (Տէր զի բազումք. Տէր ա՛ծ փրկութեան. Օրհնեա անձն իմ զՏէր. Տէր լուր աղօթից։ Ըստ Սիւնեցու նաև Տէր երկ զօրութեն իմ). Յոհ. Իմաստ. 1833, Վնտկ, Կանոն ԻԱ։ «Սոյնպէս և ոչ զսաղմոս առաջաբանիցն ի Կանոն յարէին, այլ Դրովք մեկնէին (ընթերցուածով էին բաժանում)». Թորոս Անձևացի. Մեկ. ժամ. 1447 թղ 15ա։

Իսկ յունարէն բառս Անփիան, որ նշանակում է ձեռքի խաչ,

Սիւնեցին յիշատակում է թէ իւր այս Ընդարձակ և թէ իւր Համառօտ Ժամակարգութեան Մեկնութեան է գլխի Նախադրութեան մէջ՝ այս յարևման խօսքերով, «Եւ անփիռն որ ի ձեռինս» ,

Սիւնեցու այս պատուական և մեր գրականութեանն անծանօթ Երկը ունի՝ է և Ը-րդ դարերի գրիչներին յատուկ հետևեալ բարդ բառերը, որոնք չունի 1837 թուին Վենետիկում տպուած Նշանաւոր Հայկազեան Բառարանը.

Ընդարձակամտութիւն. տես Նախադրութիւն. (ունի Հ Բ. միայն մի օրինակ).
Գործութիւն. տես Յառաջաբան.
Նախերգական. տես Ա և Դ գլուխ.
Գերապայծառագոյն. Բ »
Առաջնատրչութիւն Բ »
Հաւեղ—երկար. Բ գլուխ։ Ունի Հ Բ Հաւեղ Եռավանկ բառ, որի առաջին 2 վանկերը երկար են։
Վերաբարձումն Բ »
Ուժընդակ Գ »
Վերհամբարձեալ Դ »
Նախազգեստ Ե »
Խորհրդաբերում Զ »
Խաչազգեստիկ Է »
Համբարձութիւն Է »
Վիմադրել Ը »
Ճարպադանութիւն ԺԱ »
Խորխորել ԺԱ »
Ադամածնեալ ԺԱ »
Արդարահանգոյց ԺԱ »
Հրաժեշտել ԺԱ »
Վայելչաբարբառ ԺԱ »

## ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱՌՕՏ

## ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

«Վարք ծննդեան և աննդեան Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի . . . Մեկնեաց եւ զխորհուրդ Գիշերային պաշտամանն». Էջմիածնի ձեռագիր. Համար 949 Ճառընտիր. Թղ 745. «Երգեաց եւ

կցուրդս... մեկնեաց եւ զխորհուրդ փոխերայքին պատասխանին». Պատ. Ստեփ. Օրբելեան. ԼԱ գլուխ։

Համառօտ Մեկնութիւնս գտնւում է այս Ձեռագրերի մէջ.

Ա օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 912 Ճառընտիր անգաման երկաթագիր. Թղ 372ա. ունի այս խորագիրը, «Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Վաան Ճախերգանի ապարից, որ ի Մեջգիեբի կատարի»։ Արտագրողի յաւելուած համարելով «Սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքերը, թողինք միայն իւր հին խորագիրը, այն է, «Վաան Ճախերգանի ապարից» և այլն։

Բ օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 2050 Տօնապատճառ. Թղ 226բ,

Իսկ Մեկնութեանս Նախադրութիւնը գտնւում է Համար 18 Աղօթագիրք Բենիկ վարդապետի. Թղ 68բ, և ունի այս խորագիրը, «Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատճառ Աղօթիցն»։ Արտագրողի յաւելուած համարելով, «Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքերը, թողինք միայն իւր հին խորագիրը, այն է, «Պատճառ աղօթիցն», որը համապատասխանում է Սիւնեցու իւր գրած Եկեղեցւոյ Հիմնարկութեան խորագրին, «Պատճառ հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ». Էջմիածնի ձեռագիր. Համար 773 Մաշտոց, ԺԳ-րդ դարու. Թղ 15ա,

Բառս Պատճառ, Սիւնեցին գործ է ածում Յաղագս և Վասն բառերի իմաստով, որպէս և այս տեսնւում է և ուրիշ հեղինակների կողմից. «Ի համառօտի պատճառս». Թովմայ վարդապետ Արծրունի. Դ 12։ «Յանարգելութեանս պատճառ», Նարեկ. ԼԶ. և այլն։

Նախադրութիւնս բաղկացած է հինգ փոքր հատուածներից, և միաբան է Ընդարձակի հինգ ժամերի արձակ հատուածներից կազմուած Նախադրութեան հետ, թէ Աղօթից ժամերի գլխակարգութեան դասաւորութեամբ, թէ նրանց բովանդակութեամբ, և թէ նրանց մէջ գործադրած համանման բառ ու բանի նմանութեամբ, զորօրինակ.

| Ընդարձակ. | Համառօտ. |
| --- | --- |
| Առաջին ճառն .. և եթէ ամբարցեալ հնգիւք սաղմոսիւքն զհինգ զգայարանս .., և դարձեալ թէ, որպէս եւթն զօրդայլիւքն կանոնս եդեալ յաղաւթս, զեւթն աւուրց ի շաբաթու .. զաւուրսն նշանակէ. և զեւթն աւուրս եւթնհազարեան դարեան խորհուրդն։ .. Եւ | ա. Տէր եթէ զչբթունսն. ե՞. փոխեւ, զգայարանացս է թիւն, ամբաստանութիւն ի վերայ ստանայիւ Կանոնի. է՞. զօրդայքն, է՞ աւուրց շաբաթուց, և է՞ դարունս |

եթէ Օրհնութիւն երից Մանկանցն [Հարց], նշանակէ ի ձեռն յարութեանն Քրիստոսի. իսկ Մեծացուսցէն և Ողորմեացն, ազատութիւն կնոջն գլորելոյ. և եթէ, Տէր յերկնից.. զհանդերձելոց զկեանսն, որ ընդ հրեշտակս լինելոցն է նշանակէ։

Երկրորդ ճառ... թէ, որպէս ընդ Արևագալն կատարի աղաւթքն, գյարութիւն մեռելոց ցուցանէ. վասն զի ի նոյն ժամու առաւաւտուցն ստեղծեալ եղև մարդն առաջին յանարատ ձեռացն Ա՟յ. և եթէ, Նա է ճշմարիտ կեանք Ք՟ս, որ ծագելոց է աշխարհի ի միւսանգամ գալստեան իւրոյ...։

Երրորդ ճառն. եթէ, յԵրրորդ ժամու եղև մարդն առաջին Ադամ.., ի նմին ժամու Երրորդի կենարարն մեր Ք՟ս ի խաչին տարածեալ զբազուկս առ ի բժշկել զայն ձեռն, որ յԵրրորդ ժամու ի ծառն ընթացեալ, առ զպտուղն մահացու։ Եւ եթէ, յԵրրորդ ժամու եկեալ Հոգին ս՟բ ի վերնատունն յառաքեալսն ս՟բ։ Եւ եթէ, յԵրրորդ ժամու գալուստ Միածնին լինելոց է...։

Չորրորդ ճառն, յաղագս Հասարակաւրեայն կոչեալ ժամու. եթէ, զՄէջաւուրբն յանցանս կային նախաստեղծքն խաւարագգած մտաւք...։ Յաղագս որոյ ի նմին ժամու Բանն ա՟ծ երկրորդ Ադամն.. պրկեալ ի խաչին.. զմեզ ի մահուանէ փրկեաց...։

Եւ եթէ, Հինգերորդ ճառն, որ վասն Հանգստեան աղաւթիցն կարգեալ է. և

Հարցն, Ադամայ յարութեանն. և Մեծացուսցէն և Ողորմեայն, Եւայեանց ազատութիւնն. Տէր յերկնից, ի յարութեան աւուրն հրեշտականալն ընդ հրեշտակսն։

բ. Արեւագալն, վասն յարութեան ի նոյն ժամն, և ստեղծման մարդոյն, և ծագման աստուածեան լուսոյն երրակի։

գ. Մարդն Ադամ յԵրրորդ ժամու պատրի ի ծառն, և Տէրն ի սոյն ժամու խաչիւ դատապարտի։ Եւ Սուրբ Հոգին ի սոյն [ժամու] մխիթարիչ. և Գալուստն երկրորդ ի սոյն։ Ընդարձակ. գլուխ Զ. «Է՟ր արդեաւք յԵրրորդ ժամու գայ ի խաչ ելանել. թուի եթէ, ի նոյն ժամու գերեալ լինէր նախաստեղծն ի բանսարկուէն մոլեկան ընթացիւք ի ծառն մահաբեր»։

դ. Հասարակ աւուրն. տրտում տխուր խաւարագգաց մտաւք նախահայրն. վասն որոյ Տէրն առեալ զնոյն յինքն ի վերայ խաչին։

ե. Ե՟երորդ արեգական մտանելոյն և ծագմանն.

եթէ. ակն ունելով այսմ լուսոյ արեգականս, որ ծագէ և ի տեղի իւր ձգի. և եթէ, սպասել արթուն մտաւք մեծի աւուրն յետնումն ծագելոյ արեգականն արդարութեան. և եթէ, ի բաին ունի զելիցն մերոց յաշխարհէ, և զծագումն լուսոյ յարութեան մերոյ նշանակէ. և եթէ, եւթն անգամ յաւուրն աւրհնել զԱստուած...

Տեառն ծագմանն միշտ հնալոյ, զմուտ և զել մեր գուշակելով. և ընդ է՞ անգամն աղօթելն սովոր է. զի առաքելական է սահմանս այս, քան ամենայն՝ որ է՞ բաժանի. Որպէս Ադամ և Եւայ զմահու պտուղն ի սիրտս իջուցին ճաշակմամբն, նոյնպէս Բ՞ս ա՞ծն մեր ի սիրտս առաքելոցն. և այժմ և մինչ ի կատարած զկենացն զեղն յամենայնի ի սիրտս իջուցանէ, զիւրն տալով զանմահութիւն և զկեանս:

Համառօտ Մեկնութեանս Ա. Գլուխը համառօտուած է Ընդարձակի Ա Նախադրութիւնից և Ա Գլխից. Բ Գլուխը, Ընդարձակի Բ Նախադրութիւնից և Բ Գլխից. Գ Գլուխը, Ընդարձակի Գ Գըլխից. Դ Գլուխը, Ընդարձակի Դ Գլխից. Զ Գլուխը, Ընդարձակի Զ Գլխից. Է Գլուխը, Ընդարձակի Է Գլխի Նախադրութիւնից և Է Գլխից. Եւ այսպէս ինքն Սիւնեցին իւր կամքի և բաղձանաց համաձայն համառօտելով իւր Ընդարձակից Ժամակարգութեանս Մեկնութիւնը, և ամփոփելով եօթն Գլուխների մէջ, աւարտ է տալիս իւր այս գրութեան, այլ ես չխօսելով «Հասարակաւրեայն» ժամի կամ «Հասարակ աւուր» ժամի (ճաշու ժամ), Իններորդ ժամի. Երեկոյեան ժամի և Հանգստեան ժամի մասին, երեւի թէ այս ժամերը իրենց պաշտամունքներով հանդերձ իւր Ընդարձակի մէջ լիուլի բացատրած լինելու պատճառով:

## Հիմնարկութիւն եկեղեցւոյ եւ օծումն եկեղեցւոյ Ստեփաննոսի Իմաստասիրի Սիւնեաց եպիսկոպոսի.

Գտնւում է հետեւեալ Ձեռագրների մէջ.

Ա. օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 973 Մաշտոց, ԺԴ-րդ դարու, թղ 15ա, ունի այս Խորագիրը. «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատճառ Հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ». Արտա-

գրողի յաւելուած համարելով «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկո-
պոսի» խօսքերը, թողինք միայն իւր հին ձեռագիրը, այն է,
«Պատճառ Հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ», որն՝ ինչպէս տեսա-
ցինք, համապատասխանում է Սիւնեցու գրած Համառօտ ժամա-
կարգութեան մեկնութեան Նախադրութեան ձեռագրին,—«Պատ-
ճառ Այօրհնցն», ուր և յայտնել ենք Պատճառ բառի նշանակու-
թիւնը։

Բ օրինակ. Էջմիածնի ձեռագիր. Համար 912 ճառընտիր անգ-
ման երկաթագիր. Թղ 419ա. ունի այս ձեռագիրը, «Յաղագս
Հիմնարկութեան եկեղեցւոյ Մեծին Ստեփաննոսի Սիւնեաց եպիս-
կոպոսի». «Մեծին Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խօսքե-
րը ի հարկէ պէտք է համարել արտագրողի յաւելուած. Եկեղեցւոյ
Հիմնարկութեան և Օծման Կանոնը Ե-րդ դարում գրել է Յոհան
Մանդակունի Հայրապետը Դուինում. «Զհիմնարկութիւն եկեղեցւոյ
եւ զծամանար.. Յոհաննու Մանդակունեցւոյ է արարեալ, որ ե-
րեքտասաներորդ էր յետ սրբոյն Գրիգորի հայրապետ». Էջմիածնի
ձեռագիր. Համար 591 Ժողովածու. ընտիր հին բոլորագիր, ան-
թուական, առանց յիշատակարանի, Թղ 351, «Զհիմնարկէ եւ զն-
կեղեցւոյ Օրհնէ Մանդակունին է արարեալ, որ չորեքտասան
թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչև զՍա». Մայր Մաշտոց «տպա-
գրեցեալ ի Տիրահրաւէր Հայրապետութիւն.. Տեառն Դանիէլի.
1807. ի Թիւրքճի խանին, որ ի Պոլիս, ի ձեռն Դալուստ դպրի»։

Ստեփաննոս Իմաստասէրի յիշեալ «Պատճառ Հիմնարկութեան
սրբոյ եկեղեցւոյ» երկի համաձայն, և Յոհան Իմաստասէր Հայրա-
պետի «Հիմնարկէ եկեղեցւոյ» և «Օրհնութիւն Նորաշէն եկեղեցւոյ»
երկերի համաձայն, մեր եկեղեցու Հիմնարկութեան և Օծման արա-
րողութիւնները Ե-րդ և յաջորդ դարերում մինչև 1807 թուականը
կատարուել են այսպէս։

Ժողովուրդը միաբան միաձայն եկեղեցու տեղը որոշելուց
յետոյ, ապա գրաւոր կամ բանաւոր դիմում է թեմի առաջնորդ
Եպիսկոպոսին գալ եկեղեցու հիմքը քցել։

Եւ ըստ Օձնեցու Քահանայապետը՝ այսինքն առաջնորդը,
ժողովում է եկեղեցու կղերներին և պաշտօնեաներին այն տեղի
վերայ, ուր պիտի շինուի եկեղեցի, սայլերով տանելով իրենց
հետ՝ Փրկչի երկոտասան աշակերտների թուով 12 հատ մեծամեծ
անտաշ եւ անկոփ քարեր՝ հիմքերի մէջ դնելու համար. «Քարինս
երկոտասան անտաշս» (Օձնեցի). «Վէմ անտաշ եւ անկոփ եդեալ
ի հիմունս» (Սիւնեցի)։ Իսկ ի տեղի կենդանի Փրկչի՝ բեմի մէջ-
տեղում հաստատելու համար, տանում էին մի մեծագոյն երկայն
վէմ՝ իւր Սեղանով. «Վէմ կանգնեալ ի մէջ խորանին ի տեղւոջ սե-
ղանոյն, օրինակ է հոգեւոր վիմին» (Սիւնեցի), որոնք և նուիրուած

*գետնի վերայ թափելուց յետոյ, ապա սկսում էին բացօթեայ կատարել Եկեղեցու Հիմնարկութեան՝ Մանդակունու գրած այս* կարգը՝ *ըստ Օձնեցու։*

*Սաղմոս ԽԷ.* Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ *(13 տուն).*

» ՁԳ. Որպէս սիրելի են յարկք քո,
*(15 տուն. չունի Մաշտոց).*

» ՁԴ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. *(12 տուն).*

» ՁԶ. Հիմունք նորա ի լերինս սուրբ նորա *(6 տուն).*

*Սաղմոսներն աւարտելուց յետոյ, ասում է Սարկաւագը,* «Խնդրեսցուք հաւատով յաջողել զգործս ձեռաց մերոց ի հիմնոյս իւրոց կամաց». *որից յետոյ ասում է Եպիսկոպոսը երեք անգամ խորհրդաւոր,* «Տէր ողորմեա». *Ապա յօրինակ Փրկչի Բեմի կատարո-ւում—*«ի մէջ բեմին» *հաստատում կանգնեցնում են* «սիւն մի․․ յօրինակ հոգւոր վիմին»: *Իսկ երկոտասան քարերը լուանում են նախ ջրով, ապա գինով, և յօրինակ Առաքելոց և ի նշանակ նոցա քարոզութեան աշխարհի չորս կողմերում, դնում Եկեղեցու չորս անկիւններում,* «Իսկ զնեյն զհարինսն ի չորս անկիւնս եկեղեցւոյն՝ նշանակէ զնոցին ընթացս ի չորս անկիւնս աշխարհի *(Օձնեցի),* «Իսկ լուացեալ եւ ածեալ եւ եդեալ ի չորս անկիւնս» *(Սիւնեցի), հանդիսապէս ընթանալով քարերի առաջից լապտերներով և անու-շահոտ խունկեր ծխելով. որից յետոյ կարդում է Եպիսկոպոսը Դանիէլ մարգարէի հետեւեալ սրտառուչ Աղօթքը, որի ընթերցող եպիսկոպոսի համար, ասում է Օձնեցին, «զբոլոր ուխտին առեալ զաղօթս նուիրէ առաջի Աստուծոյ». այսպէս էլ գրուած է Աղօթքս, «Եւ արդ՝ լուր Տէր Ա՛ծ մեր աղօթից ծառայից քոց և խնդրուա-ծացս»: Աղօթքիս սկիզբն է,* «Տէր Աստուած մեծդ եւ ահաւորդ»:

*Աղօթքս աւարտելուց յետոյ, ապա հրամայում է Եպիսկո-պոսը արհեստաւորներին առնել Եկեղեցու հիմքերը բռնել գոր-ծերները,* «Հրամայէ առնել զգործն բերելոյն». *Իսկ ինքը Եպիսկո-պոսը, որպէս տեսլեան մէջ աշխարհի Արարչագործեան առաջնի ձեռա-կերպութիւնն ընդունող մի Եզեկիէլ, կամ որպէս սուրբ Հոփսի-մեանց կուսանաց վկայարանները հիմնարկող մի վեհագոյն Լուսա-ւորիչ, Եկեղեցու տարածութեան տեղը շուրջանակի Դաւազանի ծայրով գծելէն յետոյ,* «ծրագրէ զտեղին», *ապա Երրորդութեան անունով օծում է մեռոնով քարերը.* «օծանել զհարինսն ա՛ծայնով մեռոնաւ՝ վերակոչմամբ խորհրդական Երրորդութեանն», *որից յետոյ հանդիսականները ասում են 3 անգամ* Ամէն, «եւ երիցս ամէն ասելոյ». *ապա կարդում են բարձր ձայնով այս մի տուն սաղմո-սը,* «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, եւ զգործս ձե-ռաց մերոց յաջողեա մեզ», *որից յետոյ կարդում են հետեւեալ 12 խորհրդաւոր ընթերցուածները,* «Իսկ ընթերցուածքն հրամանեալ

խորհրդովք համաձայնին նախակարգութեանցս» (*Օձնեցի*).

*Ընթերցուած յԵրրորդ Թագ.* Եւ առաքեաց Քիրամ.

*Ընթերցուած յԱռակաց,* Ա՟ծ իմաստու՟բ հիմունս եարկ երկրի.

*Ընթերցուած ի Յոբայ.* Երկիր՝ ի նմանէ ելցէ հաց.

*Ընթերցուած յԵս. մարգ.* Այսպէս ասէ Տէր, շինեսցին տունս.

*Ընթերցուած յԵս. մարգ.* Այսպէս ասէ Տէր, երկինք աթոռ իմ.

*Ընթերցուած յԵզեկ. մարգ.* Եւ ահա այր մի, եւ տեսիլ նորա էր.

*Ընթերցուած ի Զաք. մարգ.* Ամբարձի զաչս իմ եւ տեսի.

*Ընթերցուած ի Զաք. մարգ.* Եւ դարձաւ հրեշտակն.

*Ընթերցուած յԱնգ. մարգ.* Եւ արդ զօրացիր դու զօրաբաբէլ.

*Պօղ. Առ. ի Կոր. Առ. Թղ. է ընթ.* Եղբարք զի Ա՟յ գործակից եմք.

*Ալէլուիա, ալէլուիա* Տ՟ր յոյս իմ եւ կեանք իմ.

*Աւետարան ըստ Մատ.* Եւ եկեալ Յիսուս ի կողմանս,

*Ապա ասում է Սարկաւագը,* Վասն ի վերուստ խաղաղութեան.

*Որից յետոյ Եպիսկոպոսը կարդում է այս Աղօթքը,* Տէր Ա՟ծ մեր. որ ի վերայ առաքելական վիմի.

*Ապա ասում է Սարկաւագը,* Խնդրեսցուք հաւատով.

*Իսկ Եպիսկոպոսը,* Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ.

*Սրանից յետոյ Եպիսկոպոսը անմիջապէս Բրիչն առնելով (փայտատ.* զագմա) *ի նշանակ Վկայութեան Խորանի, ի նշանակ Սողոմոնի տաճարի, և ի նշանակ Զօրաբաբէլի ձեռքով նրա նորոգման. զարկում է գետնին—Եկեղեցու չորս կողմերում, իւրաքանչիւր կողմում 3 անգամ, որ անում է 12, ի նշանակ 12 Առաքելոց և 12 Քարերի. ապա Բրիչը տալիս է արհեստաւորներին հիմքերը փորելու,* «Եւ նոյնհետայն առնու զբրիչն եպիսկոպոսն եւ նախ ինքն հարկանէ զնուիրեալն երկիր. եւ ապա տայ ճարտարապետացն»: *Որից յետոյ դասէ դաս կանգնելով Սեղանի տեղում,* «ի տեղւոջ սեղանոյն», *իբրև հոգևոր ըղձերի աւարտման տեղում, ասում են բարձրաձայն,* «Հիմունք նորա ի լեառն սուրբ նորա, սիրէ Տէր զդրունս Սիոնի քան զ՟ամ յարկսն Յակոբայ». *Եւ Օձնեցին մեծ երկիւղածութեամբ, բարեպաշտութեամբ և իրաւամբ Եկեղեցու հիմունքները է համարում* «Դրախտն Աստուծոյ, Տապանն Նոյեան եւ խորանն Աբրահամու» *ասելով որոտաձայն* «Այսօրիկ հիմունք ի սուրբ լեառն Սիովնի», *որից յետոյ աւարտում է Հիմնարկութեան կարգը հետևեալ ընթերցուածներով.*

*Քարոզ* Վասն ի վերուստ խաղաղութեան.

*Ընթերց. յԵս. մարգ,* Լուսաւորեաց լուսաւորեաց Երուսաղէմ.

*Պետ. Առ. ի Կաթ. Առ. Թղ է ընթ.* Սիրելիք առ որ մատուցեալ.

*Ալէլուիա, ալէլուիա* Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո.

*Աւետարան ըստ Մատ.* Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ.

Ահա այս է մեր Եկեղեցու Հիմնարկութեան հին կարգը, որը 1807 թուին Կոստանդնուպոլսում բոլորովին կերպարանափոխուեց Էջմիածնի Նուիրակ Մինաս Արքեպիսկոպոսի և Գալուստ դպրի ձեռքով։ Բարերը փոխանակ հոկայ, մեծամեծ լինելու, և միայն յանուն Առաքելոց 12 հատ լինելու, գրկելու չափ մանրացան և նրանց թիւը եղաւ 16, որոնք փոխանակ Եկեղեցու անկիւններում դնելու, դրւում են եկեղեցու չորս կողմերում և Սեղանի անկիւնների տակ։ Եկեղեցի շինելու համար համայնքից նուիրուած գետինը փոխանակ անարատ թողելու, մինչև որ Եպիսկոպոսի և Եկեղեցու ուխտի ձեռքով կկատարուի նրա վրայ Հիմնարկութեան և Բարերի օծման կարգը, մինչև որ ինքը Եպիսկոպոսը իւր Գաւազանի ծայրով նշան կանէ—կգծէ Եկեղեցու տեղը, մինչև որ Եպիսկոպոսը Բրիչն առնելով՝ ի թիւ երկոտասան Առաքելոց կպարկէ նրա չորս կողմերը 12 անգամ, և ապա ինքը թոյլ կտայ արհեստաւորներին հիմքերը փորել, ըստ յիշեալ Մայր Մաշտոցի, Եկեղեցու հիմքերը արդէն փորուած են լինում։

Յիշեալ Մայր Մաշտոցը, Եկեղեցու Հիմնարկութեան Խորագիրը ունի այսպէս, «Կանոն եւ արարողութիւն վասն հիմնարկութեան եկեղեցւոյ։ Արարեալ Տեառն Յոհաննու Մանդակունւոյ Սրբազան կաթուղիկոսի նախապէս, եւ կարգաւորեալ այժմ ի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի միաբան՝ Տեառն Մինասայ Արհի եպիսկոպոսէ». Եթէ չլինէին մէջտեղում Օձնեցու և Սիւնեցու համանման երկերը, որոնք իբրև աւանդ անկապտելի ընծայում են մեզ Եկեղեցու Հիմնարկութեան կարգը այնպէս, որպէս նրա սրբազան Հեղինակն է գրել, յիշեալ Մաշտոցով շատ դժուարին կլինէր որոշել, թէ ո՞րն է Մանդակու գրածը, և ո՞րն է Արհի Մինասի «կարգաւորածը»։ Մանդակունու գրածից բաւականին տարբեր՝ Արհի Մինասից «բարեկարգեցեալ» է նաև և Եկեղեցու Օծման կարգը։

## Ստեփաննոս Իմաստասիրի երկեր.

1. «Մեկնեաց և գրեանս բազումս զԱրարածսն, զՅոբն. զԵզեկիելն և այլ բազումս». Պատ. Ստ. Օրբէլեան, ԼԱ գլուխ։

2. «զՑարութեան Օրհնութիւնսն». (բացի ÷{ ձայնից)։ Անդ.

3. «Բանք ընդդիմութեան ի Նիւթս հաւատոյ» 22 գլխովք. Էջմիածնի Մատենադարանում։ Պատ. Հայ. Դպ. 477 եր.

4. Մեկնութիւն Աւետարանաց. «Կիրակոս ալ կը գրուցէ թէ սուրբ Աւետարանաց մեկնութիւն մը յօրինած ըլլայ», Անդ. 477 եր.

5. «Աշխարհացոյց Ստեփաննոսի Հայոց իմաստասիրի ի գրոց մեկնութենէ». Անդ. 477.

6. «Ստեփաննոսի Սիւնեաց տեառն Պատասխանիք ընդդէմ ազգին Փռանկաց». Անդ. 478։

7. Դիոնեսիոս Արիսպագացի (Թարգմանութիւն) Անդ. 478։

8. Պարապմանց գիրք սրբոյն Կիւրղի (Թարգ.) Անդ. 478։

9. Ցաղագս բնութեան մարդոյ, Գրիգորի Նիւսացւոյ. Անդ. 478։

10. Մեկնութիւն Ղևտական գրոց. Անդ. 478.

11. «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի մեծի իմաստասիրի պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալ էր» Անդ. 476.

12. Թուղթ առ վարդապետս Աղուանից. Անդ. 475։

13. Թուղթ Գերմանոսի Կոստանդնուպօլսոյ Հայրապետի, Անդ. 474։

14. «Վասն անապականութեան մարմնոյն. որք ասեն թէ, որ ածէ և նուաղէ». Հրատ. Գալուստ Տ. Մկրտչեան 1902. Ս. Էջմիածին։

15. «Յառաջաբանութիւն պատմութեանց. եթէ որպէս կարգեալ է աղաւթից մերոց հայցուածք»—Մեկնութիւն Ժամակարգութեան, Ընդարձակ.

16. «Վասն Նախերգանի աղաւթից, որ ի Մէջ գիշերի կատարի»—Մեկնութիւն Ժամակարգութեան, Համառօտ։

17. «Պատճառ Հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ»։

Բառանկիւնի փակագծի մէջ [ ] առնուած խօսքերը և բառերը մեր աւելացրածն են։

**Սահակ վարդապետ Ամատունի**

## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ, ԵԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՐԳԵԱԼ Է ԱՂԱՒԹԻՑ ՄԵՐՈՑ ՀԱՑՑՈՒԱԾՔ.

### [ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ]

Էջ 1ա Էջ 130ա Առաջին ճառն յաղագս նախերգման աղաւթիցն, որ ի Գիշերին կատարի. Թէ, Որպէս նեղեալ ոք ի չար թշնամեաց եկեալ մաղթէ առաջի արդար դատաւորութեանն Ա՟յ, առնել ընդարձակամտութիւն ի կանխեալ աղաւթսն. և եթէ, ամրացեալ հնգիւք սաղմոսիւքն զհինգ զգայարանս, զի և յաղաւթսն յաջորդեալ ծանաւթս կացուսցէ. և դարձեալ թէ, ո՛րպէս եւթն Գորգայիւքն Կանոնս եդեալ յաղաւթս, զեւթն աւուրց ի շաբաթու ամենադաւր արարչութեանն Ա՟յ զաւուրսն նշանակէ, և զեւթն աւուրս եւթնհազարեան 1ր դարեան խորհուրդ։ Եւ Աւրհնութիւնքն՝ ի վերայ եկեալ, մարգարէիցն,

---

5 Տես Համառօտ Ա. գլուխ, «Որպէս նեղեալ ոք ի չար թըշնամեաց, և եկեալ մաղթէ առաջի արդար դատաւորին Ա՟յ» եայլն.

5 Բ ըզնեղեալ. Գ նեղեալ.

11 Բ զեւթն աւուրցդ ի շաբաթուդ.

12 ԱԲ յաւուրսն.

14 Մարգարէից Օրհնութիւնք և Կանոնագլուխք ըստ Սաղմոսի Կանոնների։

Երանեալի Կանոնագլուխ ՃԺ. Սիրեցից։ Օրհնութիւն, «Օրհնութիւն Մովսէսի եւ որդւոցն Իսրայէլի. Ելից. ԺԵ 1. Օրհնեսցուք զտէր զի փառօք։

Երկինք պատմենի Կանոնագլուխ —Ը. Դատեա տէր։ Օրհնութիւն, «Օրհնութիւն մեծին Մովսիսի ա՟ծասեր մարգարէին. Բ Օրէնք. ԼԲ 1. Նայեցարուք երկինք։

Մի նախանձիր Կանոնագլուխ —Է. Աւաց անզգամն։ Օրհնութիւն, «Օրհնութիւն մեծին Մովսէսի ա՟ծասեր մարգարէի Բ Օրէնք. ԼԲ 22. Զի հուր բորբոքեցաւ։

զութերրեակ աւրն նշանակէ։ Եւ եթէ, Աւրհնութիւն երից Մանկանցն, նշանակէ ի ձեռն յարութեանն Ք՞ի. իսկ Մեծացուսցէն և Ողորմեացն, զազատութիւն կնոջն գլորելոյ. և եթէ, Տէր յերկնից՝ և որ ըստ նման է ատեաւքս, զհանդերձելոց զկեանսն՝ որ ընդ հրեշտակս լինելոցն է՝ աւրինակ է։

Երկրորդ ճառ բան. թէ, որպէս ընդ Արևագալն կատարի աղաւթքն, զյարութիւն մեռելոց ցուցանէ. վասն զի ի նոյն ժամու առաւաւտուցն ստեղծեալ եղև մարդն առաջին յանարատ ձեռացն Ա՞յ. և եթէ, Նա է ճշմարիտ կեանք Ք՞ն, որ ծագելոց է աշխարհի ի միւսանգամ գալստեան իւրոյ, և տայ զկենդանութիւն արժանացելոցն։

Երրորդ ճառն. եթէ, յԵրրորդ ժամու եղև մարդն առաջին Ադամ. վասն որոյ ի նմին ժամու Երրորդի կենարարն մեր Ք՞ս ի խաչին տարածեալ զբազուկս առ ի բժշկել զայն ձեռն, որ յԵրրորդ ժամու ի ծառն ընթացեալ, առ զպտուղն մահացու։ Եւ եթէ, յԵրրորդ ժամու

---

Ողորմեայի կանոնագլուխ [illegible]. Ի քեզ տէր յուսացայ։ Օրհնութիւն, «Աղօթք Աննայի մօրն Սամուէլի Ա Թագ. Բ 1. Հաստատեցաւ։

Երրեկի կանոնագլուխ [illegible]. Զօրութեամբ քո Օրհնութիւն, «Օրհնութիւն Եսայեայ որդւոյն Ամովսայ. Եսա. ԻԶ 9. Ի գիշերաց կանխէ հոգի իմ։

Տէր ապաւէնի կանոնագլուխ [illegible]. Խոստովանի։ Օրհնութիւն, «Աղօթք Եզեկիայի արքայի հրէաստանի, ի ժամանակի յորում հիւանդացաւ, եւ յարեաւ ի հիւանդութենէ իւրմէ. Եսա. ԼԸ 10. Ես ասացի ի վերանալ յինէն։

Խոստովանի կանոնագլուխ [illegible]. Արարիչ Օրհնութիւն, «Օրհնութիւն Եսայեայ կայծակնամաքուր ս՞ր մարգարէին. Եսա. ԽԲ 10 Օրհնեցէք զԱստուած։

Ի նեղութեանի կանոնագլուխ [illegible]. Օրհնեա անձն իմ զտէր։ Օրհնութիւն, «Աղօթք Ամբակումայ մարգարէին, Ամբակ. Գ 1. Տէր զլուր քո լուայ.

1 Բ դարն նշանակէ.

4 Բ գլորեցելոյ.

5 Ա Բ հրեշտակս. Համառօտը՝ ընդ հրեշտակսն.

7 Բ ճառ է բան. «է» Նոր աւելացրած.

16 Բ զայն ձեռս.

եկեալ Հոգին սուրբ ի վերնատունն յառաքեալսն սուրբս։ Եւ եթէ, յԵրրորդ ժամու գալուստ Միածնին լինելոց է փառաւք ա՛ծութեանն, որ նշանակ է այս հանդերձելոյ եկեղեցւոյ Ք՛ի։

Չորրորդ ճառն յաղագս Հասարակաւրեայն կոչեալ ժամու. եթէ, 2ա զՄէջաւուրբն յանցանս կային նախատեղծքն խաւարազգած մտաւք. և եթէ, կային ի տարակուսի և մղձկէին ոգիք նոցա։ Ցաղագս որոյ ի նմին ժամու Բանն ա՛ծ երկրորդ Ադամն գալով ի խաչն. իսկ ի վիրելոյ տանջանացն, կայր պրկեալ ի խաչին. և մահուամբն և յարութեամբն իւրով զմեզ ի մահուանէ փրկեաց, և տանջանաւքն[131ա] իւրովք ի տանջանաց ազատեաց զմարդիկ, ի խաւարային իշխանութենէ ապրեցուցանել, տաւել ես նեղել զարհուրանաւք ընդ մուտս արևուն. զի՞նչ արդեաւք լինելոց է ամենեին խաւար անելոյ։ Իսկ եթէ այսոցիկ կարգեալ է, զոր արար ա՛ծորդին՝ իջանելով ի հող, զմարդիկ պատուեաց ի կեանս. և եթէ, զնոյն ինքն զԳիշերոյն աղաւթիցն զխորհուրդն ունին յինքեանս։

Եւ եթէ, Հինգերորդ ճառն, որ վասն Հանգստեան աղաւթիցն կարգեալ է. և եթէ, ակն ունելով այսմ լուսոյ արեգականս, որ ծագէ և ի տեղի իւր ձգի. և եթէ, սպասել արթուն մտաւք մեծի աւուրն յետնումն ծագելոյ արեգականն արդարութեանն. և եթէ, ի բոլին ունի զելիցն մերոց յաշխարհէ, և զծագումն լուսոյ յարութեան մերոյ նշանակէ. և եթէ, եւթն անգամ յ[աւուրն աւ]րհնել զԱ՛ծ. այս ցուցանէին միտք և խորհրդածուք ճառելոցս Պիտառու2°թիւն ժամուցն, զոր կարգեցին ս՛բ առաքեալքն, յետ կատարման չարչարանացն Ք՛ի. այս է մեկնութիւն։

---

5 Բ կոչելով։ Ա. կոչել.
6 Ա. նախաստեղծն.
9 Ա. ադամ.
10 Բ վիրաւորելոյ.
15 Բ չունի՝ ամենեին.

## [ՃԱՌԱՋԱԲԱՆ]

Ա՟ծային և զկենդանարար և զս՟ր Հոգւոյն՝ որ առ արարածս լինէր գործութիւնք, յայտնելով որ երբեմն իսկակիցն է Հոգւոյն, «Հողմ ուր կամի, առէ, շնչէ», այսինքն է, որ յամենայն նշանակէ իւր զխորհրդոց 151բ
զմատակարարութիւնն, նա [մանաւանդ] ոչ միայն յարժանաւորսն մարդիկ, այլ և յոչսն. այսպէս նոյնպէս և յանբանսն և յանշունչսն. քանզի սուրբն էապէս բնակէ տաճարացուցանելով յինքեան, որով խաւսի իսկ նոքաւք զխորոցն Ա՟յ։ Իսկ յոչն պիտանիսն և յանարժանսն բնակութեան, յաղագս բազում սիրոյն իւրոյ առ արարածս ներեա. զազդեալն յոկ սակս զմարդկան անուարինեալ փրկութիւն։ Աստանաւր զԲաղաամայ իմա, որ զյայտնեալն ա՟յ Բանին բարբառէր ի վախճան ժամանակիս յերկրի. [Ն]աև զէշն նորուն, կամ զանշունչ զաւազանն պաղաբերեալ. ապա չեն զարմանք, եթէ մեղաւորաց և անարժանից թողացուցանէ փոքր ինչ. յայտնել յեկեղեցւոջ մասն մի ի հնգից անտի ի բանիցն սրբոյն Պաւղոսի յաւգուտ ուսումնասիրացն ասէ։

Արդ՝ շրջե[ա]լ ընդ հին և ընդ նոր պատուիրանս Ա՟յ քննու՟ր. և քաղե[ա]լ ի հոգևոր աղբերացն զծաղիկս բանին3՟ առ նիւթ պատրաստութեան իմոյ շարադրութեանս, և յաւրինեցի զսա կտակարանս ի միտս ի ժամ աղաւթիցն կարգեալ, որ ի Գիշերի և ի Տըւընջեան կատարի յեկեղեցւոջն Ք՟ի։

---

2 Տես Յոհան Իմաստ. 1833. Վնետկ. 81. «Զաստուածային և զկենդանարար Հոգւոյն սրբոյ զործութիւնն յայտնելով» և այլն։

3 Յովհ. Գ 8.

9 Բ ինքեան.

17 Ա Բ յայտնեալ.

21 Բ քաղեալ.

23 Բ սա.

[Ա. ԳԼՈՒԽ]

Հարցումն առաջին. Զի՞նչ ուրեմն իմասցուք զՄէջ գիշերոյ աղաւթիցն զմիոս Նախերգականին[132ա] հնգիւք սաղմոսիւն. ապա Թարգն և քահանայական Աղաւթքն. Պատասխանի. Յ՞ածային ժամանեալ խաղաղու՞ի խորհիւր ի չար վրդովմանց ժողովուրդ ս՞բ եկեղեցւոյ, որպէս յանդիման կալով առաջի մեծի դատաւորին, համարձակու՞ի հայցէ ի բանալ բերանոյն, և պատմել զնեղչացն ի վերայ եկեալ զալեկոծանն՝ ասէ, «Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ» այլուքն հանդերձ. Վասն որոյ աղաչեա ուզնական լինել առ ի խորտակել զյարձակու՞թ Ակողացն. և ոչ մնասս առնել մարդասիրին Ա՞յ զմարդկութեանս ազգս բարեգթութեանս յողորմութենէ Փրկչին մերոյ, զի «լցոյց՝ ասէ, չարչարանաւքն զոգի իմ». և որ զկնի սաղմոսն պատմէ զանազան փորձութեանց վարարկեալ որպէս զվարմ. Զայս ամենայն կիրս անցեալ ընդ իւրեան տեսանէ եկեղեցի Ք՞ի, բայց ոչ լքանի յարարչական խնամոցն, այլ յիշելով զակզբանն, ուստի հայրական զութն ամենեւին արտաքս սահմանեալ, զի ի բարձՅ՞րութենէ խոնարհեցուցանող տրամութեանն, ի վերինն

1 Տես Համառօտ Ա. Գլուխ.

2 Յոհ. Իմաստ. 82, «Եթէ ընդէր ի Մէջ գիշերին հինգ սաղմոսիքն նախ երգեն. . . Քանզի յ՞ածային խաղաղութի՞ ժամանեալ մարդկային բնութի՞, խորհիւր ազատել ի չարին վրդովմանց ս՞բ եկեղեցի. և որպէս յանդիման կալով առաջի մեծի թագաւորի» և այլն։

4 Բ քարոզ.

6 Ա. խորհուրդ ի չարէն. Բ խորհուրդ ի չարին. «ին» գրուած օտար ձեռքով։ Դրինք «խորհիւր ի չար վրդովմանց», հետեւելով Յոհան Իմաստասէրին, «խորհիւր ազատել ի չարին վրդովմանց»։

15 Բ զզանազան. «զ» օտար ձեռքով.

16 Ա. Բ զվայր մի։ Դրինք «զվարմ» (Թակարդ) Սիւնեցու Համառօտի համաձայն, «որպէս և վարմ». Յոհ. Իմաստ. «որպէս վարմի».

17. Ա. արարչական. Բ յարարչական. «յ» օտար ձեռքով. Յոհ. Իմ. յարարչական.



A 457 III

*ուրեմն խարսխեալ ամրութիւն, գոչէ քաջալերաբար հրամանաւ ասելով յինքեան, «Արծնեա անձն իմ զՏէր, եւ ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա. 132բ եթէ, «եւ մի մոռանար զամենայն արարեալ զաքանչելիս նորա» զառաջինսն, որ պատկերոցն է զկամարարս իւր ողորմու՟րն, որով դուարճացեալ ա՟ծայրին յուսովն, հրամայէ վերին զաւրացն, որոյ զինքն յաւղեալ տեսանէ փառակից աւրհնել զՏէր։ Եւ արդ այսպէս շուրջանակի զալեալ զգաստու՟րն և ամրացեալ հնգիւք զգայարանաւք, հրաշափառապէս խնդրէ առաքելապէս զհոգւոյն առաջնորդութեանց յերկրին բարուե՟, զի և յայլսն ծանուցես կացուցանէ ճշմարիտ քարոզու՟րն զանուն Տ՟ի։ Եւ ապա մատուցեալ հայրաբար զփրկեալսն իբրև զորդիս լուսոյ առաջի Հաւրն երկնաւորի, որում փառք յաւիտեանս։*

## [Բ ԳԼՈՒԽ]

*Դարձեալ հարցումն. Ընդէ՞ր եւթն Գորդայիւք կանոնեալ զաղմոսս Դաւթայ, որով հանապազորդ կատարեմք զաղաւթս. կամ վասն ի՞նչ պատճառի զայլոց մարգարէից զերգս՝ իբրև թերի խորհրդով, ի վերայ բերեմք Արծնութիւնս ձայնելով. և ապա Փարոզութիւնն և քահանայական Աղաւթքն։*

*4ա Պատասխանի. Ի հրաշակերտ փառազարդութեանն Ա՟յ զամենայն բարիոք զոլ տեսանեմք, եւ առաւել զեբրայածառազոյնզնախեղեալն լոյս, սահմանաւղ Տունջեան 133ա և Գիշերոյ, որով այժմ շարժին ժամանակաց շրջմունք եւթնաւրեայ շաբաթեալք։ Արդ թէպէտ և յո-*

15 Տես Համառօտ Բ Գլուխ.

16 Յոհ. Իմ. 83. «Եւ եթէ ընդէ՞ր եւթն գորաղայիւք կանոնեալ է սաղմոսն Դաւթի . . . Ի հրաշակերտ փառազարդութեանցն Ա՟յ զա՟մ զոլ բարեօք տեսանեմք. եւ առաւել զգերազանց զպայծառ և զանեղ լոյսն զսահմանող տուընջեան և գիշերի» և այլն։

26 Բ շաբաթ"ցեալք. «ց» օտար ձեռքով. Յով. Իմ. «շաբաթացեալք»։

*լոյք կան ութներեակք ի վերայ այլ յաւուրս շրջագայս, ինձ թուի մերձ լինել սաղմոսացդ միոջ ութն Գորդայիւքդ կանոնել, զոր ոչ աւատր քան թէ Հոգւոյն սրբոյ իմաստիւք վարկանիմ յաւրինե[ա]լ երանելեաց մերոց հարցն Կանոնն անուանել զութն Գորդայսդ, այսինքն անշարժուի՞. զոր համեմատու՞ր ընդ ութնաւրեայ շաբաթս մի մի աւր առ զաւրդայ մի զոլով, որով քաղաքավարիմք ի վերինն ջանիւ հասանել ի փառս. վեց՝ ըստ վեցից աւուրցս ստածանման. իսկ ութներորդն՝ զլուխ աւր հանգստեան, յորում ո՞քն ճգնեալ պսակին ի Ք՞ս. Այլ չև ես եկեալ կատարումն ութերեկին, Նորոյս Աւրհնութեանցն ասեմ, և ութնհազարեան զարին հանգիստ աւուրցն՝ ըստ սրբոյն, որում պատմելոյ զայս յայսմ վայրի կարգի Աւրհնութեանս անուանել ութերորդ. այսպէս և աւր Միաշաբաթիս և խորհուրդք որ ի նմա Կ՟ 155՟ ութերեակ, և սկիզբն փրկութեան աշխարհի։*

*Աստանաւր յանգումն բերի ադաւթից մերոց և ա՞մ անաւրէնութեանցն Ք՞ի, զծնունդն ասեմ և զմահն և զյարութիւնն. յայս բերումն հայեցեալ Առաջնորդութեանն, ութաւրեայ հրամայէր թլփատու՞ի աբրահամեան տոհմին. որպէս յետոյ լքանել զութնաւրեայ ըստ մարմնոյ երկրաքարշ մտածմունս, յութերորդ ճախրել առ Ք՞ս յարութեանն. մերձ յասացեալսն դնեմ և զքահանայիցն կատարումն ութաւրեայ առ դուրս խորանին դեգերեալ. գոն և այլ տիպք հաւեղք յութնեկացդ,*

---

1 Յոհ. Իմ. «Կան եօթներեակք».
5 Բ կանոն.
10 Բ ի Ք՞սէ. «Է» օտար ձեռքով.
11 Յոհ. Իմ. «Կատարումն եօթներեկին».
11 Բ Նորոյ աւրհնութեան.
12 Բ և հանգիստ.
12 Ա սրբոյ.
13 Ա Բ «օրհնութեանս».
15 Ա Բ խնկզբան. Յոհ. Իմ. սկիզբն լինելութեան աշխարհի.
19 Ա յոյս բերումն.
25 Ա հաւիղք. Համար 2050 Տօնապատճառ՝ համեքդ.

որ յութերորդն հանէ ք՟սեան խորհուրդ. որպէս աւուրքն բազարջակերացն կամ տաղաւարահարացն տաւնին գուշակումն, որ ի վերինն ժողովէ խորանս. քանզի ՟ածորդումն հետեւանամ ի լեառն բարձր առանձնանալ ընդ Երրորդութեան փառաց. զի թէպէտ և յութներեակն լինէր թզութիւն եբրայական խորհրդով ծառայիցն և գեղիցն, ըստ որում և որդի թագաւորազնոյն յութներորդ ժամուն ապաքինեցեալ յախտէն, նմանել որդւոյն մեծի թագաւորին բժշկութեան [134ա]. և ի սոյն մեծի ժամուն Հինգշաբաթւոջ աւուրն ժողովեալք որպէս ի վերին քաղաքին խորանսն, արձակումն լինի երեխայիցն ի կապանաց բանսարկուին։ Այլ և յութերեկին եղև նորոգումն, յարուցեալ ընդ Ք՟ի. այսօցիկ խորհրդազգած եղեալ ս՟ք եկեղեցի ըստ աւուրց շաբաթուց վերաբարձումն ի բոլորն ժամանակաց լրումն, և բարեփառ հաւատով ի Ք՟ս երջանկացեալ, պատուիրէ ամենեցուն զգուշու՟ք կրել ի կենցաղումն զչարչարանսն Ք՟ի ի մարմնի. արթունք և զուարթունք լինել առաջի նորա, մատուցանել զբանաւոր պատարագս, և արժանաւոր լինել հանդերձելոց բարութեանցն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Բ ի ք՟սեան. «ի» օտար ձեռքով. Ա քրիստոսեան.

6 Ա, Բ «գեղիցն». այսպէս ունի և Համառօտը, «ծառայից և գեւղիցն»։ Դրինք «գեղիցն»։ Գեղ և Գէղ—բիծ, ընական նիշ, նշան, խալ, պէնէք. պատառուածի, ճեղքուածի նշան, սպի, արատ։

10 Տես Ճաշոց Մեծի Հինգշաբաթի. «Իսկ յԵրրորդում ժամու ժողովեցին ի դուռն եկեղեցւոյն վասն արձակելոյ զապաշխարողսն»։

## [Գ ԳԼՈՒԽ]

*Հարցումն երրորդ ի նոյն գիշերին պաշտամանն։* Ե՞ր վասն հանապազորդ ի գիշերային փառաւորութեանս գերգս երից մանկանցն անխափան բերէ սուրբ և ընդհանրական եկեղեցի Քրիստոսի. յորոյ վերայ Քարոզ և ապա Աղաւթքն նմանապէս կարգեալ։ Կամ զի՞նչ պատճառ *զԱստուած բաւեալն*, և որ *զՈղորմեացն*. նոյնպէս Քարոզն և Աղաւթքն. յետ որոյ և *զՏէր յերկնիցն* ընդմիջելով, յոր *Փառք ի բարձունս* յարի։ Իսկ յաւուր մեծի յարու[3բ]թեանն տեառն *Մեծացուցէ* [134բ] որոյ կուսին. և ապա *զուրբ Աւետարանն* ընթերցեալ. արդ զի՞նչ արգեաւք ցուցանին այսքան խորհրդածուք։

*Պատասխանիք համառաւտեալք.* Ասացուած յաւիտենական որ զամենայն հաստատեաց, զերևելիս ասեմ և զաներևոյթ բնութիւնս, զոր բանիւ գոյացուցեալ ուսուցանեն մեզ գիրք յոչնչէ. իսկ զթագաւորական զպատկերն յետոյ ի պատիւ ինքեան տէրութեանն ստեղծանէր ձեռաւք, առաւել մեծարեալ զանարգ նիւթն, յերկինս հանելով ի տէրունեան փառս, որ է ըստ պատկերին և ըստ նմանութեան. սակս որոյ հրամա(յ)է արժանապէս քաղաքավարել, զի ինքնյաւժար ընթացիւք

---

1 Տես Համառօտ Գ գլուխ.

9 Ա արի.

13 Տես Յով. Իմ. 85. «Եւ եթէ վ՞ս ինչ պատճառի զընդ երից մանկանցն հանապազ երգեն ի գիշերին... Քանզի ա՞ծն յաւիտենական որ զա՞մ արարածս բանիւ գոյացուցեալ, ուսուցին մեզ գիրք սուրբք յոչնչէ լեալ զա՞մ». և այլն։

14 Բ և հաստատեաց. «Եւ» օտար ձեռքով.

20 Բ հրամաեայ.

21 Ա արձանապէս, Բ արժանապէս. «ձ» «ժ» փոխած օտար ձեռքով.

ըմբռնեսցէ զյառաջագրեալ խորհուրդ։ Աստանաւր ի վայր հարեալ չարին խնդմամբ, զանհասանելին ինքեան կամելով յափշտակել բարձրութիւնն, յորում անհանդուրժելին ի վերայ հասանէր աղէտ. զի զոր սիրան ընկալաւ փափագանաւք զխրատ գնորին, և ձեռնայր յառաջագիմութիւն. ուստի և քարշեալ իբր շղթայիւք ի խորս անգիտութեանն, ստուած ինքեան յաւրինէր զկործանիչն. ընդ որոյ հաւանեալ լծով զարտաքին ժառանգէր [6ա] զխաւար, և ամենեքին ընդ մահու [153ա] կորստեամբ գրաւեալ. այս իսկ այսպէս եղելոյ, ոչ ևս կարացեալ ժուժկալել իւրում պատկերին կործանման յաղթեալն ի մարդասիրութենէ Հայր, այլ ընդ առաջ գնացեալ մարգարէական քարոզութեամբն, զիրկս արկեալ համբուրէր զդարձեալն ի խոդաշաւեղ կամոլութեանց, պատմուճան փառաց և մատանի հրամայէ ազուցանել, առ ի նորոգել զմարդն ծննդեամբ Որդւոյն իւրոյ ի սուրբ կուսէն, զի անգործ լիցի չարն ոչինչ գտեալ յիւրոցն հողեղինիս։ Ապա զմեծն և զանպարագրելի եզն, և զանմահ իւր Որդի և բան տայ ի զենումն. որով կոչէ ի հարսանիս զախեղերս. և այսպիսի անսուրէնութեամբ նորոգել զարբերքս. և կենդանացեալս անխափան ի կիր առեալ զերկուցդ մեծապայծառ խորհուրդ աւուրցն զատկէ, զծննդեանն սեմ և զյարութեանն, ոչ միանգամ կամ երիցս կամ յոլովս, այլ զաւրհանապազ միանգամ ի տարւոջն, զխակականն հռչակելով. նաև յամենայն միաշաբաթն զնոյն խորհուրդ քաջութեան Տեառն մերոյ և զմահու յուծումն, և զմեր փրկութեանն վերստին տաւնեմք [153բ] երեկեկայէս, զոյն

1 Բ զառաջագրեալ.

7 Բ «ա՞ծ» քերուած էր.

10 Ա ժուժկալ. Բ ժուժկալել, «եյ» օտար ձեռքով և տողից բարձր։ Դրինք Յով. Իմ. նման՝ ժուժկալել.

11 Ա պատկերիս.

17 Բ հողեղինիս. «ս» քերած «ա» փոխած և ջնջած—հողեղինի առելն.

24 Ա զխակական.

27 Ա սոյն. Բ զոյն. «զ» օտար ձեռքով.

և յամենայն աւուրս։ Արդ տաւնէ եկեղեցի [6ր] Աստուծոյ համապազ զփրկութիւն նախաստեղծին, զոր արար Որդին միածին. նախ զարուին ի ձեռն քաղդէացւոցն կործանման. և երից մանկանցն փառակցութեան Որդւոյն Աստուծոյ։ Բայց նախադասելոյ պատճառ զՕրհնութիւն երից մանկանցն քան զՈղորմնայն սաղմոս, զի նախ զարուին յառաջ բերէ զփրկանաւորութիւն։ Վասն զի այր է զլուխ կնոջ, յետոյ և զիգականին զազատութիւն, ոչ եւ անտրկէնութեամբ յղանալ և տրտմութեամբ ծնանել որդիս յանէծս։

Վասն զի լուծաւ զատապարտութիւն սորոյ Աստուածածնին որդէծնութեամբ. և քանզի բարձաւ ամենայն պատճառք մահու որ յանիծիցն մտին, մարմնանալով Որդւոյն Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և մահուամբ և յարութեամբ նորին ընդ նմին յարուցեալք ի թաղմանէ մեղացն, որք ընդ նմա մեռաք մկրտութեամբ։ Նաև համարձակի ասել թէ, և ընդ աջմէ Հաւր նստաք պսակեալք. զայս տաւնէ եկեղեցի սուրբ։ Ցաղագս այսպիսի երախտեաց, որ առ մարդոյ եղև յԱստուծոյ, անդադար մատուցանէ զյառաջադոյն ասացեալ երգս երից մանկանցն։ Եւ [156ա] զդաւթեան սաղմոսն առաջին, որպէս յաղագս Ադամայ, որ քրիստոսին եղև առ [7ա] ի բժշկութիւն ազգի մարդկան. և միւսն վասն Եւայի սրբութիւն, զորդէզրութիւնն ի մեզ ընդունել. այսու երկու խորհրդածութեամբք ի Քրիստոս միացեալ մարդն աստուծոյ, անխոնարհելի կալ ի սրբութեան աղաչէ զերրեակ միութիւնն աստուածութեան «բազմայն ասելով, զիս զմեղաւորս»։ Բայց ասացելոցս զխմանց ուժընդակ լինի մեզ միաշարաթուն աւուրն յայտնութեան, զոր ի միջի այսոցիկ կատարի, Մեծացուցէ Աստուածածնին միշտ կուսին նախամաւրն աւետիք յա-

21 Սաղ Ծ Ողորմեա ինձ ա՟ծ.
27 Բ ի ձեռն ա՟ծու՟ և
27 Բ զքաւեայն. «զ» օտար ձեռքով.

րութեանն, ի հողոյ ստեղծելոյն Ադամայ կենդանութեանն։

Բայց նախ որպէս մարգարէական բարբառովն աղաչէ, «Արի տէր» ի ծագոյ հուր ի փրկութիւն մեզ, և մի թողուր խապառ զկորուսեալսն. և եթէ «Տէր յաւգնել ինձ փութա». կամ ըստ գիշերն զայն յուղւոյ, առաքինջական եկեալ յուղւոյ, որ յաւետարանն կայ. երթեալ առ իւր մտերիմ ժտէր, սակս երիցս խնդրելով նկանակս, որ զԵրրորդութիւնն նշանակէ, շարժել զողորմութիւն և զլոյս աստուածութեանն. թէ առ ի սոյն սիրեցեալքն իմ [136ր] խնդրանէ, զոր և սիոնի աւետարանէ զցնծութիւն զաւանել զփրկութիւն, Թագաւորեսցէ ասելով, [տէր] յաւիտեան. և եթէ, «Երանի է [7ր] որ յուսայ ի նա»։ Ապա ընկալեալ զլոյս զիտութեան աւետարանին քարոզութեամբն որպէս յաստուածուստ վկայեալ, և ընկալեալ զփառացն ցնծալից ուրախութեամբ, հանապազորդեալ ախորժէ զԱւրհնութիւնսն երից մանկանցն, և զաւրհնութիւն յարուցելոյն ի մեռելոց. հրաման տալով նստելոցն ի խաւարի անգիտութեան գալ առ լոյսն ճըշմարիտ, և համբառնալ զձեռս սուրբս առ փրկիչն բոլորից Քրիստոս. և զուարճանալ հրամայէ քարոզութեամբն աւետարանին մեծի ծագման յարութեանն Տեառն։

Զայս խորհուրդ փրկութեան ոչ նոր ինչ և առժամայն իմացեալ մանկանց եկեղեցւոյ, այլ անդուստ ի վերուստ բազում աւրինակաւք. բայց որպէս յայտնեցաւ յառաջագոյն կարգեալ ի Հոգւոյն սրբոյ խորհուրդ պաշտաման եկեղեցւոյ սրբոյ Աւրհնութիւն երից ման-

4 Սաղ. ԽԴ 27.

4 Ա. ի փրկութիւնն.

5 Բ զկորուսեալս.

5 Սաղ. ԿԹ 1.

7 Ա. յաւիտենական. Բ յաւետարանն. վերջին «Ե» օտար ձեռքով, տողից բարձր.

12 Սաղ. ՃԽԵ 10.

13 Սաղ. Բ 15.

21 Բզ. Զուարճացեալքս.

կանցն, մանաւ յարութեամբն Քրիստոսի փրկութիւն նախահարցն. և Աստուած բանն՝ պաղատանս խոնարհութեամբ ամենայն քրիստոնէից յաւուրս [137ա] աղուհացիցն ադաւթքն հանապազաւր. նոյնպէս Մեծացուսցէն և Ողորմեացն խոնարհութեամբ նախահարցն ազատութիւն կուսականոյն ծ[8ա]ննդեամբն շնորհել։ Իսկ զայն խորհուրդ գիտակութեան հրամանատրութիւն ծննդոց՝ աստուածահայրն Դաւթի առ եկեղեցի սուրբ, թէ, «Օրհնեցէք զտէր յերկնից», և յաջորդումն «Աւրհնեցէք զտէր յաւրհնութիւն նոր», ասելով, «Ուրախ եղև Իսրայէլ յարարիչն». զայս երգս սրբութեան Պենտէկոստէին ասեմք խորհրդաբերեալ, յորում և առաքեալքն ընկալեալ զկենդանարար ողջոյն և զփչումն Հոգւոյն սրբոյ՝ զոր Ադամ հեռացոյց ի բնութենէս, զորս ճշմարտապէս պատկեր է այնմ մեծի աւուր անստուերի, զորս մեծաձայն գոչէ մարգարէն, «Աւրհնեցէք՝ ասելով, զաստուած ի սրբութեան նորա»։ Վասն այսորիկ պատշաճեցուցանեմք զսաղմոսս զայս աւուրցն, որ յետ յարութեանն Փրկչին Արդ ասացեալքս աւրհնութիւնք զմի ունին ի գիտումն, որ զանանցանելին վերաբերի խորհուրդ և Փառք ի բարձունս զանուն կենացն, և զատակցութեան մարդկան ընդ վերնոցն բնակութիւն, միաձայնութեամբ երգել աւրհնութիւն ամենասուրբ Երրորդութեանն։ Զայս տաւն(է) եկեղեցի աստուծոյ յայտն[137բ]ապէս և ծածկապէս հանապազ ի ներկայս ըստ տնաւր[8բ]էնութեանն Քրիստոսի, և որ յապառնոյն է լինելոց բարձրագոյն խորհուրդ փառս տուեալ ստորիջեալ, իբր տակաւին ես յերկարի զմիասնականն գոչել։ Առաւաւտին նորա զաւուրն ցուցանէ խորհուրդ. զգոհացողականն ծաւալեցուցանէ քա-

---

2 Ա. բանեայն.
7 Ա. աննդոց. փխ=ծննդոց.
8 Սաղ. ՂԽԸ 1.
9 Սաղ. ՃԽԹ 1.
10 Սաղ. ՃԽԹ 2.
16 Սաղ. ՃԾ 1.

բոզ աղաչել զամենակալն Հայր, թէ որ այսպիսի սքանչելեաց պահպանել բարձրագոյն զազգս մարդկան, և ամենայաղթող լինել արժանաւորեաց. և յարդեան ժամանակս պահեացէ զեկեղեցի իւր սուրբ մինչև ի զալուստ Որդւոյ իւրոյ. զորս առաքեալ քահանայութեանն ի վեր հանէ զԱղամթս ժողովրդեանն առ Աստուած, հաստատուն լինել ի կամս պատուիրանի նորա, և առաքելական հաղորդութեամբ շնորհին վայելել ի կենդադումս, առ ի լինել տաճար մաքրագոյն սրբոյ և միանակաս Երրորդութեանն արժանաւոր ձայնիւ սուրբ խորհրդով փառաւորել զմիածին Որդին Աստուծոյ։

[Դ. ԳԼՈՒԽ]

*Թէ որպէս պարտ եւ պատշաճ է խմանալ զՍուրբ Աստուածն եւ զՄանկունան։*

Ցետ այսորիկ խորհրդածութեամբ ապա և որ քան զամենայն նախատացեալսդ բարձրագոյն է համարձակեալք ընդ վերին զուարթունսն ոչ զոչեն ի դէմ սրբասացութեան, այլ ի դէմս միածնի[9ա]ն մի[158ա]այնոյ Որդւոյն աստուծոյ, այն՝ որ յառաջ քան զյաւիտեանս էր ընդ Հաւր և Հոգւոյն սրբոյ։

Ցետին ժամանակս մարդ եղեալ ի սրբոյ կուսէն յաղագս զմարդն փրկելոյ, խաչեցաւ վասն մեր և թաղեցաւ, և յարեաւ յաւուր երրորդի, և վերացաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր իւրոյ ծնողին։ Արդ յառաջագոյն զուշակելոյն Մովսեսի ոչխար հրամայէ զենուլ ընդ երեկս, որ է ի լրման ժամանակի մահն Քրիստոսի։ Ապա և զառն զենեալ ի քահանայիցն առաւա-

6 Աղ. Գոհանամք զքեն.

6 Բ ժողովրդեան.

12 Տես Համառօտ Դ գլուխ.

17 Ա. չունի՝ ոչ.

26 Ա. զմահն.

տուն աւրհնադրի և երեկունն։ Արդ՝ այս է ըստ սրբոյն յաջորդակ խոստովանութիւն առաւաւտին ասելով խաչեցալն և երեկունն. այս է ճշմարիտ խոստովանութիւնն հաւատոյ, [և] ոչ որպէս անիծեալն ստամիտ Լեոնին, կամ աստուածուրաց և մարդադաւան ժողովն Քաղկեդոնի, որ փոխանակ խաչեցար ասելոյ՝ ըստ առաքելական և մարգարէական քարոզութեանն, ասացին ուր ուրեք, Սուրբ Աստուած որ մարմնով խաչեցար։ Եւ այսոքիկ ես յոլովք հայհոյութեան բանք, որ կայ ի նոցա յամբարշտութեան կոնդկի, զոր նզովէ սուրբ եկեղեցի, յորս հաստատուն հիմամբք ի վերայ աստուածային վիմացն շինեալ։ Արդ զայս ամենայն յառաջագոյն [9բ] գիտացեալ սրբոյ և առաքել[138բ]ական եկեղեցւոյ, յիրաւի ասէ, «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր՝ սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ»։ Վասն զի աստուած էր Բանն, որ մարդացաւն ի սուրբ կուսէն. և հզաւր է, որ յաղթեաց երկրորդ անգամ, այսինքն բանսարկուին. և անմահ է, որ անմահացոյց զմեզ մարմնանալովն անմահ և անապական Բանն աստուած։ Արդ երիցս ասելով սուրբ սուրբ սուրբ և հզաւր, զհաւր և զհոգւոյն սրբոյ կամս միաւորութեան ընդ Որդւոյ ի խաչ անգր ծանեայք. խորհուրդ բերեալ ասելով, սուրբ եւ անմահ, որ վասն մեր խաչեցար ողորմեա կամաւք Հաւր և Հոգւոյն յաղագս աշխարհի կենաց։ Արդ հոգեորպէս ծանուցեալ զխորս պատուիրանի մայց՝ կեցցուք, և լոյս արեգականն իբրև զլոյս աւուրցն եւթանց, զոր և կատարեալմիտ սրբոցն ի ծագել մեծի արեգականն Քրիստոսի, ըստ որում և այժմ տեսանեմք զորդիս աշխարհիս ընդ ծագել առաւաւտուն ընդ հրեշտակս կարգապետեալս։ Նաև զհաւուցն ես ի տարափ առաւաւտուն ճառագեյն ի ձեռն հովուապետին աւրհնել և փառաւորեալ

5 Բ քաղկիդոնի.

12 Բ շինեալ է. «է» օտար ձեռքով.

20 Ա. չունի երկրորդ՝ «սուրբ». Բ երկրորդ «սուրբը» օտար ձեռքով.

գարարիչն, յորոյ գաւրհնութիւնն առնու Քրիստոս ի ձեռն քահանայապետին։ Ութեանն դարին ծագ[10ա]եալ գլոյս ամենայն աշխարհի ողորմութեանն, ըստ երանելոյն Յովհաննու ի Կաթուղ[139ա]իկէին ասելով, թէ «Տեսանելոց եմք զնա՝ որպէս եւ է խսկ». և դարձեալ եթէ, «Նման նմա լինելոց եմք». այսու մեծի բան գերագոյն ասելոյ խորհրդածութեամբք վերհամբարձեալ ի ստորնայնոցս, զի հնգիւք սաղմոսիւք ի նախերգականին զհինգ զգայարանան նշանակէ. և այլ կազմածք ժամուցն զաճումն և զհասակն կոչէ. և կատարելագունիցն ասելով Փրկչին, «Եթէ ոչ դարձջիք եւ լինիջիք իբրեւ զմանկտիս»․ և աստի կատարումն աղաւթիցն, եթէ, «Աւրհնեցէք մանկունք զտէր եւ աւրհնեցէք զանուն տեառն», որ հրամանին անսացեալ պատասխանւոյն. «Եղիցի անուն տեառն աւրհնեալ յաւիտեանս», որ կանգնելոց է ի գլորմանէ կործանմանն և կարգեաց ընդ վերին դաւրսն. որում փառք յաւիտեանս ամէն։

## [Ե ԳԼՈՒԽ]

Հարցումն երկրորդ ժամուն. Եթէ զի՞նչ է առաւաւտուն Աղաւթքն ընդ որս արեգական կատարեմք։

Պատասխանի. Այս խորհուրդ, որ միւսանգամ գալստեանն Քրիստոսի լինելոց եմք, զյարութիւն մարդ-

4 Ա. Յովհ. Գ 2.

6 Ա. այսիւ, Բ այսու. «ու» օտար ձեռքով.

10 Ա. զոչէ.

11 Մատ. ԺԸ 3.

12 Սաղ. ՃԺԲ 1. 2.

14 Բ պատասխանեն. «են» օտար ձեռքով.

18 Տես Համառօտ Ե գլուխ.

20 Յոհ. Իմ. 92 «Եւ եթէ զի՞նչ խորհուրդ ունի առաւօտին աղօթքն, որ ընդ արեգական կատարեն։ Այս աղօթքս զմիւսանգամ զգալուստն Քրիստոսի նշանակէ, և յարութիւն մարդկան ի գերեզմանացն» և այլն։

21 Բ խորհուրդ է որ ի. «է» «ի» օտար ձեռքով.

կան նշանակէ. զի յայսմ ժամու առաւաւտու լինի նորոգումն տիեզերաց, թէև ասի «ի մէջ գիշերին» ըստ [10բ] տէրունական բանին, այլ նա է առաւաւտն կենաց և սկիզբն երևելոյ արեգականն արդարութեանն. և լինել[159բ]ոց է յայն առաջին ժամու յայտնութեանն մեծի. վասն զի յայսմ ժամու վարկանիմ զմարդն ստեղծեալ ի կենդանարար ձեռացն, յորում և ի նմին ժամու և զմիւսանգամն ընդունի զկենդանութիւն. այսորիկ խորհրդոց բազումք վարին ի ներկայում աւրինակս ըստ աստուածընկալն Պաւղոսի առելոյն, եթէ, «Եւ այսպէս յարութիւն մեռելոց», և եթէ, «փող հարկանի եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն» այլաւքն հանդերձ. զնոյն և սուրբն Գրիգոր յեղյեղու մանրապատումն յանցանել ձմերային բուսոյն և տնկոյն բողբոջմամբ, և զհաւուցն ի գիշերոյն մերձ լինել յառաւաւտն ձայնք։

Վասն այսորիկ անհիւ սթափեալ ադաւթէ ի ժամուս յայսմիկ, ակն ունելով յաւսով նորոգման միւսանգամ. և նախազգեստ լուսոյն զուարթաթոյչ ճեպիլ ի հանդիպումն ամպովք երևեցելոյն, և հատուցանող ըստ իւրաքանչիւր զարժանն, որում փառք յաւիտեանս ամէն։

2 Բ եթէ. փխ=թէև

2 Մարկ, ԺԳ 35.

10 Ա Կորնթ. ԺԵ 42. 52.

14 Բ ձմերայնոյն բուսոցն և տնկոցն (ոյն, ց, ց» օտար ձեռքով.

15 Ագաթանգեղոսի «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» մասի մէջ կարդում ենք,—«Բոյսք բողբոջոցն գարնանւոյն երևեցին յետ ձմերանւոյն։ Սոյն օրինակ և յարութիւն մեռելոց (Հատուած 645, 646)» «Արդարև իսկ գարունն բուսաբեր՝ զօրինակ մարդկան յարութեան մեռելոցն ուսուցանէ (Հատ. 649)»։ «Արդ ի գարունս բուսաբերս և ծաղկաբերս, որք զնորոգութիւն գեղեցկութեանն գարնանւոյն յետ հնութեան ձմերայնւոյն բերիցեն՝ և թռչնոցն հաւուցն ծանուցեալ զիւրեանց ժամանակ գալստեանն... Զի ժամանակաւ գարնանւոյն և իւրեանց գալստեամբն ցուցանեն զժամանակ վարուց կենաց ուրախութեան մարդկան, ի ձայն անելն, ի ճչելն, ի ճռուողելն՝ ի շինել բունոցն (Հատ. 655)»։ Ագաթ. 1909. Տփխիս։

## [Զ ԳԼՈՒԽ]

Հարցումն երրորդ ժամուն· թէ որպէս է Երրորդ ժամու Աղաւթքն խորհրդաբերին։

Պատասխանի· Խորհրդաբերումս այս մեծին է խորհուրդ և ի վեր քան զմեր կարողութիւնս· բայց ի մերոյ Յիսուսի Քրիստոսի կրիցն և ի ներգործութեանցն կարեմք ուսանել, զոր կատարեացն վասն մերոյ փրկագործութեանցն ի կենդանարար չարչարանս իւրում, [140ա] յասել անդ երանելոյն Մարկոսի, «Էր, ասէ, ժամ երրորդ և հանին զնա ի խաչ»։ Արդ Էր արդեաւք յԵրրորդ ժամու գալ ի խաչ ելանել· թուի եթէ ի նոյն ժամու գեբեալ լինէր նախաստեղծն ի բանսարկուէն մոլեկան ընթացիւք ի ծառն մահաբեր՝ ի չար խորհուրդն, յորում էմանուէլն մերով կերպարանաւքս զծանրութիւն մեղաց մերոց բեռնաւորեալ, երթայր ի նոյն ժամու ի տեղի կառափմանն բարձրանալ ի խաչափայտին, զի զանկեալն վերացուսցէ բեեռովք զոտս և զձեռս առաքինաբար տարածեալ յաղագս Ադամայ յանդգնապէս ընթացիցն ի պտուղ և ի ճաշակ ծառոյն, և զձեռագիր յանցանաց զկտակն խափանեաց. և տարերցն ապականութիւն որ յայսմ ժամու ուձաջամբ պտղոյն գրգեաց, խաղացուցանէ իւրով մաքրողական չարչարանաւքն։

Իսկ Յովհաննէս վեցերորդ ասէ լոկ· ոչ զի զխ[11բ]աչ

---

1 Տես Համառօտ Զ գլուխ.

4 Տես Յով. Իմ. 96. «Եւ եթէ զի՞նչ խորհուրդ ունի երրորդ ժամու աղօթքն։ Երրորդ ժամու աղօթից խորհուրդս ի վեր է քան մեր կարողութիւնս... Բայց.. տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի կրիցն և ի ներգործութեանցն կարգեալ» և այլն։

5 Ա մերոյ.

9 Մարկ. ժե 25.

15 Յով. Իմ. Բառնայր։ Համառօտը՝ բեռնաւորեալ. Ա Բ բռնաւորեալ.

23 Յովհ. ժԹ 14։

եղանելոյն ասէ, այլ զժամ ձաղանացն՝ որ ի հրէիցն ըմբռնեալ։ Բայց ի խաչն յԵրրորդ ժամու վերացաւ բազէն տարածեալ զձեռս իւր դիտելով ընդ հարաւ, յափշտակեալ զմարդն ի մահուանէ ի կեանս։ Ապա յետ այսորիկ յորեղինի ի նոյն աւրինակաւ աւուր յԵրրորդ ժամու տեսան[140'] եմք զՀոգին սուրբ յառաքեալս հրեղէն լեզուաց։ Սակս յայսմ ամենայնի ասեմք, յայսմ Երրորդ ժամու գլորեալ զմարդն առաջին, յորում եղ և զբարեգործութիւն ընկալաւ։ Ապա յիրաւի պատկառեալ յայսմ ժամու աղաւթիցն խնդրելով զՀոգին սուրբ առաջնորդ լինել յերկիրն բարութեանց, ըստ որում միածնին Բանին ի նոյն Երրորդ ժամու ծագէ յարարածս զգալուստն, զորս մի ոք անմասն եղեալ ի փրկութենէն զրկեսցի, որում փառք յաւիտեանս ամէն։

[Է ԳԼՈՒԽ]

Եթէ չինչ աւրինակ իմացուք ի մեծի աւուր յարութեան Տեառն յԵրրորդ ժամու զդեստաւորեալն Քահանայապետին. և ամփիոն որ ի ձեռին ունի։ Եւ կամ զինչ յինքեան ունի խորհուրդ Տէր Թագաւորեայն, և սուրբ Աւետարանն և համբարձումն հանդերձ սրբասացութեամբքն. և կամ զինչ Քեզ վայելեայն և Մարգարէականն. կամ Մեսեդին և Առաքելականն. և կամ զինչ Ալէլուն և Աւետարա[12ա]նն սուրբ. և Հաւատամն մեծաձայն. և սուրբ Խորհուրդն, որ ճաշաժամ կոչի։

2 Յովբ. ԼԹ 26 «Ի քումմէ իմաստութենէ եկաց բազէ տարածեալ զթեւս, անշարժ դիտել ընդ հարաւ»։

5 Բ յորեկլինի.

8 Բ և ի նոյն ժամ զբարեգործութիւն. «ի նոյն ժամ» օտար ձեռքով։

14 Բ չունի՝ ամէն.

15 Տես Համառօտ Է Գլուխ.

19 Բ Թագաւորեացն.

20 Բ սրբասացութեամբքք.

22 Բ մէսէդին,

Արդ ամենայն քրիստոսաւանդ հանդերձելոցս այսոցիկ խորհուրդս ի մէջ պաշտեցելոյ կարապետ և սուսեր գիտեմք գոլով, քան ի սա զՄովսէսն հրամայեալս՝ ի հրնումն. և ոչինչ ընդ վայրաքարշ և ընդ երկիր կոխելի, այլ «ի վերայ ուսոց բարձեալ բերէին»՝ ըստ Եսայեայ ԽԹու սաեյոյն երկնաքաղաքացւոյն խոհերս. և որք ընդ Մովսէսի կարողանան առնուլ զմեծ պատիւ քահանայութեան, նախ զանձինս զգեստաւորեալ Աստուծոյ արժանաւորին, ապա յայլսն ըմբոշխնեալ, որպէս առ երջանիկն Մովսէս եղև նաև տեսիլ զարմանալի. և խորանին փառքն, և զգեստու քահանայութեան գործ պաճղնաւորն առ սարբատով զանգակաւք, և վակաս չորեքկարգեան ակամբք յուսս, և տախտակք դատաստանին երկու ակամբք վեցակի անուամբք գրեալ զկնքաձեն խորհրդոյ ի լանջսն, և զխոյրն մեծարգի ի գլուխ քահանայութեանն. զայսոսիկ նախ քան զգալ ճշմարտութեանն մաից տպաւորեալ սուրբ Հոգւոյն, որով կարողանամք երկոքումք զմիմեանս իմանալ. և սկսցուք կատարելութեամբ Բ·ր արձրեյոյն և զրոց առաջնորդութեամբ լուծանել զխնդրելիս բանիս.

Արդ զպաճղնաւորն ագանելով Անարօնի, նախ զմարմնանայն սատուածն Բանին նշանակէ ըստ Եզեկիէլի, *«Երևից նւ ի միջի նոցա այր մի որ զգեցեալ էր զպճղնաւորն»*. իսկ այլք՝ տապար ի ձեռին, զհին և նոր կտակարանք, որ կտորեցին բարձին զգայթակղութիւնս յերկրէ ի ձեռն խաչազգեստ մարմնացելոյ Բանին հաւր.

2 Բ պաշտեցելոց.
6 Եսայ. ԽԹ 22. ԿԶ 12.
13 Ա. Բ սարբատաւ.
15 Բ անուամբ.
17 Ա. զալ. Բ զգալ. «զ» օտար ձեռքով.
22 Համտ. Յով Իմ. 138. «Արդ պճղնաւոր զգենլով».
22 Ա. ագանելոց.
23 Եզեկ. Թ 2.
24 Ա. արս.
24 Ա. զգեցեալն.

Իսկ զանգակն ի ստորոտն, զպայծառ քարոզութեան ծաւալումն կոչէ.[141բ] և յուսն բառնալ զքառանիւթեայ վակասն՝ յորում ոսկին սուրբ, աստուածութեանն ընդ չորից բնութիւնս միանալ, և Հոգւոյն սրբոյ շնորհաւքն զխաչակցեալսն ընդ Քրիստոսի ի վեր տանել ի հայրական փառացն խորանս, որպէս մոլորեալ ոչխարն Քրիստոսի ցուցանէ մեզ յինքեան բարձեալ զբոլոր զմեր բնութիւնս. քառանիւթեայ կապուտակովն՝ երկնաւորացն ցուցանէ զմեզ առաքինեալ. իսկ ծիրանեաւն՝ թագաւորապէս զգեստաւորիլ զինքեան թագաւորութիւն. կարմրով մանուածեալ՝ հաւատով զմեզ իւրով մարմնով և արեամբն ընդ անքննելի աստուածու[13ա]թեամբն հաւատարմացուցանել. և նիւթեալ բեհեզս որ ի կուսէն է մանեալ. Զայսորիկ զտեալ քահանայապետին մերոյ յանապատի մարդկութեանս ի յուս իւր յեռոյր, չորեքկարգեան աւետարանաւն մտանել յանձեռագործ խորան սրբութեան ականաւոր վակասուն, որ աւրինակ էր երկոտասան առաքելոցն, եկեալ ի տաճարն սուրբ ի մեծն Սիոն տէր մեր Յիսուս Քրիստոս, յաղագս արմատաջինջ առնելոյ առնոյր զճշմարտութիւնն և զյանդիմանութեան նշանն յաղթութեան, որ կոչի ըստ մեր լեզուիս կնիք, որ է Ամփիւռն, զոր ունի քահանայապետն ի ձեռին իւրում. այլ բերցուք մերձ յաւանդութիւնս, զոր ընկալայք ի սուրբ[142ա] առաքելոցն, և շնորհաւքն Քրիստոսի դիցուք առաջի զմիարդակ լուծն ի միասին ժողովելն մեր, որք ցրուեալքն էաք յաւտարէն, իսկ փ ձեռն երկնաւոր հովուապետին միացեալք եղաք ընդ Աստուծոյ

6 Ա. քրիստոսի.
12 Ա. չունի՝ որ.
14 Ա. յանարատ ի մարդկութեանս.
21 Ա. որ ամփիռն ունի.
24 Ա. միարձակ, «ձ» օտար ձեռքով.

որդեգրապէս. և հանդերձեալ գքահանայիս զկնքիւ սրբո՛ մկրտութեամբն՝ զմեռանելն ընդ Քրիստոսի խաչակցութեամբն աստուածազգեստ եղանել նշանակէ, և մտեալ ի սրբութեան յարկսն երգաւք հոգեորաւք։ Իսկ եւղն՝ խառնել ընդ գոհսն,[15բ] ի «Տէր Թագաւորեացն» բերեմք, որպէս զվայելչութիւն զգեցաք ընդ մերում Թագաւորի, որ ի կուսէն էառ զմեծ վայելչութիւն, որով զգեցեալք, աւծեալք և թագաւորեալք ընդ Քրիստոսի. ուստի և հրեշտակացունդ խառնուածաւք գնդիւ երգս առեալ, տուն առ տուն զգեղեցիկ հակառակութիւն ընդ վերինսն գոչելով. յետ որոյ նաշիհ մաքուր, զանապականութիւնն Քրիստոսի նշանակէ հանդերձ Սրբասացութեամբքն երեքկին, որ խաչեցաւն վասն մեր պատարագ Հաւր ընդունելի. ընդ որս և մեք մատչիմք պատարագ բանաւոր Հաւրն երկնաւորի։

Աստանաւր բերկրի խորհուրդ և քննել աւանդութիւնս յոքունց ծածկեալ. ի համբարձումն Աւետարանին, յորոյ զաստուածորդին[142բ] տեսանեմք հոգւոյն աչաւք նստեալ ի վերայ աթոռոյ բարձու և վերացելոյ. ի բուրել խնկոցն անուշահոտ՝ վարդապետութեանն առ ծնեալ աւազանին եկեղեցւոյ մանկանց և փառաւորութեանց. և բարբառ հրամանին՝ քարոզութիւն պաշտամանն. և բարբառ հրամանին հիացական՝ հաստատուն կալ ի վեր նայելով յուղղութիւն, որ կոչեացն[14ա] երեքկին խորհրդով ի մի յոյս կենդանի. աստ և Հոգւոյն սրբոյ փարումն

---

1 Ա զկնքիւ Թերևս՝ զկոնքիւ.

4 Բ երգով.

5 Սաղ. ՂԲ 1.

16 Տես Յոհ. Իմ. 105, «Աստանօր հրաշազանս վերաբերի խորհուրդս և աւանդութիւնս յոքունց ծածկեալս։ Իսկ համբարձումն սրբոյ աւետարանին, յորոյ վերայ զաստուածորդին հոգւոյ ակամբ տեսանեմք նստեալ, իբրու ի վերայ աթոռոյ բարձու և վերացելոյ ըստ Եսայեայ տեսութեանն»։

24 Ա հրացական, Բ հրացական. օտար ձեռքով ր՝ ի փոխած.

25 Ա ուղղութիւն. Բ յուղղութիւն. «յ» օտար ձեռքով.

26 Տ. Յով. Իմ. 105. «Աստանօր փարումն Հոգւոյն սրբոյ» ևն.

խնդրոյն աւրհնակովեկեալ ի Հաւրէ, զամենեսեան ի վեր առնլով ուստի անկաքն։ Այսու խնկաւք Նմանիմք Աստուծոյ ըստ պատկերին եղեալ սակս. և համարձակութեամբ շուրջ պարուրեալ զարքունական սեղանովն, բուրեալ զանուշահոտ խոստովանութիւնն ընդ սերովբէան վասն մեր խաչեցելոյն անմահի։ Սիրով աստուածային կայծակամբք հրացեալք եւեթ առնեն ճշմարիտ վարդապետութեամբքն քարոզել զԲանն կենաց, զխաղաղութիւն ամենայն աշխարհի և եկեղեցւոյ սրբոյ. ըստ որում և առաջինն եղանել Նկարագրութեամբք Հաւրն երկնաւորի, զլինելն տուփք անուշահոտ քրիստոսաբերք և թագաւորականք ըստ սրբոյ կուսին Մարիամայ երգել աւրհնութիւն Աստուծոյ և ազաւթք յՆրուսաղէմ։ Այսմ խնկոց նման[143ա]եալ երանելին Եսայիաս, անդուստ ի վերուստ ազգարարական բարբառովն գոչէ, «Ահա զայ աստուած յաւիտենական ի կուսէ յաղագս փրկելոյ զաշխարհս». յայս իմաստ հայեցեալ եկեղեցւոյ սրբոյ. ընթեռնու զմարգարէն Եսայի՝ ընդունելով զանուշահոտութիւն Հոգւոյն սրբոյ. զնոյն և յայլս ծանուցեալ[14բ] լինել անուշահոտութիւն ի Քրիստոս, որպէս լուսաւորք ի մէջ կամակոր ապստամբ ազգին, և եղեալ «ազգ սուրբ եւ անուն կոչեցեալ նոր», այսինքն քրիստոնեայք, լցեալ պտղովք ուրախարար զինւովն, զոչեն երգս Մեսեդի անուանելով, այսինքն թէ, Աւրհնութիւնս մեր երգի հոգևորապէս, այլ որպէս երկնից ընկալեալ եկեղեցւոյ կատարէ. յետոյ զԱռաքելականն ընթեռնլով վարդապետութիւն, կերակրի իբրև յերկնուստ իջելոյ հացին կենդանարար կատարելապէս զխաւել զխորհուրդս աստուածպաշտութեան, որով զբարձրագոյնն մատուցանել ի սրբութեանն յընծայաբերութիւն հաւատ ի Քրիստոս։ Այս ատրիճան երգեցելոց յեկեղեցւոջ զբոլորն զրգէ յեկեղեցւոյ լսողաց զունկնդրութիւն Ալէլուին ձայնիւ. որպէս Յովաննէս զքրիստոսեանն աւետեաց

---

15 Եսայ. ԿԲ 11։

22 Եսայ ԿԲ 2։

22 Բ Նոր խորայէլ. «իսրայէլ» օտար ձեռքով.

երանելով անհարկու հիացուցանող, որ զխորինան պահանջէ ուղղ[143b]ակի ունկնդրութիւն պատրաստագոյնս հանդիպել և անշարժ դիտել ընդ արևելս. վասն զի ոչ պատգամաւոր ոք բարբառի աւետարանական, կամ հրեշտակ ոք, այլ ինքնին երկնի և երկրի Տէրն՝ ասելով, «Ելի ի Հաւրէ եւ եկի յաշխարհ» և որ ի կարգին է. և ապա յետ[15a] այնորիկ սաւառնումն անշըջունչ: Այլ և ի գլորմանէ բանսարկուին իւրովքն հնազանդելովք հիացումն կալաւ զերկնաւոր զաւրսն, որոց նշան զաւրութեան տուաւ նմանս իմն բարբառով անկասկածապէս կալ ի հաստատութեան փառսն: Եւ այս է բան մարգացելոյն, որպէս ի ձեռն զգեստու ի վերայ ուսոցն շուշփայական հանդերձիւքն բերելով յինքեան խաւսող ըստ աստուածընկալն Պաւղոսի, զոր պարտ էր երկնից ընդունել. և որպէս ճշմարիտ անմեղութեամբ բարձրաձայն բարբառով խոստովանի զաւրբ հաւատն, որ յերանելի հարցն տուան սրբոյ եկեղեցւոյ, որ ի Նիկիական ժողովոյն հաճոյացաւ ի Հոգւոյն սրբոյ, որք և զոհք ընտիրք հոտ անուշից Քրիստոսի եղեալք յեկեղեցւոջ. յետ Հաւատամ ասելոյ, քարոզէ առաջի բազում վկայից ոչ ըստ երկնի այս քարոզ եկեալ նոխազ պաշտման ի յերկոտասաներրորդ աշտիճան յեկեղեցւոյ ի յերրորդէն,[144a] զոր ի քահանայական աղաւթիցն, որ զամենայն հանդէս առաջի հայրական գթոցն առաւելապէս շարժել զօգորմութիւն: Աստանաւր յանգի յոլովակի յաղագս որոյ այսպիսի եղեալ քահանայապետ[15b] միածին Բանն աստուած, յինքն կրելով զխորհուրդ պատարագացն զոհից, առ Հայր մատուցանելով զմեր աղաւթս հնոյ կտակին բանին զատուերն: Իսկ մեզ արդեամբք զճշմարտութիւնն զխաչն, և որ ի նմա կախեալ ըստ աբրահամեան խորհրդեան:

Անդ խոյ զծառոյն սաբեկեայ՝ միայն ապրեցուցանէ զԻսահակ. աստ Բանն աստուած մարմնով և արեամբ

4 Բ Աւետարականաւն. «աւեն» օտար ձեռամբ.

6 Յով. ԺԶ 28.

30 Ա խորհրդինան.

զամենայն տիեզերս փրկեալ։ Անդ մահ ի վերայ յանջացն Անարատին կայր, նշխարն չարութեան, ածին պատրուակեալ. իսկ Քրիստոսիւ վերացի չարին պատրանքն. և քահանայապետութեամբն ի մի հաւաքեալ գինն և գնոր քահանայութիւնս, զորս միմեանց համբերեմք զխորհուրդ զգեստաւորեալ քահանայիւն։ Անդ զպճղնաւորն աւրինակաւ. աստ զՔրիստոս զգածեալ խորհրդածու։ Անդ վակաս ականաչար յուս քահանային. աստ նափորտն սրբութեան. սրբութեան խաչազգեստիկ ժողովրդեամբն քրիստոսի։ Անդ յանդիմանութիւնն և ճշմարտութիւն՝ մեղք ժողովրդեանն,[14ա] և արդարութիւն ի տախտակին. աստ մաքրութեան ցուպ ի ձեռինն ափին յիշատակ չարչարանացն։ Անդ ի ծոպս[16ա] ձորձոյն և ի զլապանս ունէին զյիշատակ եկեղն՝ զաւրինակ խաչին, որպէս և գրեալ է, «Նշանս մեր է։ և մեք ինչ ոչ տեսաք»․ իսկ աստ ի սրտի և ի հոգւոյ զլխովիմբ, զորով փարեալ և ի նոյն միացեալ քրիստոսեան քահանայապետին ի ձեռն զատուածեան նշանն յաղթութեան, յորժամ մատնիցէ սրբութիւն սրբութեանցն պատարագել զՔրիստոս յիշատակումն չարչարանացն և զմահն բառնալոյն։ Արդ ցուցանէ եթէ, յորժամ քահանայապետին առեալ ի ձեռն զնշան յաղթութեան Քրիստոսի, զփրկականն կատարէ զխորհուրդ. վասն զի Անարատն վեր ի վերոյ ունէր զնշան կենաց և մահու՝ մտեալ ի սրբութիւնսն. իսկ աստուածորդին եղեալ ճշմարիտ քահանայ խոստովանութեանս մերոյ, և մատուցեալ ինքն պատարագ յաղագս աշխարհի կենաց։

Անդ մանանայն և աղբիւրն ի վիմէն. աստ մարմին և արիւն տեառն մեր Յիսուսի Քրիստոսի։ Այս դէմք և միտք են զգեստու քահանային, և որ ի ձեռին ունի

9 Ա. խաչն ազգեստիկ.
11 Բ ճշմարտութիւնն, վերջին «Ն» օտար ձեռքով.
13 Բ ի ծուփս.
15 Սաղ. ՀԳ 9.
17 Ա զփարեալս նոյն.

հայրապետն ախիռն գլխաչն. իսկ ի յետին աւուրն մեծի և ամպախաղաց գալստեան Միածնին աստուծոյ, յեր-րորդ ժամու նորին աւրինակաւ աստուածական խորա-նաւն և փառաց ճառ[145ա]ա[16բ]գայթիւք նստեալ ի քերով-բէական աթոռոյ, ըստ այսմ խորանի գալ քահանայա-պետին։ Աստանաւր յառաջ մատուցեալ մարգարէականքն և առաքելականքն ի վկայ ճշմարիտ և անսուտ աստուա-ծութեանն։

Աստ Ալէլուք, համբարձումն սուրբ Աւետարանին և ընթեռնուլն, և Հաւատամն մեծաձայն. իսկ անդ համ-բառնալ ձեռացն զգաստուց հրեշտակաց զլուսափայլ աթոռոյն Տեառն հանդերձ սրբասացութեամբքն, և նստել անաչառ դատաւորութեանն, հաւատս և գործս պահան-ջել ի բոլորից ադամայծնելոց, զոր հատուցէ ըստ իւրաքանչիւր վաստակոցն մերւ Աստ մտանել քահանա-յապետին ի սրբութիւնսն ճշմարիտ պատարագին Քրիս-տոսի, յաղագս ամենայն տիեզերաց քաւութեան մեղաց. անդ զարժանացեալս և զսիրեցեալս անուան իւրոյ Քրիստոսի առնուլ, և հաւատ կամացն գոհացողական ընծայս մատուցանել, պսակաւորս առնել և մտանել յանճառ բարութիւնսն, որ զուխս փափկութեան վայել-չացուցանէ ըմպել, ուր հնչումն տաւնողացն և ձայն ցնծութեան և աստուածութեան պայծառ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս ամէն։

—⊱⊰—

1 Բ գլխաչն. իսկ ի յետին. «զ» «ի յետին» օտար ձեռքով.— Ա. ի հին. փխ. ի յետին.
5 Ա. այսմն.
6 Բ անտանաւր.
19 Բ և զհաւատ. «զ» օտար ձեռքով.

## [Ը ԳԼՈՒԽ]

17ա Հարցումն չորրորդ. Զինչ է ժամն չորրորդ, որ Համարակալութեան կոչի։

Պատասխանի. [143բ], Որովհետև ճանապարհ գործեաց մեզ բանն որպէս ի փապարս ձորոց վիմազբեալ աստիճանաւք ի վեր ելեալ ի ձիթաստանեաց աստուածային վարդապետութեանն լեառն, մերձ ի բանն կենացն լինել և զուշս և զմիտսն ունկնդրութեան անդր կարկառեցուք. ուր տաճարն աստուծոյ, և երկնայնոցն տունք և ճշմարտութիւնք այժմուս վերայոյն պաշտին, յորում անվշտութիւնք և անարատութիւնք, և անապառ ուրախութիւնք և ճառագայթիւք անճառ լուսոյն. ուրանուր փոքր ինչ նախ քան գյիշելս ժամ վեցերորդ բնակէր Ադամ ի դրախտին հրճուալից ուրախութեամբ. ուստի անհնազանդ խաբէութեամբ խրատու ապստամբեցելոյն ի ճշմարտութենէն, յերկնից ունայնանայր պարգևաց։ Վասն որոյ և զևթանանեկին եւթն ժառանգէր զարմութիւն, և ընդ բազում ցաւաւք անկանէր ի տեղոյս, կայր իբրև ջերմ առ հիւանդութեան. ուստի անհնազանդութեամբ խրատու ի մառմառուտ վաանդին, լուծեալ յաւդք ոտիցն և ձեռացն ի բարեացն շարժմանէ, և կարկեալ լեզուացն անխոստո[17բ]-վանութեամբ. և զոր աւրինակ մեռեալ ոք անզգայ յամենայնից, նոյնպէս և մարդն առաջին խաւարազգած խորհրդով պարփակեալ ի մէջաւրէին՝ որպէս ի մէջ գի-

---

10 Բ այժմուտ. «տ» քերած, «ս» փոխած՝ օտար ձեռքով, և ջնջած—այժմուս.

18 Բ անկանէր ի տեղոյս. ապա օտար ձեռքով քերած և ջնջած—անկանէր և ի տեղն կոյս։ Ցոհ. Իմաստ ունի—«անկանէր տոյժս, կայր իբրև ջերմանս»։

20 Բ ի մառմառուտ. ապա քերած ու ջնջած—ի մառմառուտ, թերևս ուղղելի՝ մարմառոս.

22 Բ յամենայնի.

չերի, ոչ զառժամայն նշմարէր հետեանս, և ոչ զապառնիսն մտածութեամբք հոգալ. կայր ի տարակուսի մղձկէին ոգիք նորա. մանաւանդ յիշատակ տէրունեան բանին՝ ես առաւել խոցոտէր. և երկիւղ մահու՝ ասացեալ՝ մեռանիս, և զի ոչ գիտէր զինչ գործիցէ, զի կարճամտութեամբն ըմբռնեալ յանյուսութեան խորխորատս, սիրէր զմահ առաւել քան յանդիմանութեանն աստուծոյ լինել. Վասն որոյ Բանն Հաւր միածին Որդին ի վերայ խաչին բեեռեալ կայր ի ջանս ցաւոց. Ցայժմ ժամու նեղութեամբք զնեղութիւնսն հալածէր, և ցաւքն՝ զցաւսն բժշկէր, և ամենեքին կարեաւքն յանձն առնլով բառնայր զկարիս մարդոյն. և աստուածազան խոնարհութեամբն պայծառութիւն տայ լուրոցն արարածոց և արթնութիւն, խաւարն առնլով ի վեց ժամէ. որպէս և գրեալ է ի մարգարէէն յառաջագոյն ծանուցեալ, «Մտցէ, ասէ, արեգակն ի մէջաւրէի». և եթէ, «խաւարեսցի լոյս ի տուէ». այսու 18ամ խաւարարար զկարծեցեալսն մարդկան լոյս ձախողակ խաւարեցուցանէր, զաստուածային տնաւրինելովն է լոյս գիտութեան ի սիրտս մարդոյ, առ ի ճանաչել միայն զԱստուած ողջ մտաւք զողորմածն, որ բժշկեաց զչարաչար ախտաւո-

2 Բ և մղձկէին. «եւ» օտար ձեռքով.

3 Ա Բ տէրութեան. ապա Բ ջնջած օտար ձեռքով—տէրունեան.

4 Բ ասացեալն թէ մեռանիս. «Ն, թէ» օտար ձեռքով.

6 Բ և յանյուսութեան խորխորատս կայր. «եւ» «կայր» օտար ձեռքով.

7 Բ քան զդէմ. «զդեմ» օտար ձեռքով.

8 Բ որդի.

14 Բ և խաւարն ... ժամէ առուրն. «եւ», «աւուրն» օտար ձեռքով.

15 Ա ի մարգարէն. Բ ի մարգարէէն. «է» օտար ձեռքով.

16 Ա չունի—ասէ.

17 Ամովս. Ը 9.

18 Բ «որ ձախողակի խաւարեցուցանել կարծէր.. որ էր լոյս.. մարդկան.. միայն ամբողջ մտաւք զողորմածն աստուած. Գծածները նոր. հինը քերելով.

ութիւն հոգւոց մերոց[146բ] և մարմնոց։ Վասն որոյ արթուն հրամայէ լինել և պատրաստ կալ յաղաւթս յայսմ ժամու աղաւթիցս. և զգուշանալ ի ձանձրութենէ դիւին և ի հայհոյէն, որ ծանրագոյն է քան զամենայն զեղս, որ յոլով մեղկութեամբ զողանան զմիտս մեր, յիւր մոլեալ կամսն և անգիտ կորստեանն ուղղաւորս կացուցանել. յաղագս որոյ յիրաւի կարգեցաւ յայսմ ժամու աղաւթք ի սուրբ տեղւոջ՝ յիշատակ տնաւրէնութեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի տերամբ մերով, որ չարչարանաւքն ի չարչարանացն ազատեաց և խաւարաւն ի խաւարէն փրկեաց. որում փառք և զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն։

[Թ ԳԼՈՒԽ]

*Հարցումն հինգերորդ.* Ընդէր զիններորդ ժամու աղաւթք բարձրագոյն տեսանեմք պարգեւալ։

*Պատասխանի.* Մեծ է խորհուրդ աստուածպաշտութեան որ ի Քրիստոս յառաջագոյն նկարեցաւ. որպիսի կայցի ճշմարտութիւնն ի տեղի յստորականացն՝ ի քահա[18բ]նայութեանցն ասեմ և ի զանազան զոհիցն զենմանցն, որով պաշտէին ի մուտս սրբութեանցն հասանել երբայեցւոցն մանկունքն. և լինէր նոցա բոլոր դիտումն ի գառնն զենանել պասեքին, որով զորդիսն շաղախեալ արեամբն փրկաւէտ, որ զմահաբերին ի բաց հալածէր տոյժս. զայս և զայնպիսին կազմեալ յառաջագոյն աւրինացն, ի Քրիստոս խորհրդեան

---

5 Բ մատծեալ. «ած» ստար գրչով, տողից բարձր.

8 Բ չուսի-մերոյ (քերած).

10 Բ ազատեաց.

14 Տես Յով. Իմ. 99. «Եւ եթէ զինչ խորհուրդ ունի իններորդ ժամու աղօթիցն... Եւ արդ քանզի խորհուրդ աստուածպաշտութեանն որ ի Քրիստոս կարգեալ է, զի ընկալցի ճշմարտութիւնն տեղի ի հնոցն և ստուերականացն զքահանայութեանցն սեռն, զպատարագացն և ի զանազան արեանցն կենդանեացն հեղմանցն» և այլն։

23 Ա տուժս. Բ տուժս. «ւ» քերած և շինած—տոյժս.

*ժողովումն. 14ա7. և ի մտանել ագնուական յուսոյն խորքն յայտնեցան, որով մերձեցան առ Աստուած. փարատեցաւ խաւարն անգիտութեան ի կատարել ժամանակացն. որ իբր ի մէջաւրէին եղև նսեմ առաջին մարդոյն. Վասն զի երկրորդն մարդն յերկնից ի վերայ խաչին կոչմամբ՝ աւանդեալ ոգւով արձակեաց ի տանէ կապանաց զոգիս մարդկան երթեալ անդր. նաև զլուսաւորսն ի խաւարմանէ փարատէր ինքն էնն աստուած։ Որով զընութեամբ ի մերոյին զիմաց բարբառէր, ընդէր թողեր զիս, և հեռի կացեր վասն բանից յանցանաց իմոց։ Սա է, որ եկն ի մարդասիրել՝ ծեր եռ Ադամ. և լուաւ զհայհոյութեանն պատասխանին յանցանացն՝ զկենն բերեալ ընդդէմ. վասն որոյ ի բանիցն ՙ19ա մնեալ եղև ի կենացն տեղւոյն, անկեալ ի վիճակն մահու ինքնակամ ընտրութեանն։ Եւ ուրանաւրն լուաւ զ«Ի հող դարձցիս». ի նմին տեղւոյ լուաւ ի ձեռն աւազակին ունկանն՝ «զայսաւր ընդ իս լիցիս ի դրախտին». և եղև արձակումն ի խաւարէ ի լոյսն յաւիտենից, և մուտ ճանապարհին ընդ երեկս ի ծառն կենաց, յորում ժամու արտաքս ընկեցաւ բստ մարգարէին՝ եթէ, «ընդ երեկս եղիցի լոյս. և բղխեալ ջուր կենդանի» 147բ ի խաչեցելոյն կողէ. «կէս նորա ի ծովն որ առաջին», ժողովուրդն ակն կալոյ փրկութեանն Երուսաղէմի. «կէս նորա ի ծովն որ յետոյ», փրկեալ նոր ժողովուրդ արեամբն Քրիստոսի՝ որ յայսմ ժամու իններրորդի հեղաւ. այսոցիկ ժամու յիշատակ ի տաւէ*

8 Ա յինքն. Բ յինքն, ապա «յ» քերած ջնջած—ինքն.

8 Բ զընութեամբ. «զ» քերած.

11 Բ առելով ծեր, լուաւ, «առեալով». «ւ» նոր, օտար ձեռքով։ Ա լուայ։

14 Բ և անկեալ. «եւ» նոր, տողից բարձր.

15 Բ դարձցիսն. «ց» «ն» նոր, «ց» գրելով տողից բարձր։

16 Ծնն. Գ 19. Ղուկ. ԻԳ 43.

16 Բ իցեսն.

20 Զաք. ԺԴ 7—8.

23 Բ «ակն կալոյ». «յ» «ւ» փոխած՝ և տողից բարձր պատուով «Թ°ի» գրելով կազմել է—ակնկալութիւն.

և ի գիշերի և յամենայն ժամու յառաջ բերին: Վասն զի սա է փրկութեան մերոյ խորհրդոյ աւարտումն. և ի նմին ժամու լցեալ կատարեցան ուրէնքն գրեալք ի մարգարէս. այսու խորհրդածութեամբք հալածեցան ի մերս տապանէ ազատին մահ անդարձն մեղաց, և ընկալաք զաերն ձիթենւոյն աղաւնաբեր ընդ երեկոյս բանիւն կենաց. որով կարասցուք յամենայն ժամ պտղաւէ[19բ]տ մտաւք կալ առաջի Աստուծոյ, և զհաճոյականն մատուցանել պաղատանս, առաջի աչաց նկատել զՔրիստոսի չարչարանսն, որ վասն մեր յայսմ ժամու կատարեաց. զի նմա վայել է փառք յաւիտեանս ամէն:

զգրողս յիշէ ի տէր աղաչեմ:

[Ժ ԳԼՈՒԽ]

Հարցումն վեցերորդ. Զինչ է Երեկոյին աղաւթքն, որ համապագորդեան կատարեմք ախորժելի:

Պատասխանի. Զաստուածաւարտ տնաւրինական ներգործութեամբքն անցանելով զխաչիւք ժամուցն կարգեալ աղաւթիցն զամենայն՝ որ ի նմա, բարձրագան ամբարեալ անձանց մերոց շահս քաղեցաք, իբրև զծաղիկս խոտոց,[148ա] կամ ականք պատուականք ի թագաւորութեան խանթից, պսակ մեզ բերեալ ի բոլոր ամաց մաքրութիւն: Իսկ յերեկս հասեալ յորդամիտ հարկիւ զամենեսեան տեսանեմ ի ճեմս. այլ և զարտաքինսն յաստուածային ուխտին, իբր հիացեալք անցանել տուրնջենային ճառագայթիցն, զոգցես թէ և անասունք կենդանեաց հոյլք ի սոյն ժամու ի կայթմն և ի ճարակսն յա-

4 Բ «այսոյ».
5 Բ տապանակէ. «ակ» նոր, տողից բարձր.
10 Բ նկատեալ վերջին. «ալ» նոր, տողից բարձր.
18 Ա. խաչիւք. Բ զխաչիւք. «զ» նոր գրած.
18 Բ յանցանելով. «ով» քերած.
19 Բ աղաւթից. 26 Բ զոցես թէ.
27 Ա. կայթան.

ւելուլ, ի բաց թողլով զմիջաւրեայն դանդաչմունսն որով յուսան յապաստանի 20[ա] խաղաղանալ։

Այս խոկումն թուի թէ ի կամս կենդանեաց ընաւորեալ, յառաջնումն հաւանեալ ի նախաստեղծիցն. վասն զի անկեալ արտաքս ի կենացն տեղւոյ մարդն առաջին, ոչինչ կարծէր ունել մխիթար յերևելեացս՝ ուստի ամփոփին վրդովեալն միտք, բայց միայն զլուսաւորն մեծ յոր պշուցեալ ընդ գեղեցկութիւն տարերն զբօսմամբ առեալ ինչ խափանեալ յահագին և ի մեծ տրտմութենէն. Նաև զավանայր իսկ ոչ ի պասքմամբ հեղձամղձուկ ալէկոծ ընկղմանցն։ Նոյնպէս և զայլ արարածս տեսանէր նորին լուսով. և յոյս յենքեան ընդունէր ի խնամսն Աստուծոյ ապաւինելով. այսոք[148բ]իկ ի մետասաներորդ ժամու գործէին և ի նորին յաջորդի. ապա ի խոնարհ գնացեալ զարեգակն տեսանէր։ Դարձեալ արհաւիրք փակէին զմիտս նորա. դարձեալ երկիւղ, դարձեալ տըրտմութիւնք յոլովք քան զանցեալսն. Նաև ամենևին իսկ յուսահատումն հանդիպիլ խաւարի և նորատեսիլ երևման, վարանէր զգիշերն ամենայն անհանգիստ հեծութեամբք, լքեալ իսկ յերևման միւսանգամ լուսոյն. և լինէր երեկորին, և զմարդասի20[բ]րութիւն արարչին սովորութիւն առնոյր ի միջակայի տունջեան և գիշերոյ փառաւորել և աւրհնել զԱստուած սակս անցելոցն խաղաղութեամբ և որ գալոցն է գիշեր. զայս խորհրդոյ զուշակումն երանելի հայրապետն Աբրահամ բերէր յինքեան, առ որս ասացեալ է, «Մի երկնչիր աբրահամ զի վերակացու եղէց քեզ». և եթէ, «Վարձք քո բազում

5 Ա ի կամացն. Բ ի կամայն. «ամ» փոխելով «են», կազմել է—ի կենացն.

7 Ա ի վրդովեալն միտք. «ի» և «Ն» եղծած և թողած—վրդովեալ միտք։

7 Բ զլուսաւոր։ 8 Ա ցոր.

10 Բ ի պասքմամբ. «ի» եղծած.

15 Ա տեսանէ.

21 Բ առ որ ասաց թէ. «րէ» նոր աւելացրած։

21 Ծննդ. ԺԵ 1—2.

են յոյժ». որում աղերսէր, «Տէր տէր զի՞նչ տացես ինձ, զի կորնչիմ»։ Իսկ հրամայէր սմա առնուլ երինջս և քաւշս երեմեանս, և խոյս և թռչունս ի պատարագել։ Եւ ընդ մուտս արեուն արհաւիրք և ուխտադրութիւնք. այսոքիւք զաղաւթելոյն աբրահամու յայտ առնէ զժամն. զայսոսիկ և կենարարն մեր Քրիստոս եկեալ կատարէր իջանելով ի հող ի սոյն ժամու Երեկորեան անապակ[149ա]ան մարմնովն, ապականեալ հողածնին և ի հող դարձելոյն Ադամայ մարմնոյն և հոգւոյ և մտաց. այլ և բոլորիս իսկ մարդոյն զանապականութիւն պարգևէր։ Երևէր ի ժամ Երեկորին միաշաբաթւոյն յաշակերտացն ժողովն, և ուսուցանէր նոցա երանութեամբն գգուշանալ զաւրն ամենայն մինչև յերեկոյն. վասն զի միոյ աւուր սաւեբակերպեան կենց[21ա]աղս մինչև ցեռին երեկոյն։

Արդ յաղագս այսորիկ է ժողովելն մեր յԵրեկորեան ժամու, այսինքն ի կատարած տունջեան և խկզբան գիշերոյն առեալ աւանդութիւն եկեղեցի Աստուծոյ աղաչել զամենակալն Աստուած ընդ երեկոյս, սակս անձանց և նախահաւրն զլորման սաղմոս խորհրդական երգով՝ ըստ գիշերոյն խորհրդածութեանն, զի զմի գիտումն երկոքեան ունին առաւաւտուն և ընդ երեկոյս։ Արդ Աւրհնութիւն երից Մանկանցն նախահաւրն աղագաւ. ըստ Ապրեցայն ի բանսարկուէն և որ սրեաց զլեզուն որպէս Թոյնքն իժից. և եդ որոգայթ առ ի խափանել զգնացս մեր ի վերին կեանսն։

Վասն այսորիկ հայցէ հովանի լինել յաւուր պատերազմի. զի յետս կացեալք առ վիմին զլորման ի Քրիստոսէ, զմեզ ևս խողխողել ջանայր մերձ ի դժոխս. [149բ]

---

3 Ա էրէմեանս.

11 Ա աշակերտացն. Բ յաշակերտացն. «յ» նոր աւելացրած։

20 Բ երգով. ապա փոխած—երգելով. «ել» տողից բարձր օտար գրչով.

20 Ա զի մի.

21 Բ երեկոյսն. «Ե» նոր աւելացրած։

23 Բ Ապրեցուցո-ի տեղ նոր աւելացրած «զխոնարհեցոյն». «Սրեաց զլեզուն որպէս Թոյնքն իժից .. խափանել զգնացս» Ապրեցո-ի 3-րդ և 5-րդ տներից են։

*բայց ինքեանք անկցին ի նոյն. այլ ի քեզ յուսացեալսն անցոյ ընդ ցանկս բոցեղէնս. լինել ընդ քեզ ի դրախտին հանգստեան, որ հաներ զիս տէր յաւիտենից բանդէն, հասանել յերկիրն բարութեանց դրախտին՝ որպէս աւէին մանկունքն, թէ, «Փրկեա զմեզ ի դժոխոց»։ Անդ Ողորմեացն և Մեծ21բացուցէն կանգնումն Եւայի. իսկ ի ճառ ժամուս Երեկորիս «Խոնարհեցո տէր զունկն քո». և եթէ. «Տուր զօրութիւն ծառայիս քո եւ աղախնոյ», և արա առիս զնշան խաչիդ պահպանութեան, զոր տեսեալ ատելեաց իմոց դիւացն բազմութեան յամաւթ լինիցին. որով սրբասնեալք ի Քրիստոս խորհրդական յարութեամբն, զանեղ և զանճառելոյ երրեակ միութեան՝ զովեալ զլոյս քան զեղականաց նշոյլս։ Վասն որոյ աղաչէ արժանապէս լուսաւորել զակնն մտաց ուղղակի խոստովանութեամբ, փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

*Յետ այսորիկ զմեծն՝ որ վասն աշխարհի փրկութեան էր եղեալ պատարագ, կամեցեալ յառաջ բերեալ, նախ զիւր միաբանեալ բանաւորականն հայցէ ընդունել պատարագ. զի մի ումն ի վեր մատուցանելով իբր զլուխ յամենեցունց միակամութենէ։ Միաձայն միով բերանով ուրհնել զԱրարիչն, որում երգակցեալ ժողովոյն, զմիաբանութիւն նշանակէ. իսկ Քարոզն Աղաւթիւքն հանդերձ և զՍրբասացութիւնսն, յԱռաւաւտին աղաւթքն ասաց22ա-եալ՝ բաւական համարեցաք. վասն զի զմի խորհուրդ փրկութեան մերոյ ունի, որպէս յառաջագոյն ասացաք։*

*Բայց յայսմ վայրի. Սուրբ աստուած կարգեալ յոյժ իմաստութիւն գործէ, և Հոգւոյ սրբոյ ազդումն խաչեցարն ասելով՝ զԱստուածն որ ի կուսէն ծնաւ, ընդդէմ*

---

1 Բ զ ի քեզ. «զ» նոր աւելացրած։

5 Բ «Անդ» քերուած է, և օտար ձեռքով տեղը գրած «ի գիշերին».

7 Բ ժամուս. «ս» քերուած.

7 Սաղ. Ձե 1.

անիծեալ ժողովոյն, որ ի Քաղկեդոնիա հայրապետին. նոյնպէս զմեծին Կիւրղի զԱղէքսանդրացւոյ զմի դիտումն յառաջ բերեալ, Փառաւորն ասելով՝ միշտ զԱստուածածինն ընդդէմ անհաւան Նստորի. արդ ասողին ոչ այսպիսի փառաւորութիւնան համախոհ գտանի Թիոդորէ և Նստորի. ասեն սոսկ զ ի խաչին բեեռեալն և յառաջանալոյն երկրպագիրապէս արժանացաւ զոլ որդի Աստուծոյ. որք նշգանեցին զասացեալսն ի Հոգւոյն սրբոյ՝ ի բերանոյ սաղմոսերգին Դաւթի. «Զի եհար զպատերազմ ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի» խաչիւն և անապական մահուամբն իւրով. որ ասացն, «Կանխեսցուք եւ ծաներուք զի ես եմ Աստուած»: Սա է, որ ասացն, «Եթէ ոչ հաւատայք եթէ ես եմ, ի մեղս ձեր մեռանիցիք».

Արդ համախմբեալ աստուածայնոյ՝ հարսինն ոչ բատերիւրի յառաքելական [150p] պողոտայն22՛, զոր յերջանիկն Կիւրղէ Երուսաղէմայ հայրապետէն ընկալեալ աւանդութիւն ընդ Նորին խրատու և հրաման աշտիճանել ի վերինն կուս. որպէս և զուշակէ զաւթեան երգք զոնաւրինական մարդասիրութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կրելով ի կենցաղումս երկրասիրութեամբ զմարդանալն ասա և զմեռանելն, որով ապրեցոյց զաշխարհս, զոր արդեամբք և բանիւ կատարեմք հանապազ

1 Բ հայրապետին. «ին» ջնջած և փոխած օտար ձեռքով— հայրապետացն չարափառացն. այլ նոյնպէս..

3 Բ փառաւորն. ապա «ել» աւելացնելով վերջից, կազմել է— փառաւորել.

5 Բ այսպէս ի փառաւորութիւնան.

6 Բ որ ասեն. «որ» նոր աւելացած.

7 Թերևս ուղղելի «երկրպագիրապէս».

9 Սաղ. ԽԵ 9.

11 Սաղ. ԽԵ 10.

12 Յովհ. Ը 36. Ը 21.

14 Բ հարսինն եկեղեցո. «եկեղեցո» նոր և օտար ձեռքով.

15 Բ պողոտայէն. «է» օտար ձեռքով՝ տողից բարձր.

17 Բ աշտիճան ելանել. «անել» օտար ձեռքով՝ տողից բարձր.

20 Բ երկրասիրութեամբ. ապա «երկր» քերուած՝ օտար ձեռքով գրուած է—մարդասիրութեամբ.

տանելով ի Կցուրդս, զնոյն և յաղաւթս հանապազորդ ի տուէ և ի գիշերի։ Այսոցիկ բարեացս եղելոցս գիտակք որոց մերոց երանելեաց հարցն ի սուրբ Ընթերցուածոցն կարգեցին զզանազանութիւն ժամուցն աղաւթս Տունջենայինն՝ Քրիստոսի չարչարանաւքն, որ վասն նախահաւրն Ադամայ պատահմանն ազատութեանն. իսկ զԳիշերոյն և զԵրեկորին զհամահար փրկութեան յիշատակ, զոր արար աստուածորդին յերկրի. նաև զկրկին խոցոտմունսն Նախաստեղծին բժշկութիւն շնորհելով ի հողն իջանելով։

Արդ այսպիսի փրկաւէտ խորհրդածութեամբ տեառն մերոյ Յիսուսի առ մարդն եղեալ միաբանութիւն, եկեալ հոգևորական պարաւք անցանել ընդ փողոցս ժամուց յիսկզբ[23ա]անց մինչև ցերեկոյն արժանապէս փառատրութեամբ յինքն պա[161ա]շտպանելով յաստուածային բարձրութենէն պահպանութիւն հոգիք սաղմոսիւք զհամաթիւ զգայարանս. ուստի ամրացեալ աջով բարձրելոյն ներքոյ և արտաքոյ, հերքեալ և առխաթուր հարեալ զգունդս դիւացն, որպէս և յայնժամ մեծին Մովսէսի զԱմաղէկ՝ ի մուտս արևոյն կարդալ զուէրն՝ հայցէր ապաւէն. յոր ոչն կարողանան մերձենալ աներևոյթ թշնամեացն բազմութիւնք յաստուածապահն յարկս, այսինքն, «Տէր պահեսցէ, ասելով, զմուտս եւ զելս քո». և այսպէս ամենահանճու կատարեալ զվերկյան փառս տալով քարոզութեամբ և քահանայականաւն պաղատանաց աղաւթից շարժել զՀաւրն խնամոց զգթութիւնն առ ամենայն արարածս. փառք և պատիւ յաւիտեանս ամմէն։

---

1 «Սուրբ Աստուած»-ի կցուրդն է «Փառաւորեալ».

7 Բ ազատութեանն. 7 Բ զհամարար.

14 Բ յսկզբանց.

18 Բ հերքեալ և առխաթուր. ապա ջնջած և փոխած—հերքեալ և հալածեալ և ի սուր հարեալ զգունդս դիւաց.

23 Սաղ. ճի 8.

24 Բ ամենահանճու կատարեալ. ապա «ւ» ջնջած և փոխած—ամենահանճո. իսկ «կատարեալք»—կատարել։

26 Ա զթութիւնն.

## [ԺԱ ԳԼՈՒԽ]

Հարցումն եւթներորդ. Զինչ է և Հանգստեանն ժամու աղաւթք մեզ ցուցանի.

Պատասխանի. «Եղիցի՝ ասացեալ յԱստուծոյ, լոյս». և եղեալն լոյս յոյժ բարի գոլ երևէր. որով յառաջատես տարերքս անտրտում ուրախութեամբ ընդ ժամուցն շարագանութիւն 23ր մինչև ի լինել երեկոյին՝ որ փոքր ինչ յետոյ «ոչ իւրեանց կամաւ» ըստ աստուածընկալն Պաւղոսի ասելոյն, այլ վասն մնոտի յուսոյն, աստուածախոստ պատրանաւքն անկեալք ընդ առաջնորդ իշխանիւն իքեան «յապականութեանն ծառայութիւն», ուստի մահ վշտագին լինէր հատուցումն, և ի հող դարձուցե[ա]լ մարդասիրական խնամոցն պատուհաս. զայսպիսի ազերծանելի հրաժեշտելով բանաւոր ազգի, որպէս հարկաւորիմք ակնկալութեան սպասեն եկեալքն ի հանգստեան գիշերւոյն.

Կարի իմն սրտառուչ հառաչմամբ մատուցանել զժողովեալ զաղաւթսն, ոչ միայն առ ի լնուլ զիրաւունս արդարութեան հրամանին «եւթնիցս՝ ըստ մեծին Դաւթի, «աւրհնել զաստուած», այլ զի և սրբապէս խաղաղասցին՝ ի մահիճս մտեալ. վասն զի ստուերս այս ննջմանն՝ այն մեծի գիշերւոյն, ի հող իջեալ իբր ի քուն փոխեցին մարմինքն մեր, յուսով մնալ մինչև ի հանդերձեալն առաւաւտուն յարութեան.

Սակս այս պատճառի լինի ժողով աղաւթիցս մերոց ի Հանգստեան ժամու, զի անամաւթ և անպատկառ համարձակութեամբ տե24ա ացեն զլոյսն արեգականն արդարութեան. և զոր աւրինակ վաճառական ոք անցեալ

---

4 Ծննդ. Ա 3.

9 Հռովմ. Ը 20—21.

10 Հռովմ. Ը 21.

19 Սաղ. ՃԺԸ 44.

19 Բ Դաւթայ.

բազում համարձակութեամբ ճանապարհորդեալ ընդ ծով և ընդ ցամաք, և յորժամ ի վերջին հասանէ յիւր քաղաքն ի Նաւահանգիստ, յոլովագոյն մտանէ ի հոգս, զմտաւ ածելով զնախանձ ընկերացն, և զերկիւղ իշխանացն, զզրժումն վաճառոց, կամ զխորխորել յիւրոց ընտանեացն. Նոյնպէս եկեղեցի Աստուծոյ հասեալ ի ժամս յայս աղաւթից, որպէս ի մահահանգիստ քնոյ, աւելի զարհուրանաւք լցեալ մաղջի յաղաւթսն, խնդրելով զպահպանութիւն զիշերոյն՝ աւրինակելով զհանդերձեալսն. Զի թէպէտ այլ և այլ ասին ի տեղիս սաղմոսք, այլ զի «ննջեսցուք խաղաղութեամբ եւ զարթիցուքն» նշանակէ, որով ի քուն ունել զհանդերձեալսն և զի հողն իջիք. Արդ կարևոր է աղաւթքս այս, վասն զի դադարումն անձեայ ալէկոծմանց մերոց, զի յապահով(ացե)ալ ի տուընջենային զբաւսանաց՝ մտանելով ի մահիճսն. զորոց զմտաւ ածել զվաճառաշահութիւն անցանելոյ աւուրն, թէ կենսաբեր իցէ և եթէ մահաբեր. յիշել ի ժա24բմ ելիցն մարմնոյ ասափ, և սպասել մեծի աւուրն յայտնութեանն որ է լոյսս այս։

Եւ ապա ընդդէմն եկեալ եկեղեցւոյ մանկանց հակառակամարտ բնութեանցդիւացն՝ զՍատանայ բանսագործութիւնսն, նախ զհեթանոսական ընդ իմաստութիւնն կշտամբել յանդիմանեն Որդւովն միջնորդելովն, որ յաղագս աշխարհի կենաց ի կուսէ անտի ծնաւ և այն զի աստուած է «ընդ մեզ տէր Աստուած» մեր. և լուիլուամենայն տիեզերաց՝ «ի ծագաց մինչեւ ի ծագս աշխարհի զի աստուած մեր է». և որ բանացեալ հակառակութեամբ
132ա ընդ խորհուրդս աղամածնելոցս որ կայր մեզ հա-

---

11 Ժամիս Բ Սաղ. Դ 8 «խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք».

19 Բ «լոյսս». «ս» նոր աւելացրած.

20 Բ ընդդէմն. «Ե» եղծած.

25 Գծուած հատուածները ու բառերը առնուած են Ժամիս «Շնորհեա մեզ Տէր» յայտնի երգից.

27 Բ ընդ մեզ է. «ընդ» և «զ» նոր աւելացրած.

կատակ բելիար հպարտացեալ և իշխան գոլ զինքն կարծեցեալ։ Իսկ ի ծագել լուսոյն Բանին աստուծոյ ծափ զծափի հարկանելով ի վերայ բռնաւորին ասելով, հզաւրացեալքդ և հպարտացեալքդ իշխանութեամբ խաւարի ի պարտութիւն և ի տարտարոսն անդնդոց մատնեսջիք զի ընդ մեզ է Քրիստոս, որ երևեցաւ փառաւորապէս և մեծ վայելչաբարբառ գալստեամբն իւրով, զի և մեք ժառանգեսցուք զհամագոյ Երրորդութիւնն. զի որպէս հանդիպի արդարահանդոյց դատաւո25"րին, որ է առաջին տեսանել զլոյսն յաւիտենից։ Յայս խորհուրդ ժողովեալ հանգիցուք ի ծփանացս, արժանի լինել երևման այնմիկ. զի եթէ առաքեալքն ոչ կարացին հանդուրժել մի ժամ տեսլեանն ի Թափաւր, և նա աւրինակ էր միւանգամ գալստեանն, մեք եթէ վերջասցուք ի կատարելութենէն, զի՞նչ արասցուք յաւուրն յայն։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան երևման ի Յիսուս Քրիստոս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս ամէն։

---

2 Զ. ծափս ծափի.

16 Բ երևման արժանի լինել. «արժանի լինել» օտար ձեռքով, տողից բարձր։

17 Այս վերջաւորութիւնից յետոյ, թէ Ա և թէ Բ Ձեռագրերն ունեն մի ընդարձակ հատուած և կից գրած Հանգստեան ժամի հետ։ Հատուածս ոչ մի բանով կապ չունենալով Հանգստեան ժամի հետ՝ բաց թողինք։ Բաց թողած Հատուածը վերաբերում է Ս. Պատարագի և քահանայական զգեստների նշանակութեան, որպիսին ունի Յոհան Իմաստասէր իւր «Բարեբանեցէք» եկեղեցւոյ ճառի մէջ. տես Յով. Իմ. 130։ Բաց թողած հատուածի սկիզբն է,—

«Որ յետին ժամանակս մարդացաւ ի սուրբ կուսէն վասն զմեզ փրկելոյ և ի վերին ժողովելոյ տեղիս. որ խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ և յարեաւ և վերացաւ յերկինս . . . . . . .
վերջը «Պատմէ առ աւրիորդն. Տարաւ զիս, ասէ. արքայ ի սենեակ իւր [Երգ Երգոց Ա. 3]։ Այսինքն ի հայր և ի խորանսն «և նստոյց, ասէ, ի վերայ պետութեանց [Եփե. Ա. 3 «և նստոյց . . ի վերայ ամենայն իշխանութեան և պետութեան]»։ Արդ և դուք մանկունք Քրիստոսի աւրհնեցէք զՏէր, և եղիցի անուն տեառն աւրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեանս յաւիտենից ամէն»։

## ՊԱՏՃԱՌ ԱՂՕԹԻՑՆ

[Նախադրութիւն]

— Տէր եթէ զշրթունս .Ե. փոխս, զգայարանացս է թիւն, ամբաստանութիւն ի վերայ սատանայի կանոնին .Է. զորղայրն. Է աւուրց շաբաթուց, և է դարուն Հայրցն, Ադամայ յարութեանն, և Մեծացուսցէն և Ողորմեայն, Եւայեանց ազատութիւնն. Տէր յերկնիցն ի յարութեան աւուրն հրեշտականալն ընդ հրեշտակսն.

բ Արեւագալն. Վասն յարութեան ի նոյն ժամու, և ստեղծման մարդոյն, և ծագման աստուածեան լուսոյն երրակի.

գ Մարդն Ադամ յերրորդ ժամու պատրի ի ծառն. և Տէրն ի նոյն ժամու խաչի դատապարտի. Եւ սուրբ Հոգին ի նոյն մխիթարիչ. և Գալուստն երկրորդ ի նոյն.

դ Հասարակ աւուրն. Տրտում տխուր խաւարագգած մտաւք նախահայրն. վասն որոյ Տէրն առեալ զնոյն յինքն ի վերայ խաչին.

ե Հինգերորդ արեգական մտանելոյն և ծագմանն. Տեառն ծագմանն՝ միշտ Յալոյ, զմուտ և զել մեր զուշակելով. և ընդ է անգամն աղօթելն սովոր է. զի առաքելական է, սահմանս այս, քան ամենայն որ է բաժանի. Որպէս Ադամ և Եւայ զմահու պտուղն ի սիրտս իջուցին ճաշակմամբն, նոյնպէս Քրիստոս աստուածն մեր ի սիրտս առաքելոցն. և այժմ և մինչ ի կատարած զկենացն դեղն յամենայնի ի սիրտս իջուցանէ, զիւրն տալով զանմահութիւն և զկեանս.

## Վասն Նախերգանի աղաւթից, որ ի մէջ գիրքի կատարի.

[Ա ԳԼՈՒԽ]

372ա Որպէս նեղեալ ոք ի չար թշնամեաց և եկեալ մաղթէ առաջի արդար դատաւորին Աստուծոյ, առնել ընդարձակութիւն վրդովմանցն, և սուրբ եկեղեցի հայցէ համարձակութեամբ բանալ զբերանն, և պատմել զնեղչացն ի վերայ եկեալ զոլեկոծութիւնսն ասելով, «Տէր զի բազում եղեն նեղիչք իմ». և ամբացուցեալ հինգ սաղմոսիւքն զհինգ զգայութիւնս, զաղաւթսն յաջորդեալ
372բ ժամուցս կացուցանէ. վասն որոյ աղաչէ աւգնական լինել, զի խորտակեսցէ զյարձակումն ըլկանացն. և ոչ ամնես առնէ զմարդասիրութեամբ իւրով մարդիկ, և բարեգթութեամբ յողորմութենէ Փրկչին մերոյ խնդրէ, «Զի լցոյց չարչարանաւք զհոգի իմ». և որ զկնի սաղմոսն պատմէ զզանազան փորձութիւնս ի վարարկեալ որպէս և վարմ. Զայս ամենայն կիրս տեսանէ եկեղեցի անցեալ ընդ ինքեան, բայց ոչ լքանի յարարչական խնամոցն, այլ յիշէ յիւկզբանն զհայրական գութն, զի ի բարձրութենէ խոնարհեցաք տրտմութեամբ ի վերին խարսխեալ ամրութեամբ, և գոչէ քաջալերաբար հրամանաւ ինքեան, «Արհնեա՛ անձն իմ զտէր եւ ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա»։ Զի մի մոռասցի զամենայն սքանչելիսն, զոր արար Աստուած զառաջինսն, որ պսակելոց է զկամարարսն իւր ողորմութեամբ, զուարճացեալ յուսովն հրամայել վերին զաւրացն, որոց տեսանէ զինքն յաւդեալ փառակցութեամբ աւրհնել զԱստուած։

3 Տես Ընդարձակ Ա Նախադրութիւն, «Առաջին ճառն . . . Որպէս նեղեալ ոք ի չար թշնամեաց եկեալ մաղթէ առաջի արդար դատաւորութեանն Աստուծոյ առնել ընդարձակամտութիւն ի կանխեալ աղաւթսն»։ Ա գլուխ. «Համարձակութիւն հայցէ ի բանալ բերանոյն, և պատմել զնեղչացն ի վերայ եկեալ»։

Եւ արդ՝ այսպէս շուրջանակի գալեալ ճշմարտութեամբ և ամրացեալ հինգ զգայարանաւք, հրաշափառապէս խնդրէ զՀոգւոյն առաջնորդութիւն յերկիրն բարութեան, զի զայլսն [373ա] ծանաւթս կացուցանէ ճշմարիտ քարոզութեամբ զանունն Քրիստոսի, և ապա մատուցէ առ Հայր զփրկեալսն, իբրև զորդիս լուսոյ առաջի Հաւրն երկնաւորի, որում փառք յաւիտեանս։

[Բ ԳԼՈՒԽ]

Եւ զիարդ եւթն զորոգայ եղեալ յաղաւթս, որ զեւթնաւրեայ արարչութիւնն նշանակէ. և զեւթն աւուրս կենցաղոյս՝ եւթնհազարեան դարուն խորհուրդ. և զքահանայական աղաւթան։

Զամենայն ի փառս Աստուծոյ տեսանեմք բարւոք գոլ, և ես պայծառագոյն զԱստուծոյ լոյսն զսահմանողն տունջեան և գիշերոյ, որով չարժին ժամանակք եւթնաւրեայ կենցաղոյս։

Ոչ աւտար, այլ Հոգւոյն սրբոյ իմաստիւք համարիմք յաւրինել երանելեաց հարցն մերոց Կանոն անուանել զեւթն զորոգայսն, այսինքն, իշխան գոլ համեստութեամբ ընդ յեւթն աւր շաբաթուն՝ մի միաւոր զորոգայ գոլով, որով քաղաքավարիմք ջանիւ ի վերինն հասանել ի փառս, վեցն՝ ըստ վեցից աւուրց տարժամանանց. իսկ եւթն՝ աւրն հանգստեան, յորում սուրբքն ճգնին պսակեալ ի Քրիստոս. և Աւտնութիւնքն՝ որ ի վերայ, Մարգարէիցն, զութերեակ աւրն, ութերորդ աւր Միաշաբաթին։ Եւ խորհուրդն որ ի նմա ութերեակ, և

8 Տես Ընդարձակ Բ Նախադրութիւն և Բ գլուխ, «Ընդէր եւթն զորդայիւք . . Ի հրաշակերտ փառադարդութեանն Աստուծոյ զամենայն բարիոք գոլ տեսանեմք, ես առաւել զերապայծառագոյն զնախեղեալն լոյս սահմանող տունջեան և գիշերոյ, որով այժմ չարժին ժամանակաց շրջմունքն»։

23 Մարգարէից Օրհնութիւնքը տես Ընդարձակի Ա Նախադրութիւն։

ի սկզբանն փրկութիւն աշխարհի այս յանգումն բերի աղաւթից մերոց [375բ] և ամենայն մնաւրէնութեան Քրիստոսի, զծնունդն և զմահն և զյարութիւնն. յայս բերէ առաջին ուշութիւն ութաւրեայ թլփատութիւնն սրբահամեան տաճրին, որպէս զի յետոյ լքանել զութնաւրեայ զմասծմունս երկրաքարշս՝ ի յութերորդն գալ Քրիստոսի յարութիւնն. յասացեալսն գնեմք և զքահանայիցն կատարումն ութաւրեայ առ դրունս խորանին գեղեցկալք. գոն և այլ տիպք ի յեւթնեկացդ, որ ի յութերորդն հանէ քրիստոսեան խորհուրդն։

Որպէս աւուրքն բաղարջակերաց կամ ի տաղաւարահարաց տաւնին զուշակումն, որ ի վերին ժողովէ խորանն։ Քանզի աստուածորդումն հետևմամբ ի լեառն բարձր առանձնանայն ընդ Երրորդութեանն փառաց։ Եւ եւթներեակն լինէր թողութիւն երրայական խորհրդոյն ծառայիցն և զեւղիցն։ Ըստ որում և որդի թագաւորացնոյն եւթերորդ ժամուն ապաքինեալ յախտէն. նման որդւոյն մեծի թագաւորին բժշկութեան։ Եւ ի նմին ժամու հինգշաբաթւոջ աւուրն ժողովլին ի սուրբ եկեղեցին որպէս ի վերին քաղաքին խորանն և արձակին երախայքն ի կապանաց բանտարկութին. և յութերեկին եղև նորոգումն յարուցեալ ընդ Քրիստոսի։ Այսոցիկ խոր[374ա]հրդազգած եղև եկեղեցի սուրբ, ըստ աւուրց շաբաթուց ի վեր ամբառնալ ի ժամանակի լրմանն, և բարեփառ հաւատով ի Քրիստոս պատուիրէ ամենեցուն զգուշութեամբ կալ ի կենցաղս և զչարչարանս Քրիստոսի ի մարմին կրել։ Արթուն և զուարթունք լինել առաջի նորա, մատուցանել բանաւոր պատարագ և հանդերձեալ փառացն արժանի լինել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտ[եանս]։

1 Չ. այս յանգումն բարբ. Յով. Իմ. 84. «Աստանօր յանգումն բերի»։ Այսպէս և Սիւնեցին՝ Ընդարձակի մէջ։

## [Դ ԳԼՈՒԽ]

Աւհնութիւն երից մանկանցն նշանակէ զյարութիւնն Քրիստոսի, որով նախահաւրն փրկութիւն եղև. և Աստուած յաւիտենից՝ որ զամենայն հաստատեաց զերևելի և զաներևոյթ բնութիւն արարածոց զոր բանիւ գոյացոյց յոչնչէ, իսկ զմարդն՝ զթագաւորական պատկերն՝ ստեղծ ի պատկեր Աստուծոյ տէրութեանն, ձեռաւք ստեղծմամբն առաւել մեծարեաց, և ի տէրութեան փառս եհան, որ է նմանութիւն և պատկեր Աստուծոյ. սակս որոյ հրամայէ արժանապէս քաղաքավարիլ. Ինքնայաւժար կամաւք ըմպէ զբարին և վայրանկեալ չարին խաբմամբ, զանհաս բարձրութիւնն Աստուծոյ կամեցաւ յափշտակել, յորում անհանդուրժելի աղէտք ի վերայ հասանեն նմա. զի սիրտն ընկալաւ փափականաւք[1] զխրատ չարին, և քարշեալ իբր շղթայիւք ի խորս անգիտութեան, աստուած ինքեան առնել զկործանիչն իւր, և զարտաքին ժառանգէր զխաւարն, և ընդ մահու կորստեամբ զրաւեցաւ։

Եւ Հայր յաղթեալ մարդասիրութեամբ և ոչ ժուժեալ աղէտիցն, այլ ընդ յառաջ գնաց զթութեամբ քաղցրութեանն և գիրկս արկեալ համբուրէր զ[ի] խոզաշաւիղ կամոլութենէն դարձեալն։

Պատմուճան փառաց և մատանի հրամայէ զգեցուցանել. նորոգել զմարդն ծննդեամբ Որդւոյ իւրոյ ի սուրբ կուսէն, զի անգործ լիցի չարն, ոչինչ գտեալ ի յիւրա-

1 Տես Ընդարձակ Գ Գլուխ. «Աստուած յաւիտենական որ զամենայն հաստատեաց զերևելիս աստ և զաներևոյթ բնութիւնս, զոր բանիւ գոյացուցեալ ուսուցանեն մեզ գիրք յոչնչէ իսկ զթագաւորական զպատկերն յետոյ ի պատիւ ինքեան տէրութեանն ստեղծանէր ձեռաւք»։

21 Յոհ. Իմ. 86. «զդարձեալն ի խոզագնաց շաւղէ կամօլութենէն» Սիւնեցին՝ Ընդարձակի մէջ,– «զդարձեալն ի խոզաշաւիղ կամօլութեանց»։

յոցն ի հողեղէնս. ապա զմեծն զանպարագրելի եղեն տայ ի զենումն, որով կոչէ ի հարսանիսն զտիեզերս։

Եւ համապազ տաւնէ զծննդեան խորհուրդն և զյարութեան և մի անգամ ի տարւոջն զխակականն հառաչելով։ Արդ տաւնէ եկեղեցի համապազաւր զփրկութիւն Ադամայ, զոր արար Միածինն նախ արուին ի ձեռն քաղդէացւոցն կործանմանն։ Եւ երից մանկանցն փառակցութեամբ Որդւոյն Աստուծոյ, վասն զի այր գլուխ է կնոջ։

Իսկ «Աստուած քաւեայն», պաղատանաւք խոնարհութեան ամենայն քրիս[375ա]տոնէից յաւուր աղուհացիցն և յամենայն չորեքշաբաթ և ուրբաթ պահոց և աղաւ[թ]ք համապազաւր։

«Ողորմ[ե]այն», աւրինակ ազատութեան կնոջն զլորելոյ և խոնարհութեամբ կուսական ծննդեամբն շնորհելով ազատութիւն իգին, ոչ անաւրէնութեամբ յղանալ և տրտմութեամբ ծնանել որդիս յանէծս։

Զի լուծաւ դատապարտութիւնն կուսին ծննդեամբն, և ամենայն պատճառք անիծիցն լուծան մահուամբն Քրիստոսի և յարութեամբն. զորս ընդ Նմին յարոյց ի թաղմանէ մեղաց, որք ընդ Նմին մեռաք մկրտութեամբ, և Նոքա համարձակեալ ասեն թէ ընդ յաջմէ Հաւր Նստաք պատկեալք. զայս տաւնէ եկեղեցի. և միւս՝ վասն Եւայի զորդեգրութիւնն ընդունել մեզ. այսքան իրաւքս ի Քրիստոս միացեալ, անխոնարհելի կալ սրբութեամբ։ Երեք «Աստուած քաւեա՝ ասելով, զիս զմեղաւորս», սուրբ Երրորդութիւն ջնջեա զմեղս մեր։ Իսկ յամենայն միաշաբաթուջ զմեր փրկութեան զաւրն տաւնեմք. ի միաշաբաթն «Մեծացուցէին»,յԱ՟ածածնէն՝ Եւայի աւետիք, և Ադամայ կենդանութիւն, զսուրբ կուսին ասի զոհութիւն, լի՛ ուր[375բ]ախութեամբ ասելով, «Ցընծացէ հոգի իմ յարքայութեան քում»։

Իսկ մարգարէական հոգւով աղաղակէ, «Արի Տէր»

30 Ղուկ. Ա. 46.
32 Սաղ. ԽԴ. 27.

ի ծոցոյ Հաւր ի փրկութիւն մեզ. և մի թողուր խաչա զերբուածայքս, և «Տէր յաւել [ի]նծ փութա»։ Իսկ «Արի Տէր» ասելով, զահաւոր զատաստանէն նշանակէ. միաբան ի գէմս մարմնացեալ Բանին ասեմք զյատնելն և զնըստելն։ Իսկ «Թագաւորեաց Տէր» ասելով, երանի որ յուսա ի նա. յայտ է թէ, «Զամենայն [ի]նչ հնազանդ արար [ի] ներքոյ ոտից նորա» և «զգեցաւ վայելչութիւն». զարգարումն ասէ և զաւրբ կուսանան և զճշմարիտ հաւատացեալսն և զկրաւնաւորսն և զարեամբ սրբեալ նահատակսն միացեալ ի սէր քաղցրաբարին Աստուծոյ։ Արդ կանայք որ առաջի խաչեցան հեղգացեալ ի մեղս, այ[յ]ժմ զգաստացեալ ի ձեռն յարութեանն Քրիստոսի, լինին նախառաջք և քարոզք յառաջ քան զառաքեալսն, «Զի ուր առաւել եղեն մեղքն, առաւելան շնորհքն»։ Կամ քաո Աւետարանին զալ բարեկամին և խնդրել երիս նկանակս, որ զերրորդութիւնն նշանակէ, շարժել յողորմութիւն եղ ի յոյս. և եթէ, «Մի[376ա]ելին իմ ի ակզանէ», և սրանի աւետարանէ զփրկութիւն զաւանել և զցնծութիւն։ Երկու Աւետարանն՝ զատափաց ունի զուրիանկ և զհանդերձելոցն։ Եւ ասոյց ցուցանէ աւետարանիչն զյարութիւնն Քրիստոսի, և զվէմն՝ ուր եդաւ տէրն. և յամուկ լցին հերձուածողքն և անհաւատքն. և ապա ընկալեալ զլոյս մեծ զխաւսթեան քարոզութեամբ Աւետարանին, որպէս յԱստուծոյ վկայեալ զուարճացեալք յարախութիւն փառացն. հանապազ զախորժելի զԱւրհնութիւն երից Մանկանցն, հրաման տայ նստելոցս ի խաւարի անգիտութեան զալ առ լոյսն ճշմարիտ, և զաւրբ ձեռս համբառնալ առ փրկիչն Քրիստոս։ Եւ երկրորդ Աւետարանն զմիւանգամ զալստեանն ունի ցուցումն. զի կարկին

2 Սաղ. ԿԹ 1, Ընդարձակի մէջ, «Տէր յաւգնել ինձ փութա».
4 Զ. մարմնացո.
6 Սաղ. Ը 7.
7 Սաղ. ՂԲ 1.
13 Ա. Հռով. Ե. 20,
24 Բզ. Զուարճացեալքս.

բերանք անհաւատից, որք ոչ հաւատան յարութեան մեռելոց։ Իսկ շարժել Սուրբ Նշանին և գնալ ի գերեզմանն, որ առաւել քան զայլ աւուրցն կատարին, և Աւրհնութիւն Դաւթի՝ առ եկեղեցիս, աւրհնութիւն է գերեացն, որք դարձան ի Բաբելոնէ, և ժողովեցին զաքարածս, և յերկինս եդ յերկիր, և գոհացան զԱստուծոյ. և գոհութիւն հեթանոսաց, որք արձակեցան ի կռոցն։ Եւ փոխն «Աւրհնեցէք զտէր յաւրհն[576a]ութիւն նոր» և «Ուրախ եղիւ խորայէլ յարարիչն իւր» զոր Պենդակոստէին ասեմք ի խորհուրդ Հոգւոյն, յորում առաքեալքն ընկալան զփչումն Հոգւոյն սրբոյ, զոր Ադամ հեռացոյց ի մարդկանէ։ Եւ երրորդ փոխն՝ զճշմարիտ պատկեր մեծի աւուրն անստուերի՝ «Աւրհնեցէք զԱստուած ի սրբութեան նո[րա]», յանանցանելին բերի խորհուրդս։ Եւ «Փառք ի բարձունս» զանտի կենացն և մարդկան դասակցութիւն սուրբ Երրորդութեանն։ Զայս եկեղեցի տաւնէ ի ներկայս զմնաւրէնութիւնն Քրիստոսի. և որ առաջնորդն լինի բարձրագոյն փառս տուեալ խորհրդոյն Իմաստնականն զոչէ «Առաւաւտուն երգ», որ զաւուրն ցուցանէ զխորհուրդ։ Եւ զբարոզն զգոհութիւն ծաւալեցուցանէ, և աղաչէ զՀայրն ամենակալ, որ սքանչելեաւք պահէ զազգս մարդկան, և ամենայնի յաղթող արժանաւորեսցէ. և պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ մինչև ի գալուստ Որդւոյ իւրոյ։ Եւ քահանայն մատուցանէ զաղաւթս ժողովրդեանն առ Աստուած, հաստատուն լինել ի կամս պատուիրանին, առաքելական խաղաղութեամբ վայելել ի կենցաղս, և լինել տաճար սուրբ Երրորդութեանն, և փառս տալ միածնի Որդւոյն աստուծոյ։

---

8 Սաղ. ճԽԹ.

12 Երրորդ փոխն Սաղ. ճԾ. Օրհնեցէք զ՟ած ի սրբութեան նորա։

19 Թերևս՝ կոչի.

27 Ա. վայելեա.

[Դ ԳԼՈՒԽ]

Իսկ ի դէմս մի[377ա]ածնի Որդւոյն աստուծոյ կոչիմք այն՝ որ յառաջ քան զյաւիտեանս ընդ Հաւր և սուրբ Հոգւոյն՝ ի լրման ժամանակի մարդ եղև ի կուսէն, վասն փրկութեան մարդկան։ Խաչեցաւ վասն մեր և թաղեցաւ և յարեաւ յերրորդ աւուր, և վերացաւ յերկինս, և նստաւ ընդ յաջմէ ծնողին իւրոյ։

Եւ յառաջ զուշակեաց Մովսէս ոչխար զենուլ ընդ երեկս, որ ի լրման ժամանակի մահն Քրիստոսի է. և զառն առաւաւտուն աւրէնս դնէ և երեկուն։

Արդ՝ այս է յաջողակ սրբոցն Առաւաւտուն ասել «Սուրբ Աստուած որ խաչեցար» և Երեկուն, որ է ճըշմարիտ խոստովանութիւն հաւատոյ. ոչ որպէս անիծեալն Նեստոր, և աստուածուրաց Քաղկեդոնի ժողովն, որ փոխանակ խաչեցար ասելոյն ըստ առաքելական և մարգարէական քարոզութեանն, ասացին «Սուրբ Աստուած որ մարմնով խաչեցար», և այսպիսի յոլովք հայհոյութեան բանք, որ կայ ի նոցա ամբարշտութեան կտակին, զոր նզովէ սուրբ եկեղեցի. որ հաստատուն հիմամբք ի վերայ աստուածային վիմին շինեալ է։

Արդ՝ զայս գիտացեալ առաքելական սուրբ եկեղեցի յառաջագոյն՝ յիրաւի ասէ, «Սուրբ Աստուած, սուրբ

---

2 Տես Ընդարձակ Դ գլուխ «Թէ որպէս պարտ և պատշաճ է իմանալ զՍուրբ աստուածն և զՄանկունսն։ Յետ այսորիկ... ոչ զոչին ի դէմ սրբասացութեան. այլ ի դէմս միածնին միայնոյ Որդւոյն աստուծոյ. այն որ յառաջ քան զյաւիտեանս էր ընդ հաւր և Հոգւոյն սրբոյ։ Յետին ժամանակս մարդ եղեալ ի սրբոյ կուսէն յաղագս զմարդն փրկելոյ. խաչեցաւ վասն մեր և թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի, և վերացաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ հաւր իւրոյ ծնողին։

10 Ելք. ԻԹ 39.

եւ հզաւր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»։[377]

Զի Աստուած էր Բանն, որ ի կուսէն մարմնացաւ. և հզաւր էր, որ յաղթեաց երկրորդ Ադամ բանսարկուին. և անմահ, որ անմահացոյց զմեզ մարմնովն, անմահ և անապական Բանն աստուած. արդ երից ասելով «Սուրբ Աստուած», զՀաւր և զՀոգւոյն սրբոյ զկամս միութեան ընդ Որդւոյ ի խաչին ծանեաք խորհրդաբար՝ ասելով, «Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ», կամաւք Հաւր և սուրբ Հոգւոյն վասն աշխարհի կենաց։

Արդ հոգևորապէս ծանուցեալ զխորս պատուիրանին մտացն՝ կեցցուք. և զլոյս արեգականն՝ իբրև զլոյս աւուրցն, զոր և կատարեալ մտաւք սուրբքն ի ծագել արեգականն Քրիստոսի, զոր և այժմ տեսանեմք զորդիս աշխարհիս, ընդ ծագել արեգականն ընդ հրեշտակս դասակցեալ։

Նաև զհաւուցն ևս ի տարափ առաւաւտուցն ճրոուողեալ ի ձեռն հովուապետին աւրհ(ն)ել զարարիչն. յորոց Քրիստոս առնու զաւրհնութիւն ի ձեռն քահանայիցն ծագել զլոյս ամենայն աշխարհի ողորմութիւնն Աստուծոյ, ըստ Յոհաննու ի կաթուղիկէսն ասելով, թէ «Տեսանելոց ենք զնա որպէս եւ էն իսկ, եւ նման նմա լինելոց ենք»։

Այսու զմեծագոյն խորհուրդն ասէ, ի վեր ամբարձեալ ի սուտ[378]րնայնոցս Նախերգանին. Ե. Սաղմոսն զհինգ զգայարանս նշանակէ։

---

8 Զ. յորդւոյ.

18 Այս հատուածը օրինակներում աղաւաղուած է այսպէս, «Նա և հաւատոյն տարս փառաւոր տաւն ճռուողեալ». եղածը առանք Ընդարձակից։

24 Ա. Յովհ. Գ 2.

[Ե ԳԼՈՒԽ]

*Թէև Տէրն ի մէջ գիշերի առաց. նա է առաւաւտ կենաց և սկիզբն երևելոյ արեգականն արդարութեան. և զի յայսմ առաւաւտու ժամու լինի նորոգումն տիեզերաց, և լինի յառաջի ժամու մեծի աւուրն, վասն զի յայս ժամու ստեղծ զմարդն կենդանարար ձեռաւքն և ի նմին ժամու ընդունի զմիւսանգամ կենդանութիւնն, այսու խորհրդով վարին բազումք այժմ, որպէս Պաւղոս ասէ, թէ «Փող հարկանի եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն». և սուրբն Գրիգոր զարնայնոյն հաւուցն հընչման, և բուսոցն և տնկոցն բողբոջումն։ Եւ հաւուցն ձայնքն առաւաւտուն նման զալստեանն տեառն։ Վասն այսորիկ պարտ է զգուշութեամբ աղաւթել ի ժամուս յայսմիկ և յուսով ակնունել նորոգման միւսանգամ։ Եւ նախ [զ]գենուլ լուսոյն զուարթաթուիչ ճեպին ամպաւք ի հանդիպումն Աստուծոյ՝ որում փառք յաւիտեանս։*

[Զ ԳԼՈՒԽ]

*Պատասխանի, Խորհուրդ մեծ և ի վեր քան զկար մեր, բայց զաւրութեամբն Քրիստոսի կարեմք ուսանել,*

---

*1 Տես ընդարձակ Ե գլուխ, «Հարցումն Երկրորդ ժամուն, եթէ զինչ է առաւաւտուն աղաւթքն ընդ որս արևագալն կատարեմք։ Այս խորհուրդ . . . զի յայսմ ժամու առաւօտու լինի նորոգումն տիեզերաց. թէև ասի ի մէջ գիշերին՝ ըստ տէրունական բանին, այլ նա է առաւաւտն կենաց և սկիզբն երևելոյ արեգականն արդարութեանն, և լինելոց է յայն առաջին ժամու յայտնութեանն մեծի»։*

*9 Ա. Կորնթ. ԺԵ 52.*

*18 Տես Ընդարձակ Զ գլուխ «Հարցումն Երրորդ ժամուն, թէ որպէս է Երրորդ ժամու աղաւթքն խորհրդաբերին. Պատասխանի։ Խորհրդաբերումս այս մեծին է խորհուրդ և ի վեր քան զմեր կարողութիւնս, բայց ի վերայ Յիսուսի Քրիստոսի կրիցն և ի ներգործութեանցն կարեմք ուսանել»։*

զոր կատարեաց Քրիստոս վասն մերոյ փրկութեան կենդանարար չարչարանաւքն իւր ըստ Մարկոսի աւետարանչի,[578a] «Էր ժամ եր[ր]որդ եւ հանին զնա ի խաչ». զի յայսմ ժամու գերեցաւ Ադամ ի բանսարկուէն, մոլեկան ընթացիւքն ի ծառն մահաբեր ի չար խորհուրդն, յորում Էմմանուէլն մերով կերպարանաւքս զծանրութիւն մեղաց մերոց բեռնաւորեալ, ի նոյն ժամուն ի տեղի կառափման բարձրանալ ի խաչափայտին, զի զանկեալն վերացուսցէ բեռնելովն զոտս և զձեռս ապաքինարար տարածեալ յաղագս Ադամայ յանդգնաբար ընթացիցն ի պտուղն և ի ճաշակ ծառոյն։ Եւ զձեռագիր յանցանաց նորա պատառեաց. և տարերցն ողականութիւն, որ յայսմ ժամու աւձաջան պտղովն զրգեաց, խաղաղացուցանէ իւրով մաքրողական չարչարանաւք։

Իսկ Յովհաննէս «ժամ վեցերորդ» ասելով, ոչ զխաչ ելանելոյն ասէ, այլ զժամ ձաղանացն որ ի հրէիցն ըմբռնեալ։ Բայց ի խաչն յեր[ր]որդ ժամուն վերացաւ՝ ըստ Յոբայ, «Բազէն տարածեալ զձեռս իւր դիտելով ընդ հարաւ» յափշտակել զմարդն ի կապանաց մահու ի կեանս. ապա յայսմ յոբելինի ի նոյն աւրինակ աւուրն. յերրորդ ժամու տեսանեմք զհոգին սուրբ յառաքեալսն հրեղէն լեզուաւք. սակս այսմ ամենայնի ասեմք, ի յայսմ եր[ր]որդ ժամու զլորեալ զմարդն առ[579a]աջին յորում և զբարեգործութիւնս ընկալաւ։

Ապա յիրաւի պատկեր առեալ ի յայսմ ժամու ազաւթիցն, խնդրելով զհոգին սուրբ առաջնորդ լինել ի յերկիրն բարութեան, ըստ որում միածին Բանն ի նոյն յեր[ր]որդ ժամու ծագէ յարարածս զգալուստ իւր։ Զորս մի ոք անմասն եղեալ ի փրկութենէն զրկեսցի։

---

3 Մարկ. ԺԵ 25.

15 Յովհ. ԺԹ 14.

18 Յոբ. ԼԹ 26. «Բազէ տարածեալ զթևս, անշարժ դիտել ընդ հարաւ».

## [Է ԳԼՈՒԽ]

Եթէ զի՞նչ իմացուք զյարութիւն Տեառն, և յերրորդ ժամու զգեստաւորեալ քահանայապետին, և անփիան որ ի ձեռին. և Տէր թագաւորեացն. և Աւետարանին համբարձումն. և Սուրբ Աստուածն. և Քեզ վայելէն. և Մարգարէականքն. և Մեսեդին. և Առաքեալն. և Ալէլուն. և Աւետարանն. Հաւատամքն. և սուրբ խորհուրդն՝ որ ճաշաժամն կոչի։

Ամենայնն քրիստոսաւանդ հանդերձեալքս այսոցիկ խորհուրդ առ ի մէնջ պաշտեցելոյ կարապետ և ստուեր գիտեմք գոլով զառ ի Մովսէսէ հրամայեալսն ի հնումն. ոչինչ ընդ վայրաքարշ և յերկիր կոխելի, այլ «ի վերայ ուսոց բարձեալ բերեմք» ըստ Եսայեայ ասելոյն երկնաքաղաքացւոյն խոհերս, որ ըստ Մովսէսեան կարողանան առնուլ զմեծ պատիւ քահանայութեանն. Նախ զանձին զգեստաւորել Աստուծոյ արժանաւորին, ապա զայլսն ըմբռշխնել. որպէս երջանիկն [379] Մովսէս եղև Նախատես զիմանալի խորանին փառաւքն. և զգեստ քահանայութեանն պճղնաւորն առ ստորոտով զանկակաւքն. և վակասն չորեքկարգեան ակամբք ի յուս քահանայապետին։

Արդ՝ զպճղնաւորն ագանելով Ահարոնի, նախ զմարմնանալ Բանին Աստուծոյ նշանակէ ըստ Եզեկիէլի, «Արք վեց գային եւ ի մէջ նոցա այր մի որ զգեցեալ էր զպճղնաւորն», որ է Քրիստոս. իսկ վեց տապար ի ձեռին ունելով՝ հին և նոր Կտակարանք. որ կատարեցին և

1 Տես Ընդարձակ Է գլխի Նախադրութիւն և Է գլուխ։ Եթէ զինչ աւրինակ իմացուք ի մեծի աւուր յարութեան Տեառն յերրորդ ժամու զգեստաւորեալն քահանայապետին, և ամփիոն որ ի ձեռին ունի . . . . «Արդ ամենայն քրիստոսաւանդ հանդերձեալքս այսոցիկ խորհուրդս ի մէջ պաշտեցելոյ կարապետ և ստուեր գիտեմք գոլով».

12 Եսայ. ԽԶ 7. «Բարձեալ բերէք ի վերայ ուսոց».

24 Եզեկ. Թ 2.

բարձին զդայթակղութիւնս յերկրէ ի ձեռն խաչազգեաց մարմնացելոյ Բանին Հաւր զբոլոր բնութիւնս, զոր հրաման ետ Աստուած Մովսէսի առնել հանդերձ քահանայութեան պայծառս և գեղեցիկս, զի զգեցցին Մովսէս և Ահարոն զանձամբ իւրեանց, յորժամ եմանիցեն առ Աստուած և աղաչեսցեն վասն ժողովրդեանն։ Զի Ահարոն աւրինակ էր Քրիստոսի, նա զկերպարանս ունէր զՔրիստոսի, և Քրիստոս զճշմարիտ աստուածութեանն իւր. զի որպէս զգենոյր քահանայն զհանդերձ վակասին, այսպէս զգեցաւ Տէր մեր զմարմին խոնարհութեան. քառանիւթեայ կապուտակովն, երկնից և երկնաւորաց նմանիլ առաքինութեամբ. իսկ ծիրանեաւն ծովածին, թագաւորապէս զգեստաւ 380ա որել զմեզ զերկնաւոր թագաւորին Քրիստոսի. Իսկ կարմիր մանեալ, հաստով զմեզ իւր մարմնով և արեամբն հաւատարմացուցանէ ընդ ինքեան անքննելի աստուածութեան իւրոյ. և բեհեզ նիւթով, որ է վուշ, ի յերկրէ, Քրիստոս ի կուսէն զգեցեալ զմարմին երկրածին անճառապէս, ոսկեհուռն ծիրանազոյն զարդարեալ գեղեցկապէս. ոսկեճաճանչ աստուածութիւնն Քրիստոսի միացեալ ընդ քառանիւթ մերունակ բնութեանս, և միացոյց ընդ իւրում աստուածութեանն էմմանուէլն. զայսոսիկ զանեալ քահանայապետին մերոյ յանապատին մարդկութեանս՝ յուս իւր յեռոյր, չորեքկարգեան աւետարանաւ մտանել յանձեռագործ խորան սրբութեան. ակնակապ վակասիւ, որ աւրինակ էր երկոտասան առաքելոցն. մոլորեալ ոչխարաւն, ցուցանէ մեզ Տէրն յինքն բարձեալ զբոլոր մեր բնութիւնս, ունելով ի մտի զտախտակս զատտասանին երկու ակամբք՝ յանդիմանութեանն. և ապա արկցէ զբանակ զատտասանին զպարանոցաւն Ահարոնի հանդերձ երկոտասան ակամբքն, զի իցեն մերձ առ սրտին. այս երկոտասան առաքեալքն են, որ միացան կապեցան ի սէր սրտին Քրիստոսի մեծի քահանայապետին, որ երարձ զդատապարտութիւն մեղաց մերոց, 380բ և բեւեռեաց զնա ի մարմնի իւրում, առեալ ի ձեռն

զմոլորութիւն սրտից մերոց, բաղկաւ ժողովէ զծանրացեալն մեղաւք առ Հայր մատուցանելով մաքուր։

Արդ Անհարոն ի սիրտն յանջացն ունէր զյանդիմանութիւնն, վասն զի ոչ կատարումն գործէին աւրէնքն։

Ասաց Աստուած, արասցես դու քեզ զրանակս դատաստանի, և դիցես ի նմա ակունս ըստ ցեղիցն Իսրայէլի. և գրեսցես ի նմա զիւրաքանչիւր անուանս նոցա, զի զգեցցի քահանայն զանձամբ իւրով։ Այլ տէր մեր Յիսուս ունու ի ձեռն զյանդիմանութիւնն և զճշմարտութիւնն, և նշան յաղթութեան՝ զքաջութիւն ինքեան զնոյն մաքրապէս բերելով խորհուրդ, յիշատակաւ խաչին հարեալ զպատերազմ։ «Եւ դիցէ զխոյրն ի վերայ գլխոյ իւրոյ»․ այս անքննին աստուածութիւնն Քրիստոսի է։ «Եւ զթիթեղն ոսկի ի վերայ խոյրին ի ճակատու կողմանէ»․ ոսկեգոյն թեթեղունք՝ որ է պսակ պարծանաց ի գլուխ քահանայապետին Հոգւոյն սրբոյ շնորհաւք՝ զխաչակցելոյս ընդ Քրիստոսի ի վեր տանելով ի հայրական խորան փառաց, որպէս մոլորեալ ոչխարաւն ցուցանէ Քրիստոս ինքեան բարձեալ զբոլոր բնութիւն մեր։ Ի ձեռին ունելով զանփիոն, խորհուրդ երկաղնի յաղթութեան 581ու կնիք՝ ըստ Սիմոնի, «զմինն ի գլորումն. և զմիւսն ի կանգնումն», զմեղաց ասեմ և զարդարութենէ ի մէջ կատարումն. այլ ամաւթալից պտղոյն ճաշակումն զոր ձեռամբն առեալ ի ձեռոյն ի սիրտն ընդունէր զմահն։ «Եւ ի վերայ յանջաց Անհարոնի կայր». եկեալ ի տաճարն սուրբ ի մեծն Սիոն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յաղագս արմատաջինջ առնելոյ առնոյր զճշմարտութեան և զյանդիմանութեան նշանն յաղթութեան, որ կոչի ըստ մերում լեզուի՝ կնիք, և ըստ եբրայեցւոցն՝ անփիոն․ զոր ունի քահանայապետն ի

5 Համմ. Ելք ԻԸ 9—12.
12 Ելք. ԻԹ 6.
20 Համմ. Հայկ բառ «Երկաղնի».
21 Ղուկ. Բ 34.
25 Ելք. ԻԸ 30.

ձեռին իւրում. անդ յանդիմանութիւն և ճշմարտութիւն և մեղք ժողովրդեանն և արդարութիւն ի տախտակին գրեալ։ Իսկ մաքրութեան ցուպն ի ձեռին անփիոն՝ յիշատակ չարչարանաց։ Անդ ի ծուխս ձորձոցն և ի գրապանակ ունէին զյիշատակս ելիցն՝ զաւրինակ խաչին, որպէս և գրեալ է, «Նշանս մեր է, և մեք ոչ տեսաք». իսկ աստ ի սրտի և յոգւոջ և ի գլխում, զորով փարեալ և ի նոյն միացեալ քրիստոնեան քահանայապետս ի ձեռին ունելով զաստուածեան Նշանն յաղթութեան, յորժամ մատնիցէ ի սրբութիւն սրբութեանցն պատարագել զՔրիստոս յիշատակաւ չարչարանաց բառնալ զմահ։[581բ]

Արդ ցուցանէ յորժամ քահանայապետին առեալ ի ձեռն զյաղթութեան Նշանն Քրիստոսի զփրկական կատարէ զխորհուրդն. վասն զի Ահարոն վեր ի վերոյ ունէր զնշանն կենաց և մահու՝ մտեալ ի սրբութիւնսն. անդ մահ ի վերայ լանջացն Ահարոնի կայր, նշխարն չարութեան աւձին պատրուակեալ. իսկ աստ Քրիստոսիւ վերացաւ չարին պատրանքն։

Եւ քահանայութեամբն ի մի հաւաքեալ զհին և զնոր քահանանութիւնս, զորս միմեանց համեմատեմք զխորհուրդ քահանայութեան։ Իսկ աստուածորդին եկեալ ճշմարիտ քահանայապետ խոստովանութեան մերոյ, և մատուցեալ զինքն պատարագ յաղագս աշխարհի կենաց։

Իսկ «զանկակն ի ստորոտն» արծաթի նռնաձև ի հանդերձին՝ և լուսապայծառ քարոզութեանն ծաւալեալ, և զոչմամբ հնչեցեալ ընդ տիեզերս յառաքելոցն։ Իսկ վակասն քառանիւթեայ յուսն բարձեալ, աստուածութիւնն ընդ քառանիւթ բնութեանս միացեալ։ Անդ պճղնաւորն աւրինակ, և աստ քրիստոսազգած խորհրդածու։ Անդ վակաս ակնաշար յուս քահանայապետին,

---

6 Սաղ. ՀԴ 9.

25 Ելք. ԻԸ 33—34.

25 Զ. առնաձև.

տատ Նափորտ [382ա] սրբութեան խաչազգեցիկ ժողովըրդեան Քրիստոսի։

Ասէ Տէր ցՄովսէս, տեսցես զամենայնն, որ «Ցուցաւ քեզ ի լերինն» ամպանման խորան նոր, որ կանգնեցաւ ըստ աւրինակի եկեղեցւոյ քառանիւթեայ՝ ի կապուտակէ, ի ծիրանւոյ, կարմիր մանելոյ, որպէս հանդերձ քահանային ի չորից նիւթո[ց]։

Բեսէլիէլ որդի Ուրիայ յազգէ Յուդայ, և Եղիսամ որդի Աքիսամայ յազգէ Դանայ՝ խորանն նկարակերտ աստղազարդ՝ աւրինակ մարմնոյն Քրիստոսի, զնիւթն յաւրինէին սրբապէս, զոր մեք տալով շնորհ բանիս սակաւիկ մի յայտ արասցուք։

Ծարխս սեանցն արծաթի յերկու կողմանց՝ երկու թաթք ոտից Փրկչին. ութ սիւնք՝ զաստակք ոտից և ձեռաց Փրկչին. ցիցքն պղնձի՝ ոսկերքն. երկու սփռիչն ի միում սիւնակ ագուցեալ ընդ միմեանս՝ ծունկքն. խոյակքն ոսկի՝ պճեղնն. վիճակ խորանին կարմիր մորթ խոյոց՝ առնացի անդամք պնդութեան առաքինութեանց. զառանցքն և տախտակքն նորա՝ քայլափոխքն. զահաւորակ վարդակապ պղնձի՝ կողքն. աւդամանեակ զահաւորակին՝ անուրքն և ականջքն. վակասն՝ թեզանիքն. եղջիւրք սեղանոյն՝ երկու բազուկքն. մա[382բ]հանն և տաշտն պղնձի՝ մատունքն և ձեռքն. աջոյ երին՝ աջ բազուկն։ Դաբիրայն՝ բոլոր գլուխն. վերնափեղկն՝ մազեղէն մորթն գլխոյ մարմնոյն և գլխոյ ճակատն. յիսուն ճարամանդք կապուտակ խառնուած ողինն՝ յիսուն աւդ ոսկի. ողնն, պուղնարդն՝ անդամքն. վահանքն՝ այտքն. ճաշակքն՝ ագիքն. նուիրանոցն ոսկի՝ քաղիրդն։ Զանկակն ոսկի՝ լեզուն. բոլորակն նռնաձև ծաղկեալ՝ երեսքն. արիւնն սրսկեալ՝ երակքն. նիզ մի թափանցանց՝ ամանք կերակրոցն. կամարքն՝ կցումն ոսկերացն. թիթեղունք ոսկի՝ կապքն. երկու ակունք զմրուխտ՝ երկու բիբք աչացն։ Ապարաշ քահանային՝ յաւնքն. դրունքն՝ բե-

---

3 Ելք. Իե 40.

բանն. սրահակք գրանն ի. ՟դ. Նիւթոյ որպէս խորանին՝ շրթունքն. ստեղունք աշտանակին՝ Թուշքն. վարագոյր տաճարին՝ կուրծքն. երկու կողակք քարեղէնք՝ երկու կզակքն Տեառն. երկու քրոբէքն՝ մուրուքն երկու կողմանց աստի և անտի, նոյն անդամքն երկու. մի անիւ և մի կոնք՝ բոլոր անդամք մարմնոյն. կողակքն՝ երկու ուսքն. արտախուրակն ի վերուստ [385ա] կապուտակ ծիրանի՝ գոյն մարմնոյն. պատրուակ վարագուրին՝ մորթն։

---

2 Հմմտ. Հայկ. Բառ «Թուշ».

8 Ա օրինակը (ճառընտիր) ունի այս ուղղագրութիւնները,— է՟. աւր, է՟աւրեա, է՟, ո՟, է՟գորոզա, ՟դ, ՟ընրեակ, է՟եկացդ, երկնաքաղաքացոյն ներքո, գիշերո, սրբո, որո, խւրո, գլորելո, հաւատո, ծոցո, եկեղեցո, նիւթո, աջո, հոգոյն, ա՟ծորդոյն, հինգշաբաթոջ, ի տարոջ. յոգոջ, քառանիւթեա, գորողա, ուխտօրեա, Յոքա, կա, ադամա, տա, ի վերա, ունջեան, անուանեալ, պատրուակ, տրւչուի՟, բանսարկուին, պատուիրէ, զւարթունք, արւին, մահւամբ, զւարճացեալ, գոխն, երրաական, մարգարէից, քրիստոնեից, թե, գործեին, որպես, բարիոք, սքանչելիւք, ստիւդ, անդի, ներկեայս, զգէնուլ, ծունգ, ամբօք, են։

«ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏՃԱՌ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ»

Վէմ անսասան և անկոփ եդեալ ի հիմունս, կանգնեալ ի մէջ Խորանին ի տեղւոջ Սեղանոյն՝ աւրինակ է հոգևոր վիմին, որ կանգնեցաւ ի գողգոթա տեղւոջ. և երկոտասան քարինքն՝ Առաքեալքն, ոչ կրթեալք մարդկան արուեստիւք հեշտիւք, և ոչ խրատեալ աւրինաւք դպրութեանս Իսկ լուացեալ և ածեալ և եդեալ ի չորս անկիւնս. վասն զի նախ մկրտութեամբ և հոգւով մաքրեցան ածեալ, և ապա եդեալ ի կաթողիկէ եկեղեցւոյ հիմն: Իսկ երկոտասան քարինս հաստատեալս ի չորս կողմանս եկեղեցւոյ՝ խորհուրդ մարգարէիցն, ըստ խրատու իմաստուն ճարտարապետին, թէ, «Շինեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից եւ գլուխ անկեան Քրիստոս»:

Իսկ ի նաւակատիս եկեղեցւոյ դնի Սեղան ի մէջ Խորանին. և եպիսկոպոսն քահանայիւք և սարկաւագաւք կան առաջի բեմբին, բայց ժողովուրդն արտաքոյ կան.

---

4 Բ սեղանին.
5 Բ պատարագեցաւ.
6 Բ կրթեալ մարդկան հեշտիւք.
9 Ա մաքրիցեն.
11 Բ հաստատեալ.
12 Բ եկեղեցւոյն.
13 Եփ. Բ 20.
16 Բ սեղանն սուրբ.
18 Ա կայ.
18 Բ բեմին.

և սկսանի եպիսկոպոսն «Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո»: Եւ կարգացութիւն մարգարէութեան՝ յառաջ գուշակումն մարգարէից վասն եկեղեցւոյ։ Իսկ Դանիէլի խոստովանութիւնն պաղատանաւք [Աղօթք Դանիէլի մարգարէի «Տէր Աստուած մեծ»]. այս մաղթանք հրեշտակաց և խոստովանութիւն մարգարէից, որք հեծեծանաւք գոյժս ողբոց արտասուաւք հեղուին առաջի արարչական գթութեանցն, որպէս յիւրաքանչիւրսն տեսանի։ Վասն որոյ Թագաւորն ամենակալ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ [ի] փրկութիւն գերելոցս, որ արար խաչիւն։ Այս է, զ՚Վէմն յարտաքս հանելն. զայն առ մեզ Քրիստոսի խոնարհութեամբ։ Երեք սաղմոսք, Երրորդութեանն խորհուրդ։ Առաջին կցուրդն «Լուր մեզ տէր». այս՝ աղաչանք մարգարէիցն. որպէս ասէ, «Յաղագս տառապանաց աղքատին եւ հեծութեան տնանկին այժմ յարեա[յ]ց», և յարեաւ։ Երկրորդ կցուրդն «Աւգնեա մեզ տէր». այս՝ որ յետ մարդանալոյն հայցէին աւգնութիւն

1 Ա սկսեալ.
1 Սաղ. Իե 8.
2 Բ կարգացումն.
3 Բ չունի՝ մարգարէից.
4 Ա խոստովանութիւն.
6 Բ մարգարէիցն.
7 Բ արտասուաց.
8 Ա գթութեանց.
8 Բ յիւրաքանչիւրս.
9 Բ ամենեցուն.
10 Բ ծոցոյ հաւր.
10 Բ չունի՝ որ.
11 Ա հանեալն.
12 Ա մարմնով խոնարհութեամբն.
12 Ա երրորդութեան.
13 Սաղ ԿԴ 6.
14 Բ վասն. փխ յաղագս. Սաղ. ԺԱ 5. վասն տառապանաց.
15 Բ աժմ.
16 Սաղ. ՀԸ 9.
17 Ա զաւգնութեանս անկելոյ.

բնութեան անկելոյ, զոր շնորհեացն չարչարանաւքն տէրունականս. Երրորդ կցուրդն, ալէլուիա [Ուրախ եղէ]. այս՝ ընդ հոգեղէնսն բարեբանել ազգ հողանիւթացս զփրկագործն իւրեանց. Եւ երիցս երգեալ զերեք սաղմոսն՝ իննն, ըստ իննն դասուց հրանիւթից. Իսկ ի փառս տալն ամենայն սաղմոսացն, վերացուցանելն զՍեղանն՝ այս է, զի թէպէտ զկերպարանս ծառայի վասն մեր առ, զանձն ունայնացուցեալ, սակայն պատուածագործ հրաշս ցուցանէ մարմնով. զմշտնջենաւոր զպաշտաւորութիւն մատուցանէին նմա զաւրքն սրբասացք.

Սաղմոսն առաջին. ՃԺԹ «Ի նեղութեան իմ [ում]». այս է, զբազում աղէտս մարդկան արկանել առաջի Հաւր՝ մարգարէիցն դասք. Երկրորդ՝ «Համբարձի [զաչս իմ ի լերինս]». այս՝ առաջի Որդւոյ մաղթեալ սպասաւորաց բանին. Երրորդ սաղմոսն՝ «Ուրախ եղէ ես». այս՝ գոհութիւն առ սուրբ Հոգին՝ ծնեցելոց ի Հոգւոյն. Ալէլուիա «Տէր աս    ». տէր ասել՝ զՅիսուս Հոգւովն սրբով. Եւ սաղմոսն ՃԺԷ «Խոստովան եղերուք տեառն».

1 Բ շնորհեաց չարչարանաւք.
2 Սաղ. ՃԻԱ 1.
3 Բ հոգեղէնս.
4 Բ երգել.
5 Բ հրանիւթաց.
6 Բ տալ.
6 Բ վերացուցանել.
7 Բ էառ վասն մեր.
9 Ա ցուցան և մարմնով.
9 Ա սպասաւորութիւն ցուցանէին նմա զաւրք.
12 Ա արկանեալ.
13 Բ Երկրորդն մարգարէիցն դասք ասեն «Համբարձի». Սաղ. ՃԻ 1.
14 Բ մաղթել.
15 Բ չունի՝ սաղմոսն. Սաղ. ՃԻԱ 1.
16 Բ ծնեցելոցն.
16 Բ ալէլուիա. տէր ասել.
17 Թերեւս՝ Սաղ. Բ 7. «Տէր ասաց ցիս».

երեք աւելն, նախ՝ մեղմ ձայնիւ. այս՝ յառաջ նախահարքն ալեօք առ Հայր արկեալ, պատմէին զվտանգիցն ծանրութիւն։ Իսկ ի մարդանալ Բանին մինչև ի գալն միւսանգամ, աղաղակէին հաւատացեալք Որդւոյ ազատ ձայնիւ, «Բա՛ց մեզ տէր զդուռն ողորմութեան» առաջի նեղչաց մերոց։ Իսկ դարձեալ մեղմասացութեամբ մտանեն յեկեղեցին ընդ Սեղանոյն. այս՝ որ Հոգւոյն սրբով ծնեալք ժառանգք Աստուծոյ, յութերորդումն ի վերջնումն ի վերին քաղաքն յիմանալի Երուսաղէմն։ Եւ տեսանողրեալ Խաչին զդուռնն՝ ապա մտանեն. վասն զի խաչին եբաց մեզ զերկինս Քրիստոս։

Իսկ յեկեղեցին փոխի սաղմոսն, «Ուրախ եղէ ես» ալէլուիա։ Այս՞ առաջին լեալ վասն միանալոյ մեր ընդ հրեշտակս. և զկնի՝ «Օգնեա մեզ» և «Համբարձի», «Հուր մեզ ի նեղութեան», զի նախ՝ խաչին մեք հրեշտակացաք, և ապա նոքա ծանեան զանտեսութեան խորհուրդն, որպէս գրէ խորանագէտն Կիւղիկեան տարսոնացին յեփեսացւոց տումարին յասելն, «Արդ յայտնի լիցի եկեղեցեաւս բազմապատիկ իմաստութիւնն Քրիստոսի»։ Եւ ըստ կատարման նորա արտաքոյ, նոյնպէս և ի մէջ տաճարին աւարտի։

---

1 Բ աւել.
1 Բ յառաջ նախահարքն առ հայր ալեօք արկեալ պատմեն.
4 Բ աղաղակեն.
4 Ա որդւոց.
5 Ա առաջին.
8 Բ ծնեալ.
8 Բ ը՞ երրորդում.
9 Բ քաղաք յիմանալի երուսաղէմ.
10 Բ դդուռն.
11 Բ քրիստոս զերկինս.
13 Բ մեզ. փխ. մեր.
15 Ա հրեշտակացաք. ալելու.
16 Բ զխորհուրդն անտեսութեան.
17 Բ որպէս խորագէտն տարսոնացին յեփեսացւոց տումարին գրէ.
18 Եփ. Գ 10.

Եւ ապա առաջի բեմբին սաղմոս ՁԳ «Որքան սիրելի» ի թիւ, ապա ի ձայն, դարձեալ ի թիւ։ Երես այս՝ զբարձրութեան մեր յայտնէ ընդ Քրիստոսի յաւուրն յայտնութեն, «Հոգի իմ և մարմին իմ ցնծացան առ Աստուած կենդանի»։ Իսկ ի բեմբն՝ քահանայն պայծառ գոչմամբ Ալէլուա և այլն. այս է, կացուցանէ առաջի իւր Յիսուս զսուրբսն, «Ահա հայր զորս ետուր ինձ յաշխարհէ, զի քո էին, եւ ինձ [ետուր զնոսա]» Յով. ԺԷ 6.։

Եւ որպէս առ գրանն ԾԺԷ սաղմոսն [Խոստովան եղերուք] ի թիւ ասացաւ մի կցրդիւ, նոյնգունակ ՁԳ սաղմոսն [Որքան սիրելի] ի մտիցն աստիճանացն երկու անգամ ի թիւ, և մի ձայնիւ՝ նոյն խորհուրդ։ Իսկ երեքից ձայնիւ ուժգին «Սեղան քո տէր զաւրութեանց», և հաստատի Սեղանն. այս՝ անմարմնոցն երգս, երից էութեան անբաւ բնութեանն արարչականի։ Իսկ լուանալն և ածանելն, յայտնէ զմարմին Քրիստոսի հաւասարելոյ։ Երկրորդ՝ խաչին տեառնագրէ, զի նովաւ արար զարբութիւն մեզ. և փառք սրբութեանն քարոզի։ Եւ խաչ ի մէջ Սեղանոյն՝ նոյն ինքն չարչա-

---

1 Բ բեմբին սաղմոս ի թիւ.
2 Բ չունի՝ ապա ի ձայն, դարձեալ ի թիւ.
3 Բ զբարձրութիւն մեր ընդ քրիստոսի յայտ առնէ յաւուրն յիմանում.
4 Սաղ. ՁԳ 2. Սիրտ իմ..
5 Բ ի բեմբն.
6 Բ չունի՝ և այլն.
7 Ա զսուրբն.
8 Բ են և իմ.
10 Ա կցըրդով.
10 Բ նոյնաւրինակ. փխ. նոյնգունակ.
13 Բ Իսկ երից ձայնեն ուժգին ձայնիւ.
13 Սաղ. ՁԳ 4.
15 Բ երգ.
16 Բ երկրորդ միութեամբն յայտնէ զմարմինն քրիստոսի. խաչին.
17 Բ տեառնագրեա.
19 Բ խաչն. 19 Բ չարչարեալն.

ընալ մարմնով։ Երկոտասան խաչ ի վերայ Սեղանոյն՝ որպէս երկոտասանքն ի վերնատանն։ Եւ երկոտասան [խաչ] ի չորս դէմս ճակատու Սեղանոյն, մարգարէքն հաւր հոգւոյն և ոչ պաշտօնեայք մարմնոյ Տեառն։ Իսկ Խորանն և եւթն [դ]նովաւ [խաչ]՝ հոգեղինացն հաստատիլ դասն։ Իսկ Տաճարն՝ զի նովաւ նախ ածան առաջինքն, ածեալքն յԱբրահամէ արդարքն։ Իսկ արտաքոյ, որք ի հեթանոսաց ի դառն արմատոյն պատուաստեցան յԱբրահամ, Քրիստոսի հաղորդեալք իւղոյն ուրախութեանն։ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն։*

---

2 Ա Եւ ի ԻԴ.
3 Ս. ճակատ առ.
4 Ա մարմնոյն։
5 Բ խորանն՝ թէ նովաւ հոգեղինաց հաստատիլ։ Իսկ . . .
8 Ա դառն.
9 Բ ուրախութեան.
10 Բ ընդ յորս և մեք հաղորդեսցուք քրիստոսի յիսուսի տերամբ մերով, որում փառք յաւ.

* Ստեփաննոսի այս երկը համեմատիր «Յոհաննու Մանդակունւոյ Հայոց Կաթուղիկոսի. Հիմնարկութիւն սուրբ եկեղեցւոյ. և «Կանոն եկեղեցւոյ» երկերի հետ. տես № 973 Զ. Մաշտոց. «Փառք . . . Եւ արդ ես Նուաստս յամենայնի Ներսէս սուտ անուն գրիչ յերես անկեալ աղաչեմ․․․ Եւ էր թիւս Հայոց ՉՃԳ (1304) գրեցաւ ի վանքս (Վը)ժանաս) գիւղ՝ Կոշայ մօտ. այժմ՝ Ուջան. (Շահ. Բ. 65). և աւանդեցաւ սուրբ Աստուածածնիս. և սուրբ Նշանիս և Յոհան Իմաստասէրի «Հիմնարկէք եկեղեցւոյ» և «Օրհնութիւն Նորաշէն եկեղեցւոյ» ճառերի հետ. տես Յոհ. Իմ. 1833 Վնետ. երես 119, 123։

Ա օրինակը ունի այս ուղղագրութիւնը. Եկեղեցոյ. որդոյ. հոգոյն. տեղոջ, հոգով, սուե, թեպետ, աղետս, որպես, ի դեմս, ամեն, խորագէտն, յաւեաղն, յաւելն, ալելուիա, Նոքայ, վերա, անգիւնս, անկոր. երկոյտասան, հրշտակաց։ Իսկ Բ օրինակը (ճառընտիր) եկեղեցո, թե, միանալո, լւանալ, ի վերա, եղոյն, կանկնեալ։

## ՎՐԻՊԱԿՆԵՐ

| եր. | տ. | Սխալ | Ուղիղ |
| --- | --- | --- | --- |
| 13 | 12 | զաւուրսն նշանակէ, | յաւուրսն նշանակէ, |
| 16 | 2 | Աստուածային և զկեն-դանարար, | Զաստուածային և զկենդանա-րար. |
| 17 | 13 | Բնագիրն՝—բարեգթու-թեանս, | Ուղղում ենք՝ ի բարեգթու-թեանց, |
| 20 | 6 | ծառայիցն և գեղիցն, | ծառայիցն և գեղիցն, |
| 25 | 26 | յինելոց, | լինելոց, |
| 26 | 9 | միասնակաս, | միասնական, |
| 27 | 31 | Բնագիրն՝—աւրհնել և փառաւորեալ. | Ուղղում ենք՝ աւրհնել և փա-ռաւորել, |
| 29 | 19 | ապմովք երևեցելոյն, | ամպովք երևեցելոյն, |
| 34 | 18 | յորոյ զաստուածորդին, | յորոյ վերայ զաստուածորդին, |
| 34 | 22 | փառաւորութեանց, | փառատրութեանց, |
| 39 | 13 | Նախ քան զյիշելս, | Նախ քան զյիշելս մեզ, |
| 46 | 11 | յարութեամքն. | յարութեամբքն, |
| 47 | 3 | Փառաւորն առնլով՝ միշտ զԱստուածածինն, | Փառաւորն՝ առնլով. միշտ զԱստուածածինն, |
| 49 | 10 | իքեան, | ինքեան, |
| 50 | 10 | այլ և այլ ասին ի տեղիս սաղմոսք. | այլ և այլ ասին ի տեղիս տեղիս սաղմոսք. |
| 56 | 2 | Աւհնութիւն | Աւրհնութիւն, |
| 71 | 14 | անկեալ Քրիստոս, | անկեան Քրիստոս, |

«Հանգստեան ժամի» համար ասել ենք, «Յոհան Իմաստասէր հայրապետը ժամիս պաշտամունքներից խուլ կերպով 3 տեղ յիշատակում է միայն Ի կարգալ խմում սաղմոսը (տես Յառաջաբան եր. 2, վերջին տող). այն ինչ նա ամենևին չէ յիշատակում ոչ

«Հանգստեան ժամը» *և ոչ այդ սաղմոսը. այլ նա* «Հանգստեան սաղմոս» *անելով, ակնարկում է Երեկոյեան ժամի* «Որ Բնակեալ» *վերջին սաղմոսը, և առանց այս սաղմոսի, Երեկոյեան ժամի սաղմոսներն հաշւում է չորս,—Արդ չորք են ընդ ամենայն երեկոյին աղօթից սաղմոսք առանց Հանգստեան սաղմոսի»* (*Յոհ. Իմ.* 22). *այսինքն, Սաղ. ԾԴ 14.* Ես առ Աստուած կարդացի. *Սաղ. ՁԵ 1.* Խոնարհեցո. *Սաղ. ՃԼԹ. 1.* Ապրեցո. *Սաղ. ՃԻ. 1.* Համբարձի. *Հանգստեան սաղմոս, կամ ըստ Ժամագրքի՝ «Արձակման փոխ». Սաղ. Ղ. 1.* Որ բնակեալն է յօգնութիւն. *«Եւ այսպէս զՀանգստեանն նուագելով զսաղմոս, արձակեն» Յոհ. Իմ. 22.*

# ՑԱՆԿ

## ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ


Աբրահամեան տոհմ 19, 55.
Ագաթանգեղոս, ծանօթութիւն, 29.
Ադամ 14, 15, 23, 24, 25, 30, 39, 42, 45, 48, 52, 57, 59. 61, 62.
Ահարոն 64, 65, 66, 67.
Ահարոնք 32, 37, 64.
Ամաղէկ 48.
Ամբարշտութեան կոակ 27.
Աստուածածին 23, 57.
Աստուածածին եկեղեցի կամ վանք. հին Վժան գիւղի, ծան. 76.
Աւագ Հինգշաբթի 20, 55.
Աքիսամ 68.

Բաբելոն 59.
Բաղաամ 16.
Բաղարջակերաց տօն, 20, 55.
Բենիկ վարդապետ 5.
Բեսէլիէլ 68.

Գալուստ դպիր 8, 11.
Գրիգոր լուսաւորիչ 8, 9, 29, 62.

Դան 68.
Դանիէլ կթ. 8.
Դանիէլ մարգարէ 9, 59, 72.
Դաւիթ մարգ. 18.
Դաւիթ աստուածահայր 47.
Դուին 3, 8.

Եզեկիէլ արքայ, ծանօթ. 14.
Եզեկիէլ մարգ. 9, 32, 54, 64.
Եղիսամ 68.
Եսայի մարգ. ծանօթ. 14, 32, 35, 50, 64.
Երանելի հարք (Հայոց հայրապետք, անորոշ) 19.
Երանելի հարք (Նիկիական ժողովի, անորոշ) 36.
Երուսաղէմ 42.
Եւայ 23, 52, 57.

Զօրաբաբէլ 10.

Էմանուէլ (փրկիչ) 30, 65.
Ընն աստուած 42.

Թափաւր 51.
Թէոդոր (վարդապետ Նեստորի)47.

Իսահակ (որդի Աբրահամու) 36.

Լեոն (աղանդապետ) 2. 27.
Լուսաւորիչ, տես Գրիգոր լուս.

Խոսրով Անձևացի 3.
Խորան (կամարակապ Բեմը) 71.

Կիւրիկեան, տես Տարսոնեցի.
Կիւրեղ Աղեքսանդրացի 47.
Կիւրեղ Երուսաղէմի հայրապետ 47.
Կ. Պօլիս 11.

Հայրապետ (կթ) 38.
Հայրապետն Աբրահամ (հայր Աբ.) 44, 45.
Հին և Նոր Կտակարանք 32, 64.
Հռիփսիմեանք 9.

Ղազար կթ. 1.

Մարիամ (աստուածածին) 35.
Մարկոս աւետարանիչ 30, 63.
Մեկենաս (անանուն) 3, 32.
Մինաս Արքեպիսկոպոս 11.
Մովսէս մարգ. 26, 32, 60, 64, 65, 68.

Յոհան Իմաստասէր, 1, 2, 3, 8, 9, 10, 11. ծանօթ. 16, 17, 18, 19, 21, 28, 30, 34, 51, 56, 76.
Յոհան Մանդակունի 8, 9, 11, 76.
Յովբայ 68.
Յովհաննէս առաք. 28, 61.
Յովհաննէս աւետարանիչ 30, 35, 63.
Յուդայի ազգ 68.

Ներսէս գրիչ. (ՉԾԴ=1304 թուին գրած մի Մաշտոցի, որ պարունակում է իւր մէջ միայն «Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Կաթուղիկոսի Հիմնարկութիւն սրբոյ եկեղեցւոյ. և Կանոնն եկեղեցւոյ» առանց այժմեան Մաշտոցի յաւելուածների, որպիսիքն են շարականներ և եկեղեցու Հիմքի քարեր, որոց թիւն է 12. այժմ 16). ծան. 76.

Նեստոր (աղանդապետ) 2, 60.
Նստոր (աղանդապետ) 47.

Ուջան. տես Վժան.

Պենտէկոստէ 25, 59.
Պօղոս առաք. 16, 29, 36, 49, 62.

Սիմոն (ծերունի) 66.
Սիոն (եկեղեցի) 33, 66.
Սողոմոնի տաճար 10.
Սիւնեցի. տես Ստեփաննոս Սիւնեաց եպս.
Սիւնիք 2.
Ստեփաննոս Սիւնեաց եպս. 1, 2, 3, 4, 5, 7, 8, 11, 76.

Վժան (հին գիւղ, Կոշ գիւղի մօտ) ծանօթ. 76.
Վկայութեան խորան 10, 19, 55.

Տաղաւարահարաց տօն 20, 55.
Տապան (Նոյեան) 43.
Տարսոնացի 74.

Քաղդեացի 23, 57.
Քաղկեդոն 2, 27, 47.

Օձնեցի. տես Յոհան Իմաստասէր.